Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5817

206
S-13

-4/1
28/5

1/0

23 SEP 2009

ԱՄՍՕՐԵԱՅ ՄՏԱԾՈՒԹԻՆՔ

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

22-ԵՐԿՐ

2001

2828
22523-ah
29 SEP 2009
(441-2001)
2419-55
0419-60
2001

2206
S-13
17 DEC 2001
13 AUG 2013

ԱՄՍՕՐԵԱՑ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅԻՑ

ԵՒ ԽՐԱՏՔ ԿԱՐԵՒՈՐՔ

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՐ ՔԱՂԵԱԼՔ

Ի Հ. ՄԿՐՏԻՉ ԱԹՈՌԱԿԱՂ ՎԱՐԴԱՊԵՏԷ
ԱՒԳԵՐԵԱՆՑ
Ի Մխիթարեան Ուսխտէն

ՎԵՆԵՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1853

13 AUG 2013

ՅՐՉԱՏԱԿ

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀՈԳՒՈՑ

ՊՈՒՐԻՍԵԱՆ

ԲԱՐԵՊԱՇՏՕՆ ՏՈՀՄԻՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թէպէտեւ չիք ինչ պատուականագոյն քան զքահանայութեանն սրբանուէր պաշտօն, բայց քանզի որք 'ի Հոգւոյն սրբոյ 'ի սպասաւորութիւն սեղանոյն կոչին քահանայք՝ բաղում այն է զի կարգեալք են լինել 'ի զլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ հաւատացելոց, վասն որոյ և մեծի զգուշութեան պէտք են նոցա, զի մի՛ պաշտօնն սրբութեան փոխեսցի նոցա 'ի կործանումն և 'ի դատապարտութիւն. այլ որպէս աստուածայինն պատուիրէ Պաւղոս՝ ահիւ և դողութեամբ գործել զանձանց փրկութիւն։ Վասն որոյ յաւուրս առաքելութեան իմոյ 'ի Պոլիս (1831) 'ի յորդորելոյ Գերապայծառ Տեառն Անտոն Վարդապետի Նուրիճան, ձեռն արկի 'ի գուշնաքեայս

երկասիրութիւն՝ թարգմանաբար առեալ 'ի զրոցն Բարթուղիմեայ ուրումն վարդապետի Տալմանթէ կոչեցելոյ։ Եւ ակն ունիմ զի պաշտօնասէր քահանայից մերոյ ժողովրդեան հաճոյական ընծայեսցի մասենիկս վասն ընտիր խրատուցն 'ի սմա ամփոփելոց, որովք զտէրունեան սպասաւորութեան մեծապէս խնամով ցուցանել ճշնի զգերազանցութիւն, և թէ քանի փութոյ պէտք են հրաւիրելոցն 'ի պաշտօն սեղանոյն արժանի վարս բերել յանձին. զի մի որ յայսմ աշխարհիս զնոսա ընտրեայ տէր, 'ի հանդերձելումն ընդ խոտանան համարիցի զոսկալին արձակելով բարբառ՝ թէ ոչ գիտեմ ուստի՛ իցէք։ Այլ երեւել առաջի նորա մշակս առանց ամօթոյ, և փոխանակ քըր-

տանցն և վաստակոց ընդունել զպատկն վարուց ։

Վասն որոյ աղաչեմ զվարդապետս և զքահանայս սիրողաբար ընդունել զբանս զրոցս , և պարապ 'ի հոգեշահ վաստակոց առեալ՝ դեգերել յընթերցումն և այլոց եւս օգտակար մատենից , որպէս և Յաղագս Քահանայութեանն կոչեցեալ սքանչելւոյ զրոց Յովհաննու Սարկաւագ վարդապետի , որ յաւուրս այսոսիկ 'ի մերոց մամլոց ընծայեցաւ Հասարակաց , և ոսկեղէն մատենկանն՝ Յիշատակարան քահանայական վարուց , զրոշմեալ հերուն 'ի տպարանի մեծարգոյ Մխիթարեանց որ 'ի Վիէննա ։

ԱՄՍՕՐԵԱՅ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ

ՎԱՍՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԻՆ

Ա.

Քրիստոսի փրկչին բանք առ սպասաւորս սեղանոյն թէ զիարդ կարևոր պիտոյ իցեն մտաւորական աղօթք :

Ա. Մեծ սիրտանք են ինձ, որդեակ, զի անկեալ յոտս իմ պաղատիս, և լուսոյ առ յինէն ակն կալեալ սպասես : Բանզի և առաւել քան զայլս պէտս ունիս դու լուսոյ և օգնականութեան, փոխանակ զի Ճշմարտութիւնք իմ զոր հանապազ յականջս և 'ի բերանի քո են, և տակաւին չեն բաւական յամոքել զքեզ : Այսպա մերձեցիր առ իս, և քաջիկ խելամտութեամբ առնուցուս 'ի միտ, զի ամենայն չարեաց պատճառք նուազութիւնդ այդ է մտաւորական հրահանգաց : Այսի

յաձախեաց եմուտ յաշխարհ չարու-
թիւն, և 'ի սրբութեան սեղանն սպըր-
դեալ՝ երևեցոյց քահանայս լոկով ա-
նուամբ և ետթ վերապատուեալս, որոց
պաշտամունք 'ի յանդիմանութիւն էն
չարութեան գործոցն նոցա. այլ դու
յանձն քո միայն Հայեսցիս։

Ոչ ի՞ն քո մեղք. այլ ամենայն ինչ
որչափ և սուրբ իցէ, ողորմութիւն,
խստակրօն վարք, քարոզել զբանն Աս-
տուծոյ, և պատարագ մարթին լինել մե-
ղաց. բայց մեղք և ջերմեռանդն մտա-
ծութիւն յանհնարիցն է թէ կարաս-
ցեն երբէք կալ 'ի հաշտութեան, որ-
պէս իմաստութեամբ յոյժ ազգ առնէ
Ներանն ոսկի։ Կամիս 'ի բաց առնել 'ի
քէն զմեղս. դեղն է մտաւորական ա-
ղօթք։ Կամիս չանկանել վերստին 'ի
մեղս. սա է զէն և ասպար ընդդէմ փոր-
ձութեանց՝ որ մարտնչին ընդ քեզ, և
որովք կարացես նկուն առնել զմեղսա-
սէր զայս աշխարհ յորում դուդ կաս։
Սա է հնոց, յորմէ հանես զհուր փոյթ-
եռանդն 'ի ընուլ զպարտս՝ որ քեզն
հասանեն խուռն և ծանր։ Ներանի քեզ
այնուհետև, զի հեռի լիցի 'ի մեղաց
անձն քո. կանդնեսցիս 'ի գլորման-
նէդ, և բեկեալ որտիւ և ջերմեռանդն

փափաքանօք բուռն հարցես զՀանապարհէ առաքինութեան, գնասցես որպէս զօրութենէ 'ի զօրութիւն, և լինիցիս որպէս զոմն 'ի սրբոց։ Այսպա թէ ոչ, լինիցիս դու իբրու ուրուական պատկեր սպասաւորի Աստուծոյ, և կամ իբրեւ զՀեթանոս ոք քահանայագործեսցի։

Բ. Իմ եկեղեցի, և ոչխարք իմ սպասեալ մնան, զի դու հաշտ արասցես զիս, պաշտպան և կազդուրիչ լիցիս արդարոց, դարձուսցես զմեղաւորս, հրահանգեսցես զնոսա, վառեսցես զսիրտս նոցա և ածցես 'ի փրկութիւն։ Աշխարհիկք զօր ամենայն. յանձն առնեն զանձինս յաղօթս քո և մատուցանեն տուրս ողորմութեանց, և վայելես յամենայն բարիս եկեղեցւոյ, վասն զի հայր և պաշտպան կացուցի ես զքեզ ոչ կենդանեաց միայն այլ և ննջեցելոց։ Եւ զիարդ այդպիսի լինիցիս առանց աղօթից։ Ա՜հ, գամ մի ածցես զմտաւ եթէ բաւական՞ իցէ վայրիկ մի 'ի վայրկենից կամ աղօթք ինչ ձայնաւոր անհոգի 'ի կարձել զցասումն պատուհասի երկնից, 'ի ձեռս բերել զխաղաղութիւն աշխարհի, և 'ի սուրբ առ-

նել զոգիս։ Օ՛ խնդրդ բոցավառ բորբոքեսցես զայլս, եթէ դու սառուցեալ դտցիս. որպէս շարժեսցես զայլս 'ի լաւ անդր, եթէ դու անշարժ կայցես։ Ուրեակ իմ, չէ բաւական 'ի փրկել զոգիս ոչ գիտութիւն և ոչ Հառամութիւն. քանզի ազդողապոյն է բան մի և եթ սրտի բորբոքելոյ յաղօթս, քան բիւր Հառք վարդապետութեանց ունայնասէր աստուածաբանի։ Եթէ կամ ի՞նչ քեզ ճգել զՀոգիս առ իս, փութա կանխել 'ի խոկումն. զի զնոյն առնեն ամենայն առաքելագործ մշակք աւետարանին. և ես իսկ զնոյն արարի 'ի տալ քեզ օրինակ։ Օ՛ի սովաւ լուսաւորեսցին միտք քո և բորբոքեսցի եռանդն 'ի շահ ոգւոց։ Եւ արք աշխարհիկք եթէ զանարատն քո տեսանիցեն զքաղաքավարութիւն, առնուցուն 'ի միտ զի ոչ իբրև զայլս 'ի հեղգացեալ և 'ի թուլահաւատ սպասաւորաց բանին՝ 'ի հարկէ և կամ ակամայ բերիցիս 'ի պաշտօն քո։ Յայնժամ և աստուածային շնորհք ժամանեսցեն քեզ 'ի թիկունս օգնականութեան։

գ. Եկ մերձեցիր առ իս, և միսի-

Թարեսցի սիրտ քո. և գիտասցես ստու-
գութեամբ զի խօսել ընդ Աստուծոյ՝
ոչ միայն ոչ փոխեսցի քեզ 'ի տանջանս,
այլ մանաւանդ լինիցի 'ի զօրավիգն
և պատճառք ամենայն բարեմասնու-
թեանց։ Մի զկարծեցեալդ անպարապ-
ութիւն ինձ 'ի դէմս ածիցես. քան-
զի անմտութիւն մեծ է այնչափ և այն-
պիսի իմն տարփանօք բերիլ յերկրա-
ւորս, մինչև չգտանել ժամանակ զերկ-
նաւորացն խորհելոյ։ Այլ ես, որպէս
իմոց աշակերտացն, ուսուցից և քեզ
եթէ զիարդ պարտ իցէ գալ առ իս.
բացից առաջի քո զշտեմարանս գան-
ձուց երկնաւոր վարդապետութեան ի-
մոյ, զի առնուցուս զճաշակ պարգեւացն
իմոց և հոգւոյ իմով լցցի սիրտ քո.
քանզի և առ պատուանդանի խաչիս ա-
ռաւել ուսցիս քան յայլոց բազմապա-
տիկ գրոց։ Թաքէ, արք շինականք և
աղքատք և տգէտք զօր ամենայն գտա-
նեն ժամանակ զերկնաւորացն խորհե-
լոյ, և դու, քահանայդ, անպարապ ի-
ցես նմանել նոցա և զփրկութեանդ
գործ գործել։ Ո՜ զիշերն 'ի գլուխս վան
քո հանի ես յաղօթս, և զքրտունս ա-
բեան ոլոռն ոլոռն հեղի 'ի պարտիզին,
և դու հեղգանաս ժամ մի ընդ իս խօսել։

Հրահանգք

Զոր 'ի մտի գէթ զկէս ժամու աւուրն ծախել 'ի կրթութիւն մտաւորական աղօթից և խոկմանց։ Սուրբն Ֆրանկիսկոս սալեզացի իղձ լինէր զի ամենայն պաշտօնեայք սեղանոյն մի դանդաղեսցին մտադիր պարապել 'ի նոսին զօր ամենայն. որպէս և ինքն առնէր, անպարապն 'ի հոգոց զբաղանաց։ Զարձեալ և սուրբն Կարոլոս Պորրոմէոս կամէր զի ողք հանդերձեալքն իցեն մատչել 'ի ձեռնադրութիւն քահանայութեան, նախ զայն ածցեն զմտաւ եթէ քաղցրանան նոցա աղօթք մտաւորականք. ապա թէ ոչ, լաւ իցէ նոցա հրաժարել 'ի պաշտամանէն։ Զոնէպէտեւ ցամաքեալ զհոգի քո տեսանիցես, սակայն 'ի խոկալոյ մի դադարեր. խնդրեա զԱստուածն միութարութեան և մի զմիութարութիւնն Աստուծոյ. և շայեկանօք առատութեան լցցի սիրտ քո։ Մի մոռանար զայն բան խրատուց Յովհաննու Աւետարանչի, եթէ որ ոչն իցէ սիրող աղօթից՝ անյարմար է քահանայութեան։

Բ

Վասն վերջին վախճանի :

Ա. Որդեակ իմ, ո՞ ստեղծ զքեզ և ո՞ անքուն ակամբ զքեզ պահպանիցէ. ո՞ զժամանակեայսն առատաձեռնեաց քեզ վայելս բարեաց, և ո՞ աւազանին սրբոյ շնորհիւ զքեզ կենագործեաց։ Ո՞ 'ի սպառ սիրեաց զքեզ, մինչեւ զարիւն անգամ հեղուլ մոռդիւրութեամբ։ — Ո՛ այլ ոք բայց ես ինքն միայն, որ զամենայն կիրս չարչարանաց կալայ յանձին, զի դու փառաւոր առնիցես զիս, զի ծանիցես զիս և սիրեսցես, և նմանող ինձ լինիցիս. և եթէ 'ի սակաւորեայ երկրաւոր պանդխտութեանդ հաւատարիմ պատուիրանապահութեամբ ինձ ծառայեսցես, յաշխարհին որ գալոցն է՝ փառօք և պատուով մեծայուցիցս զքեզ։ Եւ մարթ էր արդեօք առնել ինչ մեծ քան զայսոսիկ. և եթէ ընտրոյ տէր զքեզ ինքն էի կարգեալ, ապաքէն լաւագունին չէր քեզ մարթ

ցանկալ։ Մի եթէ բարեկամք քո կամ ծնողք և ազգակիցք, և կամ աշխարհ գլխովին և ինքն սատանայ սէր առաւել քան զիս սիրեցին զքեզ և կամ առաւել գտան բարերարք։ Օ՜ ինչ ինչ առնել էր ինձ առ 'ի ձգել զքեզ 'ի սէր իմ և յորդորագոյն յերախտապարտ մեծարանս առնել։ Մ՚հ որդեակ, և ընդէ՞ր ոչ ունիս քեզ զուսնայնութեան և ըզստութեան երթալ զհետ, հալել մաշել զանձն քո 'ի հոգս աշխարհի, ամենայնի 'ի խնդիր լինելով բայց յԱ՚ստուծոյ։

Բ. Տես, զիարդ ըղձալի է ինձ բարերարել քեզ։ Զիրս բազմապատիկս քեզ շնորհեցի և յառաջամանութիւն և իշխանութիւն և պաշտօն սրբութեան. և օծութեամբ 'ի քահանայութիւն զքեզ վերառեալ, իբրու և յիմ վերայ կացուցի իշխան. զի մեծարոյ լեալ յերկրի, և հրաշափառագոյն օրինակ սրբութեան զանձն ընծայեսցես։ Մեկնեալ որոշեցի զքեզ յայլոց, զի բոլորովիմբ իմ եղիցիս, և հոգք աշխարհիս և պատրանք մի՛ տագնապեսցեն զքեզ և յառաքինութեան գնացին խոտորեցուսցեն։ Իսկ եթէ հեռի 'ի սրբութեան շաւղացն դեգերիցիս և

'ի փրկութիւն հոգւոց զորս քեզ հաւատացի ոչ վաստակիցիս, զիարդ իշխիցես քահանայութեան մեծարոյ անուամբն յառաջագահ և բարձրապատիւ լինել։ Արի եթէ ըստ արժանւոյն լցեր զպարտս քո յօգուտ եկեղեցւոյ սրբոյ, յոյր սակս զձեռնադրութեանն ընկալար շնորհ։

գ. Քահանայդ Աստուծոյ, մի երբէք արկցես յուշոյ մտաց քոց, եթէ որդի փառաւոր առնէ զհայր իւր և ծառայ զտէր։ Եթէ հայր եմ ես, ընդէր չարիս զիս, և եթէ տէր՝ ընդէր 'ի ծառայելոյ հրաժարիցես։ Այլ աւետարանին ուսուցանէ քեզ վարդապետութիւն եթէ ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել։ Արկրտութեան շնորհին 'ի բաց կացեր 'ի սատանայէ և 'ի պատրանաց նորա, և օծութեամբ կարգին 'ի բաժին քեզ և 'ի ժառանգութիւն զիս ընտրեցեր։ Իսկ արդ ընդէր ինչ քեզ թողուլ լքանել զիս։ Այլ գիտեա քաջ, զի ցորչափ հեռի կաս յինէն, աշխարհդ այդ զոր սիրես ոչ կարասցէ երբէք տալ քեզ զխաղաղութիւն, և խնդութիւն մերժեսցի 'ի քէն, եթէ ոչ երկնայնոյ ուրախու-

թեանն լինիցիս 'ի խնդիր։ Օ՞ի չէ քեզ բաւական, որչափ ինչ շատն իցէ վասն ամենայն հաւատացելոց. քանզի քրիստոնեայ վասն անձին քո զքեզ ա-ղարի և քահանայ վասն այլոց։ Մի՛ իշխիցես ասել եթէ շատ է ինձ կեցու-ցանել զանձն իմ, զի որ քանքարա-թագոյցն լինիցի, չէ զերծ 'ի պատու-հասէ։ Օ՞ ինչ օգուտ իցէ քեզ, զի 'ի վախճանել՝ եկեալ տեսանիցես զի շա-հեցար զամենայն աշխարհ և զանձն քո տուժեցեր. որով և վրէպ 'ի փրկու-թենէն լինիցիս։

Հրահանգք

Յամենայն 'ի գործս քո զսրբոյն Փրանկիսկեայ սալեզացւոյ ածցես զմը-տաւ զբանս խրատուց եթէ ոչ ինչ եր-բէք լինիցի ընդդէմ Աստուծոյ և ոչ ինչ առանց Աստուծոյ՝ բայց միայն Աս-տուած. քանզի ունայնութիւնք են և մոտիք մոտեաց որ վասն յաւիտենից կենացն չիցեն կարևորք։ Սուրբն Բեռ-նարդոս 'ի սրտին և 'ի բերանի զայս հանապազօր յեղյեղեր եթէ «Բեռ-

նարդէ, 'ի սուրբ առնել զանձն քո մեր դու 'ի կրօն ,, ։ Եւ երանելին Յոհ-նալդոս, որ ապա յարքեպիսկոպոսութիւն Յռաւենննայ ամբարձաւ, մինչ դեռ ևս ընդ ժառանգաւորս էր եկեղեցւոյ՝ զայս ինչ հաստատութեամբ եդեալ էր 'ի մտի եթէ "Ի պաշտօն Աստուծոյ կարգեալ եմ ես, և անհրաժեշտ պարտք 'ի վերայ կան ինձ ծառայել եկեղեցւոյ, վաստակել 'ի փրկութիւն հոգւոց և ունել զնախանձ փառացն Աստուծոյ. զի շրթունք իմ զգուշասցին գիտութեանց և յուսմունս սրբութեան վարժեցայց ,, ։ Եւ արդ յարտասուս հարեալ ողբասցես զանձն քո և ուղղութեան խնամ ունիցիս, եթէ 'ի թեւակոխել քո տիրահրաւէր օծութեանն արժանանալ այլ խորհուրդք պրաւեալ կալեալ էին զմիտս քո քան 'ի նուիրել զանձն Աստուծոյ և հասարակաց բարւոյ ։ Արժան է քեզ զամենայն փոյթ և զկան ունել յանձին, զի որպէս զարդարեալ պաշտօնեայ Աստուծոյ կարիցես ընդ դուռն նեղ և անձուկ մտանել յերկինս, քան զընդարձակն և զլայն կամելով կոխել Ճանապարհ՝ ընդ դատապարտեալն տանջեսցիս ։

Գ

Պատիւ քահանայութեան :

Ա. Եթէ ծանուցեալ էր քո եթէ զիարդ մեծարոյ և պատուական է քահանայութիւն, անշուշտ աւելի փոյթ 'ի մէջ առնուիր անարատ պահել զանձն քո յաշխարհէ : Եւ արդ զմնաւ ած եթէ զիարդ փառօք և պատուով պըսակեցի զքեզ. և տեսցես զի ամենայն վաղանցուկ փառք աշխարհի, և իշխանութիւնք պետութեանց ստուերք են և երազք զարթուցելոց : Քանզի գեր 'ի վերոյ ամբարձի զքեզ, և 'ի կաւոյ և 'ի տղմոյ աշխարհի ածի 'ի փառս. պաշտօնեայ զքեզ կարգեցի իշխանութեանց որք քան զամենայն մեծամեծս փառաւոր կացուցանեն զքեզ. քանզի և նոքա կան 'ի հարկի հրամանաց սպասաւորացն Աստուծոյ : Օ հրեշտակացն աւանդեցի քեզ պաշտօն, խնամատար կարգելով փրկութեան հոգւոց. մանաւանդ թէ առաւել քան զզուարթունս բարձր

արարի զքեզ։ Բայլ դու զայդ ամենայն
'ի մոռացօնս դարձուցեալ, ոչ միայն ոչ
ունիս փոյթ վարս հրեշտակակրօնս քե-
րել յանձին, այլ կամիս վարել կեանս
անկեանս, և զօշաքաղութեամբդ և
հաճոյիւք և անմիտ ունայնասիրու-
թեամբ հաւասարես անասնոց անբանից
և նմանեաց նոցա։

Բ. Մա՞մ'ի հրեշտակաց կամ 'ի սե-
րովբէից զքոյինդ զայդ յանձն արարի
իշխանութիւն։ Աքանչանաս ընդ աս-
տուածատես մարգարէն Մովսէս զի ե-
հերձ զծովն Կարմիր, ընդ Յեսու՝ զի
հրաման ետ արևու, և եկաց յընթա-
ցից իւրոց, և ընդ այլ արս զարմանա-
գործս որոց հնազանդեցան տարերք և
հիւանդութիւնք և մահունք և դևք։
Սակայն քոյդ մեծահրաշ է զօրութիւն,
արձակել զոգիս 'ի կապանաց մեղաց, և
հրաման տալ Աստուծոյ՝ հեղուլ զշնորհս
յերկնից յերկիր։ Մայրն իմ կուսա-
ծին, որ գերազանցիկ քան զամենայն
արարածս երևեցաւ, չունէր և նա զայդ
իշխանութիւն՝ զմեղս թողլոյ. զի եթէ
նա միանգամ զերկինս եբաց և յանա-
րատն իւր ձգեաց զիս 'ի ծոց, այլ քոյդ
մեծ է իշխանութիւն ոչ մի անգամ՝

այլ հանապազօր կոչել զիս առ քեզ։ Ոչ մարդկային ինչ, այլ աստուածեղէն է պատիւ սպասաւորութեանդ. վասն որոյ և նախատինս մեծ ինձ դնես եթէ անպատիւ զնա արասցես խառնաւալ կենօքդ և բազմապատիկ յանցաւորութեամբ։

Գ. Եթէ իբրև զաշխարհիկ այր զգենուցուս, եթէ ծառայ լինիցիս նոցա և եթէ իբրև զնոսա 'ի չարիս անկղիտասցիս, մի քրիստոնչեր երբէք և մի դներ 'ի սրտի քում զի արհամարհեալ այպանեն զքեզ։ Այլ զքէն և եթէ բողոք կալցիս, զի նախ դու ինքն ոչ ծանեար զպատիւ աշտիճանի քո, և ստիպեցեր ինն զիս թողուլ զի աշխարհիկք 'ի պատուհաս անձին քո անգոնեալ նախատեսցեն զքեզ։ Եւ ընդէր իցէ քեզ, որդեակ, անպատիւ առնել զկարգ քո, և ոչ վարել կեանս արժանաւորս պատուոյ պաշտամանդ։ Իսկ զիարդ իցէ այս, զի մեծ լիցի իշխանութիւնդ քո, և վարք անշուք. աստուածային փառօք Ճոխացեալ և գործովքդ յանարգութիւն խոնարհեալ։ Օ այս տրրիտուր հատուցանես դու ինձ։ Այլ մի մոռանար և զայն, զի որչափ մեծարոյ

է քահանայութիւն, այնչափ առաւել յաճախեսցէ քեզ պատուհասս և պատիժս և տանջանս, եթէ ոչ կեաս որպէս պահանջիս։ Իշխանութիւն է 'ի ձեռին քում հրամանատար լինել երկնի և երկրի և սանդարամետաց. այլ եղուկ քեզ, եթէ յանպտուղ և 'ի վատթարութեան կեանս դանդաչելով փակիցես քեզ զմուտս երկնից, և 'ի խաւարն արտաքին մատնիցիս ուր լալ աչաց է և կրճել ատամանց։

Հրահանգք

Օ պատիւ աշտիճանիդ յամենայն 'ի գործս քո առաջնորդ քեզ կալցիս, և մի՛ զաշխարհ և կամ զգործս այնոցիկ որ ըստ աշխարհի քաղաքավարիցին։ Օ այն միշտ ածցես զմտաւ եթէ մեծ ինն հաւատացաւ քեզ։ Յամենայնի օրինակ բարեաց կացո զանձն քո 'ի վարդապետութեան, 'ի սրբութեան և յանարատ քաղաքավարութեան։ Դանք բերանոյ քո լինիցին սուրբ և անստգիւտ, զի և հակառակորդք քո չունիցին ասել ինչ զքէն բայց զբարի։ Եթէ ընդ աշխար-

հիկս կենցաղավարելով և զփառս առ 'ի նոցանէ խնդրելով կամիցիս պատուական յանձին քում զշնորհս քահանայութեան ցուցանել, լուր զինչ ասէ երանելին Բարթուղիմէոս Պարտիրոսեան արքեպիսկոպոսն մեծ. "Օ՜ խորդ դառն է, ասէ, և դժպատեհ կուրութիւնս զի պաշտօնեայն Քրիստոսի կամի իմաստնագոյն քան զՔրիստոս երևել. զի նա հոգւով խոնարհութեան և աղքատութեան աշակերտեաց զաշխարհ, և դու կարծես յաղթել աշխարհի հոգւով աշխարհի,,։ Քրիստոսի քանք են եթէ ոչ կարէ սատանայ հանել զսատանայ, և ոչ մարդ հոգւով աշխարհի հանել զհոգի աշխարհի։ Օ՜այդ եթէ առնիցես, ոչ միայն ծիծաղելացի զքեզ աշխարհ, այլ և ընդ ամբարհաւաճութիւն քո գայթակղեսցի։ Սուրբն Կարոլոս Պորրոմէոս այնմ որ զաղքատութիւն նորա և զժուժկալութիւն և զհամեստ չափաւորութիւն արհամարհէր, տայր պատասխանի. "Ձշմարիտ փառք պաշտօնէից Աստուծոյ ոչ յաշխարհական պայծառութիւնս են և 'ի զարդս, այլ 'ի սրբութեան և 'ի կրօնասէր առաքինութեան,,։

Դ.

Սրբութիւն :

Ա. Հաստատութեամբ գիտես 'ի մտի, սիրեցեալ որդեակ, եթէ այնչափ խստիր է ընդ բարեկրօն քահանայ և ընդ աշխարհիկ ոչչափ ընդ երկինս և ընդ երկիր : Այնչափ ջինջ և մաքուր արժան է քեզ լինել, զի յերկինս անդ և 'ի մէջ հրեշտակաց սրբոց պայծառ փայլեսցես : Սուրբ արա զքեզ, որդեակ իմ. հարկ պաշտամանդ ստիպէ զքեզ յամենայնի նմանող լինել ինձ : Ոչ տարապայման ինչ խնդրեմ ես 'ի քէն. քանզի առ 'ի վարել ըստ արժանւոյն զաստուածային պաշտամունս քո, ոչ վարկպարագի այլ անզուգական լաւութեան պէտք էն : Դու եթէ տեսանիցես զոք յաշխարհիկ մարդկանէ, որ զօր ամենայն խորհիցի 'ի հաղորդութիւն մատչել կենարար հացին, զգուշացուցանես զնա, յուշ նմա ածես եթէ որպիսի մաքրութեան պէտք իցեն և ա-

ZUUR ԱԲՈ.ՏՍՐ

նարատ սրբութեան. իսկ դու ոչ միայն իշխես անմաքուր սրտիւ ընդունել զիս, այլ և քահանայագործես և բաշխես ժողովրդեան, և յանձին քում զիս ինքն կերպարանես. ապա ուրեմն ո՞չ առաւելագունի պէտս ունիցիս առաքինութեան։ Եւ արդ քննեա զանձն քո, եթէ արժանի վարս անզուգական պարտեացդ բերիցե՞ս յանձին։

Բ. Զ՚իարդ իցէ քեզ օգտակար մերձաւորացդ լինել, եթէ անձին քում ինաստակար գտանիցիս։ Զ՚բր իցէ անարգասաւորիդ ձեռօք՝ զարգասաւորութիւն այլոցն պարգևել հրահանգօք քրիստոսական հաւատոց, քարոզութեամբ, և որ 'ի սոցին սակի. իցէ՞ քեզ մարթ սուրբս և անարատս զհաւատացեալսն ընծայել Աստուծոյ, մինչդեռ քո սիրտ թափուր իցէ յուղղութենէ։ Զրինակ բարեաց առաջի կայ քեզ ընծայել զանձն աշխարհիկ մարդկան, վասն որոյ ամենևին հեռի լինել արժան է և 'ի թեթեւ կարծեցելոցն անդամ յանցանաց՝ որք վասն պաշտօնէից սեղանոյն ծանուցեալք համարին։ Զ՚ի ինչ իցէ 'ի քեզ գոռհկական, և ռամիկ մարդկանն քաղաքավարութեան կենցաղ և

սովորութիւն. քանզի որչափ մեծ է աստուծոյ պաշտամանդ, այնչափ առաւելուլ արժան է քեզ քան զնոսա արդեամբք և առաքինութեամբք։ Աշխարհականաց 'ի բարձրագոյն կայս զքեզ տեսեալ, ակնկառոյց լինին 'ի քեզ. այնուհետև անմարթ իցէ քեզ թաքուցանել զանձն քո, զի աչք նոցա 'ի քեզ են միշտ։ Եւ զինչ լինիցի, աղէ ասա, եթէ 'ի սրբութեան հրահանգս մեծ քան զքեզ նոքա գտանիցին։ Յամօթ մեծ յայնժամ ըմբռնեսցիս, եթէ նոքա մարդասիրագոյնք քան զքեզ իցեն և առաւել բարեսէրք և առաւել նախանձաւորք փառացն Աստուծոյ։ Զիարդ լինիցիս նոցա 'ի շինութիւն գաղջ վարուքդ և անջան անփութութեամբ։

Գ. Առաւել քան զամենայն ինչ պատուիրեմ քեզ սիրտ սուրբ ունել. և յայնժամ Ճշմարիտն առաքինութիւն դարձցի քեզ 'ի քաղցրութիւն և 'ի սիրտիանս։ Զրանի քեզ եթէ առնուցուս զՃաշակ նորա, և բարձրագահոյս փառաց պատրաստեսցես քեզ յերկինս։ Իսկ զինչ լինիցիս, ո՛վ հեգդ և թշուառական, եթէ հակառակն այսոցիկ անցցէ ընդ

քեզ։ Հայեաց՝ի սուրբս իմ, տես զիարդ ամենեքին երկնչէին՝ի քահանայութենէ, զի գիտէին եթէ մեծ է պատիւ նորա, և մեծագոյն և անհրաժեշտ պարտիք սրբութեան կան՝ի վերայ նորա, և դատաստան ահեղ՝ի վերջնումն աւուր կայ մնայ նմա։ Ի բաց արա, որդեակ իմ, զգաղջութիւն, թող զաշխարհ, և յեռանդն սրբութեան վառեա զանձն քո։ Մեծ են փառք արքայութեանն երկնից. արժան է քեզ բռնաբարել, զի բռունք յափշտակեն զնա։ Ազու

աւնօրինագոյնք քան զքեզ զչարեացն թողին Ճանապարհ և՝ի սրբութիւն թեւակոխեցին. ես ինքն եղէց քեզ ձեռնտու, և որ վասն սիրոյ քոյ յօժարութեամբ կալայ յանձին զմահ խաչի, ոչ դարձուցից զերեսս իմ՝ի քէն։

Հրահանգք

Եթէ երբէք՝ի պարտուց պաշտամանդ թերասցիս, մի ասիցես եթէ փոքր ինչ է այս չար, այլ մանաւանդ ասիցես եթէ յամենայնի արժան է ինձ օրինակ լինել բարեաց. և այնպէս արմատաքի

զԹերուԹիւնս քո քանցեսցես։ Օ սրբ-
բախօս աւետարանին պատգամն մի՝ եր-
բէք արկցես 'ի յուշոյ, յամենայնի
նմանել ցանկացեալ կենարար փրկչին
և այլոց առաքինակրօն վարդապետաց
բանին։ Գրանելին Վինկենտիոս պաս-
լայեցի սովոր էր ասել յաՃախ, ԵԹէ
քանզի քահանայուԹեանն կարգ՝ սեպ-
հական է փրկչին, վասն որոյ և կերա-
գոյն է քան զամենայն կարգս աշխարհ-
հայինս. և ԵԹէ, ասէր, քաջ ծանու-
ցեալ էր իմ զմեծուԹիւն պատուական-
ուԹեան նորա, յօժարամիտ ունէի
յանձին հրաժեշտ տուեալ յայնմանէ
և պարապել յերկրագործուԹիւն. և
'ի ծանրանալ հասակիս տակաւ զօրա-
նայ յիս այս խորհուրդ. զի տեսանեմ
ԵԹէ քանի 'ի բացեայ շրջիմ 'ի կա-
տարելուԹենէ անտի, զոր արժան էր
ինձ ստանալ։

Ե

Յաղագս մեղաց։

Ա. Մուտ յանձն քո, որդեակ, և առցես խոկալ եթէ քանի դժպատեհ են մեղք։ Ոչ կարիցես ասել անշուշտ եթէ ոչ զծանրութիւն մեղացն գիտեմ ես. իսկ եթէ գիտիցես, այն առաւել չար է զի անբաժան և անմեկին ունիս զանձն 'ի նոցանէ։ Զոհպէտ և չիցես անտեղեակ երախտեացն իմոյ, համայն և այնպէս զարարած ինչին նախապատիւ քան զիս առնես. գիտես զի ընդունայն է աշխարհ, և առաւել քան զՄ՚ստուած, 'ի նա սևեռեալ և պնդեալ ես սրտիւ. Ճանաչես եթէ ոչ անարգ ինչ և վայրընկեցիկ է քահանայութիւն, և գոգցես առաթուր իմն և ընդոտիւք զնա կոխես։

Ընդուն եթէ մեղաց զբազումն 'ի բարեպարիշտ աշխարհականաց պակուցեալ ընդարմացուցանէ, և դու աներկիւղ անկղիտանաս 'ի չարիս։ Մ՚վ հեգդ

և թշուառական, և ընդէր ելցէ այդ զի չածէս զմտաւ զի 'ի դատ յինէն կոչէ-ցեալ՝ պարտաւոր արարից զքեզ զբանս քո 'ի կշիռ համեմատութեան ընդ գործոցդ արկեալ։

Բ. Օ՜ինչ չար արարի քեզ, որդեակ, զի դառնացուցանես զիս. մանաւանդ թէ զինչ ինչ պակաս 'ի բարեացն արարի, տալով քեզ միտս և հանճար սիրել զիս և ծառայել ինձ։ Ոչ բարեկամ լոկ զքեզ անուանեցի և որդի սիրելի, այլ և պաշտօնեայ և խորհրդոցն խորհրդոցն իմոց հաղարապետ և գործակից. և որպէս 'ի բիբ ական՝ այնպէս հայիմ 'ի քեզ. և դու չարաչար վարուքդ ոչ դադարես 'ի դառնացուցանելոյ զիս։ Այնթէ փոխանակ քո զայլ ոք 'ի ձեռն առեալ և զանարդամեծար ընորհացս հեղուի 'ի նա հոսանս, ապաքէն երախտապարտ մտօք ոչ դադարէր 'ի գոհանալոյ զինէն, զի 'ի տղմոյ աշխարհի 'ի քահանայականն աւագութիւն 'ի վեր ամբարձի զնա։ Այլեն իսկ բազումք որոց մի անգամ մատուցեալ յընթերցումն առտուածաշունչ տառից, մի անգամ լուեալ զքարոզութիւն բանին Աստուծոյ և Ճշմարիտ

ապաշխարութեամբ կենարար խորհրդոյն հաղորդեալ, վառեցան բորբոքեցան սրտիւ, և եղեն արք աստուածահաճոյք։ Բայլ աւաղ, զի քո խստացեալ և քարացեալ է սիրտ, և ինուս զանկանչս, զի մի լուիցես զձայն թովչի Հարտարի։

Գ. Ոչ մեծ է եթէ հեթանոս ոք կամ անհաւատ և կամ հերձեալ 'ի հաղորդութենէ եկեղեցւոյ դառնացուցանիցէ զիս. իսկ եթէ յուղղափառացն աշխարհիկ ոք այր յայն յանդգնեսցի, մեծագոյն է չար. ապա եթէ 'ի պաշտօնէիցն իմոց ոք զիս անարգիցէ, բա՛ւ է, քանի մեծեղեռն իցէ չարութիւն նորա։ Մինչդեռ պարտք անհրաժեշտք առաջի կան քեզ սրբանուէր աղօթիւքդ զարդարադատ ցասումն բարկութեան իմոյ դադարեցուցանել, և յորդորել զայլս և ձգել 'ի սէր իմ. մինչդեռ յանձին կալեալ է քո պատերազմել ընդդէմ մեղաց, և առաւել քան զայլս սիրել զիս. քանզի 'ի սպասաւորութիւն սեղանոյն մատուցեալ և ուխտեցեր ինձ ուխտ ծառայել և սիրել զիս, արդ զոգցես զամենայն ինչ 'ի մոռացօնս դարձուցեալ, ոչ ինչ ծանր և դժպատեհ

համարիս զառնացուցանել զիս, և զայլս
ևս յանարգութիւն գրգռես։ Ո՛հ, քա-
նի՛ մեծ է եղեռն քո և ապերախտու-
թիւն և անզգամութիւն։ Արժան էր
ինձ դարձուցանել զերեսս 'ի քէն, կապ-
տել զքեզ 'ի շնորհաց և 'ի քահանայու-
թենէ գլխովին, և յանդարձականն
մատնել կորուստ և 'ի խաւար արտա-
քին. այլ դեռ ևս համբերեմ քեզ և
յապաշխարութիւն կոչեմ, որպէս զի
բացցին աչք քո տեսանել զսէր իմ և
փոխարէն սիրել զիս։

Հրահանգք

Զանգի անփոյթ գաղջութիւն քո
'ի մեղս և 'ի յանցանս արկանէ զքեզ,
դիր հանապազօր առաջի աչաց զթե-
րութիւնս քո, զի անդադար արտա-
սուք կարասցես քաւել զնոսա։ ՅԱս-
տուծոյ տուաւ քեզ ժամանակդ, մի՛ ի-
բրեւ ումպէտ ինչ ընդ վայր ծախիցես.
այլ սուրբ սրտիւ և ապաշխարութեամբ
աճապարեա լուանալ և մաքրել զքեզ
արեամբն Քրիստոսի։ Երանելին Գրան-
կիսկոս սալեզացի ահիւ և դողութեամբ

սաէր , զի հրեշտակն լինել չէ այնչափ պատկառելի , որչափ մեծ է քահանայութիւն ։ Դանի զգուշութեան պէտք են ինձ , զի 'ի պատարագել մատուցեալ սրբեցից զսիրտ իմ և զմիտս յամենայն մեղաց , զի մի փոխանակ կենաց՝ զմահ իմ և զդատապարտութիւն գտից 'ի սուրբ բաժակին ։

Զ

Դարձեալ յաղագս մեղաց :

Ա . Ընդէր է քեզ , որդեակ , այդչափ գէշագէշ պատառել զանձն քո մեղօք . տես զիարդ յայպն կատականաց և 'ի նախատինս կարգեալ ես առաջի աշխարհականաց , և աշտիճան փառաց քոց արհամարհեալ . և չառնուցուս 'ի միտ եթէ յաճախութիւն մեղաց քոց զայդ արհամարհանս ածէ 'ի վերայ . քանզի և գրեալ իսկ է եթէ " Վասն այնորիկ ետու ես զձեզ արհամարհեալս և նուաստացեալս առաջի ամենայն ժո-

զուարդոց ,, ։ �пектեւ ատեցող ոք լոյէ
աւաքինութեան , սակայն կամի տեսա-
նել զայն 'ի քեզ . զչարաչար վարուցդ
զաղաղակ բարձեալ քրիստնջէ , ծիծա-
ղի զքեւ , ատեայ զքեզ , և 'ի քո աղագս
զամենայն երկրակիցսդ ընդ վայր հա-
րեալ այպանէ ։ Ո՛ւազք և մեծամեծք
աշխարհի եթէ 'ի սրբակրօնիցն զոք և
յանարատ բանին սպասաւորաց տեսա-
նիցեն , մեծարեն զնա և երկնչին 'ի
նմանէ . իսկ զքեզ և սինլքոր խուժանն
նախատէ վասն փառասէր պերճանացդ
և սիրոյ հաճոյից , որովք մանաւանդ 'ի
մտի եդեալ էր քո լինել մեծարոյ ։
Օ՛ էկեղեցեացն և զվանորէից զբազմա-
պատիկ շահս օգտի տեսանելով աշխար-
հականաց , ելեալս զմիմեամբք արա-
րեալ ընծայաբերք լինին առատատուր
պարգեւօք . իսկ եթէ տեսցեն զոք յե-
կեղեցւոյ պաշտօնէիցն ցանկասէր մար-
մնաւոր իրաց , որ ոչ 'ի թիկունս հասա-
նիցէ հաւատացելոց , այլ մանաւանդ
փնասակար նոցա գայթակղական գնա-
ցիւքն հանդիսասցի , զինչ զարմանք ի-
ցեն եթէ պակաս առնիցեն այնուհե-
տեւ զընծայս և զողորմութիւնս ։ Ո՛եղք
քո և յանցանք 'ի բազմապատիկ չարու-
թիւնս անկղիտացուցանեն զաշխար-

հիկս. և էն նոքա գործի արդարութեան իմոյ 'ի պատուհասել զքեզ. վասն մեղաց քոց և նմանեացն քոց ածեմ կուտեմ 'ի գլուխս ձեր վիշտս և չարակրութիւնս. յաճախեն նեղութիւնք 'ի քաղաքս, աւերեալ խոպանանայ երկիր, և տուն սրբութեան իմոյ լքեալ մնայ և ընկեցիկ։ Զեզ անկ էր հաշտեցուցանել զիս նախանձու փառաց իմոց և աղօթիւք. այլ զիարդ միջնորդ հաշտութեան լինիցիս, որ բազմապատիկ մեղօքդ առաւել քան զայլս գրգռես զիս յարդարադատ ցասումն բարկութեան։

Բ. Ընդ արագ անցանեն կեանք. այլ ցաւէ ինձ 'ի վերայ թշուառացեալ հոգւոյդ, յորոյ 'ի կորուստ և 'ի կործանումն մտադիրութեամբ գիմեալ ընթանաս։ Ո՛հ, և ո՞ր իցեն գանձքն այն շնորհաց զորս ետու քեզ. և ո՞ր գործքն այն բարութեանց որովք երբեմն միսիթարէիր զիս և սփոփէիր։ Սրբութեան պաշտամունք շուրջ պար առեալ են զքեզ, այլ դու լցեալդ մեղօք անարգասաւոր զնոսին գործես վասն անձին քոյ և այլոց։ Յերեսս իսկ յանդիմանեն զքեզ յանցուածք քո և սուրբ սպասք, սեղանք, բեմն և խոստովանարանք,

և արիւն իմ գլխովին։ Այլքն այն սրբութեան և հանդէսք պաշտամանց արժան էր զի սուրբ առնիցեն և զքեզ. այլ զի չարաչար զնոսին 'ի կիր առնուս, փոխեսցին քեզ յաղբիւրս անիծից և 'ի նզովս։ Ո՛հ, որդեակ, որ յանուն իմ զժողովուրդն օրհնես, և զձրիատուր շնորհս պարգևաց այլոց առատաձեռնես, զիարդ 'ի մեղս թաւալեալ և կամիս զի ատեցից զքեզ և դարշեցայց 'ի քէն։ Որ զերկինս բանաս այլոց, կամիցիս դու ինքնին տարագիր եղանել անտի 'ի բաց. որ յայդչափ մեծութիւն և 'ի ճոխութիւն ամբարձեալ ես, զի՞ է զի 'ի խորագոյն անդունդս գահավէժ զանձն արկանես։ Ա՛պա ուրեմն 'ի զուր փառաւոր արարի զքեզ և վայրապար առեամբ իմով զքեզ յագեցուցի. քանզի յաճախեցեր առաւել փութալ 'ի գլորումն և 'ի կործանումն անձին քոյ։

Գ. Տպաւորագոյնս ազդիցե՞ն արդեօք 'ի քեզ այս բանք և ճշմարտութիւնք։ Որդեակ իմ, անձին զգաստ լեր, և մի նմանիցես այնոցիկ ոյք ասեն գիտել զամենայն և ինքեանք ոչ զգաստանան. կոչեցեալք յինէն և խնուն զականջս. և զխայթ խղճի մտաց և զշնորհս ար-

համարհեալ, խստանան սրտիւ։ Եւ ուր ժողովուրդն 'ի շողալ ևեթ փայլատական դղորդի յանձին և գայ յուղղութիւն, դոքա և ոչ 'ի ձայնէ ահագին որոտմանց զարթնուն երբէք։ Հապա, դարձ այսօր և բաց զաչս քո, լուր ձայնի իմում և ապրեցո զանձն քո յահագին վտանգէն և 'ի կործանմանէ, որ մօտալուտ 'ի վերայ հասեալ կայ։ Ապա եթէ և զայդ ևս արհամարհիցես, երկիր մի գուցէ զվերջին զայս նուազ խօսիցիմ 'ի սիրտ քո, և զխստասրտելդ տեսեալ՝ սկիզբն արարից պատուհասել զքեզ 'ի կուրութեան և յանզգայութեան դանդաչեցուցանելով 'ի լուսաւորութեան անդ ընդհաց։

Հրահանգք

Ապաչեա զտէր զի տացէ քեզ լոյս և ընդհս արգասաւոր առնել զազդեցութիւնս իւր և յորդորամիտ 'ի կատարել զպարտս քոյ, զի մի ընդ թշուառացեալսն և դու համարիցիս ոչք տեսանելով ոչ տեսանեն և լսելով ոչ լսեն և չառնուն 'ի միտ։ Սուրբն Հռոմանոս

դոս սովոր էր ասել եթէ դիւրագոյն է դարձուցանել յուղղութիւն զխստասիրտ զոք հրէայ քան զքահանայ ապիրատ։ Եթէ անզգայ իցես և անզեղջ, երկիր 'ի սրտի քում. և հաստատութեամբ դիր 'ի մտի՝ բոլորապէս յանձն առնել զքեզ Ստուծոյ որ զքեզ խնդրէ և կոչէ սիրալիր, և զանկեղծ ուղղութիւն վարուց 'ի քէն պահանջէ։ Որ խստացուցանիցէ զսիրտ իւր ոչ լսել զձայն Ստուծոյ և դալ յապաշաւ, անմասն է նա 'ի փրկութենէ։ Եթէ խըստասրտութեանն անուն զքեզ ոչ երկեցուցանէ, գիտեա՛ զի արդէն իսկ խըստասիրտ ես. և եղուկ քեզ եթէ յայնմ պայմանի կենաց յամառեալ անդեալ կայցես։

Է

Գայթակղութիւն :

Ա. Եւ էիցէ այդ բաւական, որդեակ իմ, զի ոչ միայն անձամբ անձին, այլ և այլոց լինիս պատճառք զիս դառնացուցանելոյ : Զարիւն իմ բովանդակ ետուս 'ի փրկանս հոգւոց, և դու խուժադուժ և անհաւատագոյն քան զայնոսիկ որ զիսն խաչեցին, յափշտակես կապտես զնոսա 'ի ձեռաց իմոց. խափան լեալ բարւոյ՝ թոյլ տաս աձել չարութեան, և տեառն Աստուծոյ քոյ ընդդէմ դառնաս: Տիրանուէր օծութեամբն զքեզ փառաւորեալ, ասացի արածել զոչխարս իմ և առաջնորդել գալ առ իս. այլ դու գայլ գիշատիչ մտեր 'ի հօտ իմ 'վարատական տարագիր հանել զնոսա յերեսաց իմոց : Աւաղ, զի էիք ոք որ այնպէս խաթարեալ եղծանիցէ զկարգս բարեզարդութեան սրբոյ եկեղեցւոյ, քան դու և նմանիք քո, որ փոխանակ ուղղութեան լինելոյ առաջնորդ, չա-

րեաց լինիք օրինակ։ Եթէ այդպէս կամէիր ընդ իս վարել, ընդէր զարքուն թեան նշանակս արկար զքեզ և յեկեղեցի իմ մտեր. քանզի յաշխարհական կալով կարգի՝ չառնէիր այդչափ անարգանս ընդ իս որպէս այժմդ 'ի քահանայութեան։

Բ. Մեռնեցուն աչք 'ի քեզ են ակն կառոյց. եթէ սխալիցես՝ ոչ ոք համարձակի խրատել զքեզ. և որչափ մեծարոյ ես աստիճանաւ՝ այնչափ առաւել տկարացն լինիս 'ի գայթակղութիւն. և որպէս բանիս կամք են ասել, յանկանելդ՝ և զաշխարհիկսն բռնադատես իմն 'ի գլորումն. քանզի զմեղանչելն քո տեսեալ, այնուհետև և ինքեանք համարձակ անկղիտանան 'ի չարիս. օրինակ զքեզ առեալ անվեհեր յօրանան 'ի գինելրբուս, բարբառին զանպատշաճս և գործեն զանօրէնս. և եթէ ոք կամիցի յուղղութիւն զնոսա ածել, տան պատասխանի մեղմեխանօք եթէ և երիցունք և կրօնաւորեալք անգամ գործեն զայդպիսիս։ Զանզի 'ի տեսանելն զոք 'ի սպասաւորաց բանին թերացեալ 'ի պարտուց պաշտաման իւրոյ, համարին եթէ ամենայն երիցունք վիճակակիցք

նորա , և չարութեան գործոցն իցեն կցորդք . վասն որոյ և կրօնից հասանէ վտանգ՝ մինչդեռ նոքա տատանեալ դեդևին 'ի հաւատոյս՝ համարեալ եթէ խաբէութիւնք իցեն և քարոզութիւնքն և խորհուրդք և աւետարանն ինքնին ։ Ո՛հ , քանի դառնաղէտ և անողոք է գայթակղութիւն ։ Ո՛ ողորմ ոգիք 'ի սպանդ վարեալք , յորմէ արժան էր ձեզ փրկութեանն արժանանալ շնորհի ։

Գ . Ողբոց ես արժանաւոր , քահանայդ , փոխանակ զի չկամեցար 'ի լաւանդը 'ի կիր արկանել զլեզու քո և զհանձար և զինչս . և զքահանայութիւնն գլխովին իբրեւ սուսեր սրեալ 'ի ձեռն առեր հարկանել , վիրաւոր տապալել և սպանանել զհոգիս ։ Գրեալ իսկ է յիմում աւետարանի , զի եթէ գայթակղեցուցանիցէ ոք զմի 'ի փոքրըկանց յիս հաւատացելոց , լաւ էր նմա երկան իշոյ կախել 'ի պարանոցն և ընկղմել 'ի խորս ծովու . իսկ ի՞մ իմիք արժանաւոր իցես դու , պաշտօնեայդ Աստուծոյ , որ զշնորհացն լոյս յինէն ընկալեալ և 'ի սպասաւորութիւն սրբոյ բեմին հրաւիրեալ , ծանուցս յանցանես մեղաք և անօրէնութեամբ ։ Այլ եթէ

օրինակաւդ քով խրախուսեալ բազումք յաշխարհականաց, համարձակիցին գործել զանօրէնութիւնս և անկանել անկանգնելի, գիտեա՛ զի այնչափ մահուանց պարտաւոր ես դու, որչափ անձինս 'ի հաւատացելոց յուղղութեան շաւղացն նոցա խոտորեցուցեր։ Եւ զի՞արդ երշխիցես այնուհետեւ երևել առաջի իմ՝, և ոչ գետս արտասուաց հեղլով ջանասցիս միւսանգամ դարձուցանել առ իս զհոգիս գյափշտակեալս 'ի գրկաց իմոց։

Հրահանգք

Օ այս ինչ հանապազօր ածցես զմըտաւ եթէ քահանայ ես Աստուծոյ, և զի պարտք անհրաժեշտ 'ի վերայ կան քեզ լինել 'ի կանգնումն և մի 'ի կործանումն հաւատացեալ ժողովրդեան։ Այլ իսկ և սուրբն Իռենարդոս, եթէ որ ինչ յաշխարհիկ մարդիկ ոչ ծանր և դժպատեհ թուի, համարեսցի 'ի մեծ մեղս վասն քահանայի։ Հապա քաջիկ խելամտութեամբ առցես դու քննել եթէ 'ի կենցաղելդ ընդ կարևոր բա-

ըեկան քո և կամ ընդ օտարս, և ա-
ռաւել ընդ մանկամարդս, եղիր երբէք
պատճառք մեղաց բանիւ և օրինակաւ։
Ամենայն քահանայ պարտի կեցուցա-
նել զանձն, կեցուցանել և զայլս. իսկ
որ գահավէժ խորհրդովք'ի կորստեանն
ածեալ ձգէ խորխորատ զգինս արեանն
Քրիստոսի, ո՛հ, քանի՞ փութոյ և խնա-
մոց պէտք են նմա'ի շահել միւսանգամ
և'ի բժշկել զմիտսն գայթագղեալս։
Սուրբն Յոհաննէս մինչ դեռ ևս յաւա-
գութեան էր և'ի փառաւոր իշխանու-
թեան, էտես զմի ոմն յիւրոց սիրե-
լեացն զի խորհէր զկրօնաւորութեան
ունել յանձին զկենցաղ։ Ամենապարեաց
փոխել զնա'ի խորհրդոց մտացն, և
յաջողեցաւ իսկ նմա։ Այլ ապա'ի
զեղջ եկեալ և յապաշաւ, վաղվաղակի
եթող մերկացաւ յանձնէ զաւագու-
թիւնն և զփառս, և փոխանակ սիրե-
լւոյն ինքնին ընտրեաց զկեանս մենաւո-
րութեան, զամենայն աւուրս կենացն
ողբալ զչարն զոր գործեաց։

Ը

Պատարագ սեղանակապուտ :

Ա. Երեշտակացն դասք 'ի տեսանել անդ զպատարագս մատուցեալս անարժանութեամբ և սեղանազերծ յանդգնութեամբ, զահի հարեալ ընդարմանան, և ծածկեալ զերեսս արտասուեն. որդեակ իմ, երկիր և դու և ողբա ցաւագին. տես զիա՞րդ պաշտօն հարկանեն ինձ քահանայք զորս վիճակակիցս առաքելոցն իմոց ընտրեցի և վիմին հաւատոյ որդիս, և նոքա գործակիցք գտան Յուդայի և նեռինն կարապետք. և զորոց 'ի դէպ է ինձ երկրորդել եթէ "Ոչ հաւասիկ ձեռն մատնչի իմոյ ընդ իս 'ի սեղանս"։ Այլ 'ի համբուրել նոցա զսեղան իմ, արժան է ինձ երկրորդել առ նոսա, եթէ "Համբուրելովն մատնես զորդի մարդոյ"։ քանզի անարժան քահանայք ոչ ընդ երեսուն արծաթոյ, որպէս զմատնիչն իմ և զկորստեան որդին Յուդաս, այլ վասն ինչին հաճոյից, այլ վասն

մարդկային ակնածութեան, այլ վասն ողորմութեան դուշնաքեայ լումայից՝ իբրեւ զդանգարժեայ ինչ և զանարգ վաճառեն զանգին պարգեւն և զփրկանս աշխարհի։ Բաւական երախտամոռաց ապաշնորհութեան նոցա. քանի դառն է մատնութիւնս և եղեռն սարսափելի։

Բ. Փոխանակ պատկառանօք և սիրով զիս պաշտելոյ, այպն առնեն զինեւ, նմանեալ Հրէից խաչահանուաց, որք ծունր ինձ կրկնեալ և եղեգամբ հարկանէին և յերեսս իմ թքանէին։ Իսկ սոքա այնչափ թքանեն յիմ դէմն՝ որչափ զսրբազան բանն որ յահաւոր խորհրդեան՝ անարժանութեամբ բարբառիցին։ Ոչիչ ոք շօշափել զանօթս սրբութեան, թող թէ զսրբութիւն սրբոց և զաստուածեղէն խորհուրդն տղմաշաղախ ձեռօք. իսկ ես զիարդ հանդուրժեցից յորժամ զանարժանս տեսանիցեմ սեղանոյն պաշտօնեայս, որք անարգ և աղտեղի անձամբ և սրտիւ առ իս մերձենան, և իբրեւ զմոխիր և զտիղմ երկրի ընդ ոտիւք եղեալ առ աթուր հարկանեն։ Դոցա մեծ է անօրէնութիւն քան զՀրէից, որք միանգամ միայն զիս չարչարեցին՝ անտե-

զեակք աստուածութեան իմոյ. իսկ դոքա թէպէտ և զիս ճանաչիցեն, սա-
կայն բազում անգամ զնոյն գործ գոր-
ծեն. մանաւանդ թէ չար ևս քան
զդևսն են որք հաւատան և սարսեն.
իսկ դոքա կամ չհաւատան և կամ
չդողան անշուշտ։

գ. Ա՛յլ, զիարդ չարաչար 'ի կիր
առին դոքա զսէր իմ. պարգեւս պարգե-
ւեցի նոցա, և փոխանակ սիրոյ իմոյ
դառնացուցանեն զիս և անարգեն։ Ո՞բր
ժուժկալեալ համբերիցս ես տեսանել
զփրկութիւնն 'ի կորուստ յեղաշրջեալ,
զսրբութիւնն 'ի պղծութիւն և զխոր-
հուրդն ահաւոր խոշոշեալ անագորոյն
անգթութեամբ, զդեղեցիկն 'ի մա-
հադեղ փոխեալ և զկենդանութիւնն 'ի
մահ։ Ո՞զիարդ արդեւլից զցասումն իմ
յորժամ զքահանայսն տեսանիցեմ որ
'ի բաժակի անդ գերահրաշ ողորմու-
թեան իմոյ զբաժակն կամիցին քամել
զսրտմտութեանն Ա՛ստուծոյ։ Ա՛յլ դու,
որդեակ իմ, մատիր ջերմեռանդն և բո-
լորանուէր սրտիւ զքաւչարարդ մատու-
ցանել զոհ, և զարդարադատ բարկու-
թեանս իմոյ դարձուցանել զնեռս 'ի
կապարձ։ Ո՞այն ածցես զմտաւ զի

անօրէն քահանայք յուտել անդ զմարմին իմ և յլմպել զարիւն, դատաստանս անձանց իւրեանց ուտեն և ըմպեն. վասն որոյ մերձեսցիս առ իս կենդանի հաւատով, ահիւ և արտասուօք և հրաբորբոք սիրով։ Օ՜ի մի մեղացն նոցա կը-ցորդելով՝ և տանջանացն լինիցիս հաղորդ։

Հրահանգք

Պէտք է զանձն քո ելթէ պատարագեցեր երբէք ըմբռնեալ 'ի ծուղակս մերձաւոր առթից, կամ անմաքուր սրտիւ և խորհրդով։ Պատարագեցեր մինչդեռ ոխութեամբ էր սիրտ քո ընդ մերձաւորիդ. մատեաւր 'ի քեմն սրբութեան՝ մինչդեռ անկեալ էիր ընդ եկեղեցական անկանոնութեամբ։ Մի՛ մոռացիս յուշ ածել և զայն, զի 'ի խոստովանել մատուցեալ՝ զորպիսի՞ ընտրեցեր քեզ հայր խոստովանութեան, և ցուցեր նմա, որպէս արժանն պահանջէր, զկարեւոր պէտս անձին քո։ Օ՜ի մի զտուրս պատարագացն կորուսանիցես, իշխեցեր անմաքրապէս պատարա-

գել։ Յանցաւոր կացուցանէ զքեզ և լոկ պատարագն՝ զորոյ փուլթացուցանիցես զաւարտն, իբրու եթէ գործք կարևորք և անհրաժեշտք առաջի կան քեզ. զի պատարագ զահալէժ մատուցեալ 'ի քառորդ մի ժամու, ոչ անստգիւտ 'ի մեղաց համարի։ Յայսպիսեաց աստի և յորոց 'ի սոցին սակի եթէ գտանիցես ինչ 'ի սրտի քում, հրաժարեա 'ի պատարագելոյ. և բուռն հար դարմանել զվերս սրտի քո, զի մի զազիր և գարշ կերպարանօք յանդիման լիցիս տեառն քո և Աստուծոյ։ Ընկեալ առաջի Յիսուսի դիր ուխտ ընդ անձին քում յամենայնի զհետ գնալ կամացն նորա. որպէս զի ինդուլթեամբ թողեալ զկենցաղս զայս, ելցես յերկինս փառաւորել զամենատէր թագաւորն Քրիստոս։

Թ.

Վասն ոչ զգուշանալոյ 'ի մեղաց :

Ա. Որդեակ իմ, այս քանիցս եցէ զի խոստանաս ինձ յետս կալ 'ի մեղանչելոյ, և 'ի խոստմանէդ պակասիս. ապա ուրեմն ոչ մեծ ինչ զիս համարիս. քանզի եթէ խոստանայցես մարդոյ մահկանացուի, զամենայն փոյթ և զկան 'ի մէջ առնուս 'ի հաճել զնա. և ինձ միայնոյ չամաչէս ապախտ առնել։ Օ՜ չարութիւն և զհիքութիւն ընթացիցդ դու ինքնին գիտես և խոստովան լինիս և գարշիս. այլ ապա իբրեւ զշուն անարգ դառնաս վերստին 'ի փսխածդ և իբրեւ զխոզ ընդ տիղմ թաւալիս։ Օ՜ այս արժան էր քեզ հատուցանել ինձ դարձուած փոխարինի ընդ երախտեացն իմոց և սիրոյ. և չամաչիցես յորժամ զուխտն զմոռաւ ածիցես որովք զքեզ պարաւանդեցեր, 'ի պարտս քո և 'ի սրբութիւն աշտիճանիդ հայեացիս և 'ի մեծարոյ և յահաւոր պաշտամունադ։

Բ. Արպիսի խոստովանութիւնք քո
ի ցեն զորս առնես. հաստատութեամբ
դնես 'ի մտի չյանցանել, և յաճախես
'ի յանցանս. և չէ այդ յապաշաւ և 'ի
զեղջ գալ, այլ մանաւանդ ծաղր առնել
զինեւ։ Ապաքէն և դու չընծայէիր հա-
ւատս այնմ, որ խոստացեալ և ապախտ
առնիցէ։ Եթէ նստեալ քո 'ի խոստո-
վանարանի, և գայր առ քեզ ոք քո
պէս, ոչ հաւատս ընծայէիր անշուշտ
առաջադրութեանց նորա. և դու զիարդ
յապահովի և յանդորրու ի ցես վասն
խոստովանութեանցդ և հեշտին արձակ-
մանց։ Ընդարեւ ասեմ քեզ, զի 'ի զուր
և ընդունայն է այդպիսի խոստովանու-
թիւն, և փնասակար ոչ քեզ միայնոյ՝
այլ և հօր խոստովանութեանդ որ մատն
լինի քեզ և պաշտաման իւրոյ. քանզի
և "Այր կուրի յորժամ առաջնորդէ՝
սխալէ, և երկոքին 'ի խորխորատ ան-
կանիցին"։ Օ այս և զայսպիսի գոր-
ծեալ քո չարիս և անօրէնութիւնս, և
զիարդ ելիցես օր ըստ օրէ մատչել 'ի
սեղան իմ և կենարար հացին և բաժա-
կի հաղորդել։

Գ. Արդեակ իմ, եթէ ոչ յետս դարձ
ցիս 'ի չարեացդ և ճշմարիտ ապաշ-

խարութեամբ զմեղս քո քաւեսցես, կորուստ անհնարին և յաւիտենից դատապարտութիւն կայ մնայ քեզ։ Որպէս մնեսջիր յանձին քում, զմտաւ ածեալ զի սակաւք ոմանք 'ի քահանայից որ ի-բրեւ զքեզ անօրինիցին, ժամանս լիցին փրկութեան։ Որ 'ի սիրտ քո, և տես եթէ զիարդ յողորմ վիճակ անկեալ դը-նիս. քանզի յորժամ 'ի սկզբան անդ դառնացուցանէիր զիս, խայթք խղճի վաղվաղակի ժամանէին 'ի վերայ տագ-նապել զքեզ, զահի զամօթի հարկա-նէիր և յերեսաց իմոց խնդրէիր թաք-չել. բայց ապա յաճախեալ 'ի մեղս՝ եր-կիւղն այն 'ի քէն վերացաւ և ամօթն բարձաւ. վասն որոյ բազում այն է զի և 'ի խոստովանութենէ հրաժարես, և կամ այնպիսի արձակմամբ շատանաս՝ որ ոչ միայն 'ի մեղանչելոյ զքեզ ոչ զգու-շացուցանիցէ, այլ առաւել և 'ի վտանգս կործանման գահավէժ արկանիցէ։ Դա-բէ, զիարդ յողորմ վիճակի անկեալ դնիս։ Եւ չիցէ քեզ մարթ ասել եթէ չկա-ցեմ ուղղել զանձն իմ. և կամ մեղա-դիր ինձ լինել, իբրու զի զանհնարինս առ 'ի քէն պահանջիցեմ, և թէ չկա-միցիմ օգնական քեզ լինել. զի եթէ չկամիցի ձեռն տալ՝ ապաքէն և ոչ իսկ

պահանջէի զայդ 'ի քէն. ապա ուրեմն քո մեղք են, զի ոչ ինդրես և ոչ բռնադատես զանձն քո։ Աչիւնն իմ 'ի խոստովանութեան և մարմին իմ 'ի սեղանի սրբութեան չիցեն միջնորդք և զօրավիգն 'ի կանգնել զգլորեալդ, եթէ բարուք 'ի կիր արկանիցես զնոսին։ Այլ քեզ, զի ուր այլ մեղաւորք գտանեն զփրկութիւն և զթողութիւն, դու չարաչար վարելով յաւելուս քեզ յանցանս և դատապարտութիւն։

Հրահանգք

Մատիր յընդհանրական խոստովանութիւն քաւել զմեղս քո զանցեալս, 'ի խնդիր լինելով ճշմարիտ դարձի և ուղղութեան։ Մեծարդոյ Հայրն Յովհաննէս Աչիլա ասէր եթէ 'ի Հայր խոստովանութեան ընտրել արժան է զմի 'ի հազարաց։ և սուրբն Ֆրանկիսկոս սալեզացի յաւելոյր ասել եթէ մանաւանդ զմի 'ի բիւրուց. "Օ՜ի նուազունք ոմանք, ասէ, գտանիցին քաջայարմարք 'ի գործ և 'ի պաշտօն այդպիսի"։ Եւ դարձեալ ասէ. "Եթէ ոք գտանիցէ

հայը խոստովանութեան ընտիր յընտրելոց, մի փութասցի փոխել զայն առանց կարևոր պատճառաց,,։ Արդ եթէ տեսանիցես զանձն քո 'ի մեղս անկեալ, փութա, սիրելի, զպարտուպատշաճ դեղ դարմանոյն առնուլ 'ի կիր։ Մի հաւատար զանձն քո յառաջնորդութիւն թոյլ խոստովանահօր, և մի խնդրեր վաղվաղակի արձակմանն արժանանալ շնորհի։ Յեղյեղեսցես 'ի միտդ զնախադասութիւնսն զորս դատապարտեաց սրբազան հայրն Ինոկենտիոս ԺԱ, և տեսցես զի ոչ արտաքոյ մնան և քահանայք. մանաւանդ թէ այն շանթք դատապարտութեան առաւել ևս օրինակաւ ազդեսցեն 'ի քեզ՝ յորժամ զպարտիս կատարելութեան քո զմտաւ ածիցես, յորս առաջի կայ քեզ 'ի վեր ելանել։ Սուրբն Լովմաս վիլլանովացի ասէր, եթէ ողբ ամենեցուն անխտիր տան զարձակումն հարք խոստովանութեան, 'ի կործանումն են եկեղեցւոյ. զի խաբեբայք են և մոլորեցուցիչք, և անագորոյն դահիճք հոգւոց։

Ժ

Անմաքրութիւն :

Ա. Մովսէսեւ բարեպաշտօն էր ես, որդեակ, և Ջերմեւանդն և խոնարհ, այլ յողջախոհ մաքրութենէ վերջացեալ, ոչ էնչ ես առաջի իմ. քանզի որ աստուածեղէն բարեկամութեանն թեկն ածէցէ, պարտի արժանի վարս յանձին ցուցանել։ Յաշխարհականաց եթէ ոք յայրատ հայեցուածով՝ ի կին մարդ նայեսցի, և կամ խորհուրդս այնպիսիս զմտաւ ածէցէ՝ ծանունս մեղանչէ. այլ քանզի դու ուխտիւք խոստացար ինձ հրաժարել յաշխարհէ, վասն որոյ ոչ լոկ՝ ի մեղս՝ այլ՝ ի սեղանազերծ յանդգնութիւն քեզ թուեսցի եթէ ելիցես լծընկէց լեալ՝ թօթափել զբեռն դիւրատար՝ զոր կամակարութեամբ կալար յանձին։ Օ՜ իսկզդ թուիցի քեզ, որդեակ. այն լեզու որ հանապազօր կոչէ զիս յերկնից անմաքուր լինիցի. ձեռք որ զանապականն իմ և զաստուածային

շօշափեն մարմին, տղմաշաղախք աղտեղեալ լցեն։ Եթէ յիւրում սրտի ընկալցի զորդի կուսին, որ զզաւակն Աստղկան 'ի ծոցին կրէցէ։ Եթէ մեղանչել կամիցիս, խնդրեա լեզու այլ քան զկարմրացեալն արեամբ իմով, այլ ձեռս քան զորս շօշափիցեն զսուրբ մարմին իմ, այլ սիրտ որ պարտի բորբոքիլ սիրով իմով։ զի եթէ անսուրբ բոցով վառիցիս՝ և Ի՛բր ապա ժպրհիս 'ի սեղան իմ մերձենալ, և զիս քահանայագործել։

Բ. Մինչդեռ զհրեշտակականն պահանջիս մաքրութիւն, չամաչիցե՞ս գերի լինել անարդ ախտից. մանաւանդ զի առաւելագոյն պարտք 'ի վերայ կան քեզ՝ նախաձաւոր մաքրութեան իմոյ լեալ՝ 'ի նոյն և զայլս խրախուսել՝ ոչ բանիւք լոկով, այլ և օրինակաւ անձին քո. Զի եթէ դու 'ի մաքրութեանն պարգևաց վերջացեալ գտանիցիս, Ի՛բր 'ի բեմէ քարոզութեան զայլս 'ի նոյն վառիցես. և զիարդ աշխարհիկք 'ի զեղջ եկեալ 'ի լալ հարկանիցին և 'ի խառնավար կենացն 'ի բաց կացցեն, մինչդեռ զքարոզդ տեսանիցեն ոչ ինչ ընդհատ վարս յանձին բերելով։ Զ՝ան

որոյ զի տացես օրինակ բարի աշխարհականաց, արժան է քեզ խորշիլ յամենայն ընտանութենէ որ յաչս այլոց թուիցի վնասակար։ Մի 'ի ներքինդ քո վստահացեալ գիտակցութիւն՝ արհամարհեսցես զբանս նոցա. քանզի արժան է քեզ ոչ միայն 'ի մեղաց հրաժարել, այլ և յօրինակ բարեաց զանձն ընծայել ամենեցուն. վասն որոյ և 'ի կենակցութենէ և 'ի բանից իսկ արժան է քեզ փախչել որ յաչս այլոց անսուրբ թուիցին։ Յայսպիսեաց աստի եթէ ոչ զգուշացիս, աղէտք անհնարինք և կործանումն բազմապատիկ 'ի վերայ հասանեն ողորմ հոգւոց սիրելեացն ի-մոց. զի իբրեւ բռնի ընդ քարշ ձգես զնոսա 'ի մեղս։

Գ. Զոյշ լեր անձին քում զի մի դիցես զոտս քո յայս Ճանապարհ կորըստեան, ուր դիւրին է մտանել և ելանելն դժուարահնար։ Սատանայ քանզի գիտէ եթէ 'ի գայթակղեցուցանել զձեզ՝ կրկնաշահ Ճոխանայ, վասն որոյ ամենայն փութով զհետ պնդի, Ճգունս բազմապատիկս ունի յանձին զի զձեզ մոլորեցուցցէ։ Ընկան մեծամեծ անձինք որ 'ի սրբութեան և յառաքինու-

թեան հաւատարապատիւ և բարձակ-
կիցք էին Հերոնիմեայ, Ամբրոսիոսի և
մեծին Գրիգորի։ Այ՝ քեզ եթէ
մի անգամ և եթ անկցին. զի անկանել
մի անգամ հազարս զհետ իւր ձգէ ա-
նարժան խորհրդոց և գործոց, և անի-
րաւութեանց և ամպարշտութեանց։
Ապա այնուհետեւ այնչափ զօրացեալ
արմատացի 'ի քեզ ախտն այն չարա-
շուէր, զի ոչ ազդեսցեն երբէք խրատք
ծնողաց և աղօթք բարեսիրաց և յան-
դիմանութիւնք առաջնորդաց և հաստա-
տակաց քրիստոնչիւն. կորուսանես զհո-
գի, զկեանս, զինչս և զհամբաւ. և իբրեւ
'ի յուսակորոյս անմտութեան դանդա-
չելով արհամարհիցես զշնորհս, զխայթ
խղճի և զաքանչելիս գլխովին. և ուղ-
ղութեան հաւատոց պաշտօնեայդ չար
քան զանհաւատն եղով՝ վասն մար-
մնաւոր շահու 'ի մատակարարելոյ զխոր-
հուրդս եկեղեցւոյ և 'ի պատարագելոյ
ոչ դադարես, 'ի մոռացօնս իմն զդժոխս
արկեալ և զյաւիտենականութիւն։ Եւ
մինչդեռ այսպէս 'ի չարութեան կեանս
զաւուրս մաշիցես, հասանէ մահ 'ի վե-
րայ և բառնայ զքեզ յաշխարհէ կամ յա-
նակնկալս և կամ անապաշխար կենօք։
Որդեակ իմ, մի վասն անարդ և ընչին

հաճոյից հաւասարեր զանձն քո անաս-
նոց անբանից, և մի դիցես զոտն քո
յայդ երկիւղագին ճանապարհ դատա-
պարտութեան։ Եթէ հաճոյ իցէ քեզ
մանն բաժնի ընդ դատապարտեալսն ու-
նել, լեր ապա անմեկին յանօրէն հա-
ճոյիցդ. այլ գէթ մի մոռանար և զայն
զի տէր քո և Ստուած կախեալ կայ 'ի
վերայ խաչափայտի. զի մահուամբ չափ
'ի խնդիր եղէ փրկութեան քո, և դու
զսէր իմ և զվերս ընդ ոտիւք կոխեցեր
և կամեցար երթալ 'ի կորուստն յաւի-
տենից։

Հրահանգք

Պախիր 'ի դատարկութենէ, պարըս-
պեա զզգայարանս, և զմարմինդ կրթեա
'ի մեռելութիւն ուսումնասէր փու-
թով, բարեկրօն վարուք և պահեցողու-
թեամբ։ Յամենայն 'ի գործս քո, և
առաւել 'ի փորձութեանն պահու դի-
մեա 'ի վերս փրկչիդ, և զսուրբ կոյսն
արա քեզ բարեխօս. 'ի կենակցելոյ ընդ
աշխարհասէր և խառնակեցիկ արս և
կանայս՝ հրաժարեաց. 'ի կնոջէ զգոյշ

լեր, թէպէտեւ բարեպարիշտ էր և հոգեխրատ. քանզի ասէր սուրբն Իգնատիոս թէ և ընդ այնպիսեացն յաճախել՝ի բանս կամ զբոց վառեալ ծնանիցի և կամ զծուխ որ զանուշն մրձոտեալ ապականիցէ. մի՛ վստահանար և յաղագսանս, այլ հանապազօր ածցես զմտաւ զբանս խրատուց Փիլիպպոսի Երեան թէ նոքա են յաղթականք՝ի պատերազմի զգայութեանց՝ որք՝ի սկըսանել մարտին վաղվաղակի տեղի տըւեալ փախչէին։

ԺԱ.

Արծաթասիրութիւն։

Ա. Յընչէին սէրոյ՝ի բաց կաց, որդեակ։ Եթէ ասիցես չունել զինչս, այլ զինչ էր անարդ կծծութիւնդ և խղճ զինչս կուտելոյ և բազմացուցանելոյ զարծաթ, և նախանձաբեկն լինել ընդ այլս։ Բայց զի պատրուակ գեղեցիկ՝ի ձեռն առեալ քո զխոհեմութիւն

և գանատեսութիւն, և զարծաթասիրու-
թեանդ կամիս քօղարկել զախտ վնա-
սաբեր։ Մինչամուխ լինիս 'ի հրահանգս
ուսմանց որ առաւել շայեկանք և օգ-
տաբերք քեզ թուիցին, 'ի տուրևառս
և 'ի հնարս աշխարհականս. պատճա-
ռանս պատճառես օգնել մերձաւորացդ
և կարևոր բարեկամաց՝ մինչդեռ այլ
սէր գրաւեալ ունի զսիրտ քո, սէր ըն-
չից։ Այլ որ աղետալին է, բազում
անգամ և զարբութեան կրօնս 'ի ձեռն
առնուս սատար ընչաքաղց ագահու-
թեան քո. ասես ծառայել եկեղեցւոյ,
յաձախել 'ի պաշտամունս և 'ի քարո-
զութիւն կենարար բանին, յայց ելանել
հիւանդաց և զհոգեհանդիստն կատա-
րել. մինչդեռ ոչ վասն եկեղեցւոյ՝ այլ
վասն արծաթոյ ընդ քիրտն դաս և ընդ
ապաժոյժ։ Ոչ պէտեւ խիղճ մտացդ
զքեզ հարկանիցէ, սակայն 'ի պատա-
րագելոյ ոչ հրաժարես՝ զի մի զտուրս
ողորմութեանն կորուսանիցես։ Օ՜ի է
զի ոչ կամիս զքրիստոնէականն ուսու-
ցանելով վարդապետութիւն հրահան-
գել զմանկտին. բայց զի չիք ինչ անդ
ակնկալութիւն շահուց. առ իմ՝ այդ-
չափ փոյթ յանձին ունել վասն մեռե-
լոց՝ և զկենդանեացն ինչ ոչ հոգալ. առ

իմէ՞ յաձախել 'ի դրունս մեծամեծաց և զաղքատսն բարձի թողի առնել։

Բ. Զ իրարդ կարիցէ ոք ջերմեռանդն փափաքանօք սիրել զիս և զՀոգի իւր, մինչդեռ սիրտն հարեալ կայ զագահութեամբ։ Զ ան այնորիկ եթէ յեկեղեցի ոք մտանիցէ, աւաղ, բազում այն է զի թուիցի նմա ոչ 'ի խնամն հաւատարիմ ծառայից յանձն եղեալ, այլ մանաւանդ իբրեւ 'ի թշնամեաց յաւար հարեալ. անօթքն սրբութեան գարշք և աղտեղիք և սպասքն անմաքուր. վասն զի ամենայն ոք զանձինն խորհի և ոչ զՍ՚ստուծոյ. և որոց արժան է զեկեղեցւոյ ունել խնամ, 'ի գործս աշխարհական և 'ի տուրեւառս պարապեն. յափշտակեն զինչս այլոց, կաշառակուրծ լինին անօրէնութեամբ. երդնուն սուտ, սեղանակապուտք, որ վասն պատարագեացն կագեն, որք զխորհուրդս 'ի վաճառ ածեալ ձգեն։ Բ՚ահանայք այդպիսիք եթէ ընդ տեառն իւրեանց և Ս՚ստուծոյ այսպէս քաղաքավարիցին, զիարդ ապա զմերձաւորաց իւրեանց ունիցին խնամ. մանաւանդ թէ որպիսի՞ աղիտից չլինիցին պատճառք։ Զ ակն 'ի մեծութիւն եդեալ՝ հարստահարեն

զաղգակիցս, և զաղքատս թողուն անայ-
ցելուս. քանզի զասր նոցա խնդրեն, և
յաղագս փրկութեան նոցա չունին փոյթ
յանձին. վասն որոյ զապաշխարողսն ոչ
խրատեն դառնալ յուղղութիւն, այլ
մանաւանդ փութաջան խնամովք տան
զարձակումն՝ զի մի գժդմնեսցին, և 'ի
սովորական տրոցն և յողորմութեանց
կարձեսցեն զձեռս։ Եթէ յայսպիսեաց
տակի եցես և դու, զահի զամօթի հար-
կանիջիր. իսկ եթէ չեւ հասեալ յայդ
սահման չարեաց՝ երկիր 'ի մօտալուտ
վտանգէն. քանզի և մին յերկոտա-
սանից Յուդաս 'ի փոքունց սկսեալ՝ և
ապա իբրեւ զաչացու և յամառեալ 'ի
չարիս և ինքնադատապարտ մեռաւ։

գ. Ինդէր եցէ քեզ, սիրեցեալ որ-
դեակ, վասն դոյզն կաւոյ և տղմոյ կո-
ղուսանել զժամանակ, զհանգիստ, զպա-
տիւ և դնել 'ի վտանգի զհոգի քո։
Օ՜ինչ մխիթարութիւն եցէ քեզ այդ
զի յօրհասիդ ժամանել տեսանիցես
զտուն և զաղգատոհմն քո մեծացեալ
բարեօք և զանձն քո թափուր 'ի գոր-
ծոց բարեաց. զի՞ է զի խրատեալ յինէն
դանձել զանձս յերկինս ուր ոչ ցեց և
ռուտիճ ապականեն և կամ գողք ական

հատանեն և գողանան, դարձեալ երկ-
րաւորացն լինիս 'ի խնդիր։ Հայեաց
յիս և յառաքեալսն իմ և 'ի նմանիս
նոցա, որք յամենայնէ մերկացեալ անոք
անօգնական ընթացան զհետ իմ։ Օ՜նոյն
և դու արա. շատացիր կարևորօքն, և
այլ ինչ եթէ յաւելուցու՝ յօգտակար
պէտս ծախեա. և այնպէս երկնից ար-
քայութեանն լինիցիս ժառանգակից։
Բաբէ, քանի երջանիկ է աղքատու-
թիւն, և զի՛արդ թշուառական մեծու-
թիւնն։

Հրահանգք

Բազում այն է զի որք զակատեալ են
զհետ ընչից, յանառակ շուայտութիւնս
հատանին և 'ի զբօսանս անպատկանա-
ւորս։ Զգահել յինչս և կամ վատնել
զնոսա յանարժանս, վատանուն առնեն
զայր քահանայ, և 'ի կործանումն են
անձին նորա։ Զ՝ան որոյ այժմէն փոյթ
յանձին կալցիս՝ քաւել զմեղս քո զան-
ցեալս, և յառաջիկայիցն զգուշանալ.
եթէ վէճս ունիցիս, սիրեա զխաղաղու-
թիւն. եթէ ծախս 'ի քեզ տեսանես ա-

ելորդս, կարՃեա. և սահմանեա տալ տուրս ողորմութեան ըստ կարի քում։ Պրոշմեա 'ի սրտիդ զբանս սրբոյն Փիլիպպոսի Երեան զի թէ որ ինչս խնդրէ, չկարէ ունել զհոգի. և որ զհոգիս խնդրիցէ, արժան նմա հրաժարել յարծաթասիրութենէ։ Յաւելու. ասել և երանելին Աղեքսանդր սաւլեան. "Եթէ ժողովուրդն տեսանիցէ զօրացեալ 'ի քեզ զընչաքաղցութիւն, թէպէտեւ աքանչելիս գործեսցես, սակայն ոչ հաւատայցէ"։

ԺԲ

Ամբարտաւանութիւն։

Ա. Պաշտօն քահանայութեան ոչ խնդրէ 'ի քէն զծուխ հպարտութեան, այլ զսէր խոնարհամիտ առ 'ի ծառայել ժողովրդեան, սպասաւոր լինելով հոգւոց և կեցուցանել զնոսա։ Օ խորդ մարթիցի ամբարտաւանութեան կալ ընդ ձեռով խոնարհութեան, թէր կա-

ըստացես ծառայել մարդկան առ մարդա-
հաճութեան առանց օգտելոյ նոցա, և
'ի վնաս անձինդ, կամ մտադիր պարա-
պել յայնպիսի վաստակս որ քեզ պայծա-
ռափայլ թուիցին։ Զ. Մբարտաւան բար-
ձրամտութիւն քո հրաժարեցուցանէ
զքեզ լինել աւետարանիչ աղքատաց ի-
մոց, այլ առ մեծատունս միայն յաձա-
խել քաղցրաբան մարդելուզութեամբ.
վասն որոյ և երկնչիս յանդիմանել զնոսա
վասն մեղաց իւրեանց, զի մի անհաճոյ
յաչս նոցա երևեսցիս. և զի յաղքա-
տաց՝ երկրաւոր բարեաց չունիս ակն,
վասն որոյ ոչ իբրեւ զհայր բազմագութ,
այլ իբրեւ բռնակալ հարստահարես զնո-
սա. ոչ մայրօրէն խնամես, և դայեկաբար
զհոգիս մնուցանես, այլ գազան ես ա-
հացուցիչ և գիշատիչ։ Յարհամարհու-
թիւն անձին համարիս ուսուցանել
զքրիստոնէական վարդապետութիւն,
հրահանգել զաղքատ շինականս, յայց
ելանել բանտից և հիւանդաց. քանզի
յամենայնի զփառս անձին խնդրես։
Զ. Ո՛հ, որդեակ, քանի՞ մեծ է կուրու-
թիւնդ զի չունիս 'ի յարդի զիմ խոնար-
հութիւն զպանծալին զարդ քահա-
նայութեան քո, և 'ի հպարտութիւն
շրջես զպաշտօնն խոնարհութեան։

Բ. Զինչ օգտեսցեն քեզ 'ի կատարածի մարդահաճութիւնք, և գովեստք աշխարհականք։ Զի ոչ եթէ համարեալն յաչս աշխարհի ելցէ մեծ, այլ զոր ես լաւ վարկանիմ։ Այլ դու առ հաճոյ լինել մարդկան՝ անհաճոյ լինիս յաչս իմ, եղեալ ես 'ի սրտի փառաւոր առնել զանձն քո պերճութեամբդ 'ի բանս, 'ի զգեստս և 'ի կենցաղավարութեան, և ոչ գիտես թէ առաւել անպատիւ զքեզ առնես. քանզի համարին զքեզ բանակռիւ, յանդուգն, գող և աւազակ, յափշտակիչ և վատնիչ ընչից Քրիստոսի, և աղքատաց նորա. յամառեալ և լի հողմով ունայնութեան աշխարհի, և կանացի բարուք. և պարզաբար այնպիսի, յորմէ պարտ էր քեզէն շառագունել։ Ցես միանգամ զիսոնարհս իմ, զի ոչ խնդրեն զիւրեանցն, այլ զփառս տեառն. ուրպէս փարթամացեալ են գործովք բարեաց և մեծանուն յաչս աշխարհի, սիրեցեալք և փառաւորք վասն ցածուն համեստութեան իւրեանց, և բարուցն քաղցրութեան։

Գ. Ո՞ւստ յանձն քո, և տես եթէ 'ի քանի՞ բարեաց զրկես զքեզ. և ուր-

չափ մեղս մեղանչես ատելութեան, անհնազանդութեան, անիրաւութեան, սիմոնականութեան, անհամեստութե, կեղծաւորութեան և գայթագղութե։ Նա զիարդ յետս կացցես 'ի մեղաց այ-տի, և ուղղեսցես զանձն քո, եթէ զյանդիմանիչն ատիցես և զխրատիչս, և ծաղր արարեալ այպանիցես։ Զդոյշ լեր, մի արդեօք առ խոնարհեցուցանե-լոյ զքեզ Թոյլ տաց քեզ անկանել յաղ-տեղի անհամեստութիւնս և 'ի հաւա-տոց իսկ ելանել. որպէս այս անցք անցին ընդ բաղում ամբարտաւանս. և յայն ողորմ պայման հասանիցես, զի այլ ինչ ոչ կարիցես առնել, բայց պարծիլ և խըն-դալ ընդ գլորելդ և ընդ անօրէն վարս, և ընդ չարաչար ազատութիւնդ։ Մեղք քո և արդարութիւն իմ նկուն արասցեն զքեզ, և յօժարամիտ յուղղու-թիւն։ Այլ թէ ոչ, գիտեա զի որպէս չինայեցի յարուսեակն, ոչ ինայեցից և 'ի քեզ։ Յորչափ ամբարտաւանիցես՝ ես եղէց քեզ հակառակ. իսկ եթէ խոնարհ լինիցիս Ճշմարիտ և հաստա-տուն փութով, շնորհօք իմովք Ճոխաց-ուցից զքեզ։

Հրահանգք

Խաղաղութիւն կալջիր ընդ ամենեսին, և մի տար տեղի բարկութեան. Ուստուծոյ է զվրէժ խնդրել, այլ դու յաղթեա բարեաւն չարին։ Ուռաւելապէս զայդ խաղաղութիւն պահեսցես ընդ ընտանեակս, և ընդ այլ քահանայս։ Սիրեա զխրատիչն քո, և մի լինիր յանձնապաստան։ Մի զոք անգոսներ, այլ արհամարհեա զանձն քո. խոյս տուր 'ի փառաց, սիրեա զխոնարհագոյն պաշտամունս։ Սուրբն Կիպրիանոս վկայ և սուրբն Պաւլինոս նոզայեցի ականաւոր և հոյակապ անձինք ոչ ինչ ամօթ համարեցան աւել ածել տան տեառն, և սուրբն Մելան եպիսկոպոս յարդարէր զձրագունսն։ Մի խնդրեր զմեծ բարձ և պատիւ, այլ զմեծ առաքինութիւն։ Մեծարգոյ ծերանաւորն Ռելլարմինոս ասէ եթէ քաղցումն գտի յամենայն ժամանակի զսուրբ անձինս ողբ հրաժարեցին և փախեան, և բռնի եթող յանձն առին զաշտիճան պատուոյ. այլ ոչ երբէք մարթացայ գտանել զմի և եթ, որ զայն խնդրիցէ կամ ցանկանայցէ։

ԺԳ.

Մահ:

Ա. Յուշ ածցես, որդեակ, զի առաջի կայ քեզ մեռանել։ Զու ինքնին մերձ կաս որոց 'ի հոգեվարս լցեն և կամ յաշխարհէ հրաժարեալ, պատարագ մատուցանես վասն ննջեցելոց. և չածիցես զմտաւ թէ յետ սակաւուց զնոյն ունիցին առնել և ընդ քեզ։ Ա. պաքէն և քեզ կայ մնայ դնիլ հրապարակաւ յեկեղեցւոջ. ամփոփիցին առքեւ նշանակք քահանայութեան, և թաղեսցիս արժանաւոր պատուով. և ասիցեն մարդիկն, եթէ մեռաւ այս ոք քահանայ զուարթ և աշխարհասէր, և 'ի ձայն վերջին զանգակի անհետասցի յիշատակ քո յերկրէ։ Բարձ քո և պատիւ, և հանդերձք և սպասք և դիւրութիւնք, զոր վասն անձին քո պատրաստեցեր, ումն լինիցին. այլ այնմ՝ որ չիցէ փոյթ յիշել զքեզ, և վայելեսցէ յինչս քո զորոց զու այնչափ հոգ խնամոց կալար յանձին։

Եթէ մարթ էր քեզ յետ ամաց ինչ միւսանգամ դառնալ՝ի կենդանութիւն, տեսանէիր անշուշտ զամենայն ինչ զքո վատնեալ և ցրուեալ։ Արմինդ քո գիրգ և փափկասուն, լինիցի՝ի Ճարակ որդանց։ Եւ կարևոր անգամ բարեկամք քո և սիրելիք յետ մահուանդ և ոչ զմի գիշեր կարասցեն ննջել՝ի քում սենեկի առ դիակնացեալ մարմնոյդ։ Ա՛հ, զի՞նչ լինիցի ընդ հոգի քո։

Բ. Ի հասանել օրհասին, և՝ի կատարած առնուլ աշխարհի վասն քո, վախճան առցէ և ամենայն խաբէութիւն։ Ի լոյս Ճրագի զոր՝ի մնարիցս քոց դիցեն, զի՞նչ երևեսցին յաչս քո մեծութիւնք, հաճոյք, փառք և մարդկային ակնածութիւնք, զորոց այնչափ հոգ յանձին ունէիր։ Խոստովան լիցիս անշուշտ, թէ ամենայն ինչ ունայնութիւն է և զբաղումն չար։ Օ՜ ինչ օգտիցէ քեզ յայնժամ գիտութիւն սընոտի և Ճոռոմաբանութիւն, եթէ թափուր իցես՝ի գործոց բարեաց։ Արհամարհ թուեսցին յաչս քո որ բարեկարգ կենաց և առաքինափայլ վարուք քաղաքավարեցան յաշխարհի, եթէ նախանձ ընդ նոսա բերցես տեսանելով եթէ

զիարդ վաղանցուկ և ընդունայն է աշխարհ։ Բանիք ոմանք 'ի սպասաւորաց բանին նրբամիտք և քարձրամիտք 'ի յետին անդ պահու 'ի միտ առեալ զմեծութիւն լուսաւորութեանց, շնորհաց, և պարտեաց և մեղաց իւրեանց՝ ցնորեցան 'ի մտաց յուշ ածեալ զթերութիւնս իւրեանց. այլ իբրեւ զՆտիոքոս և զՅուդաս անապաշաւ կենօք ելին յաշխարհէ, տալ զհամար չարեաց գործոցն իւրեանց յարդարադատ ատենին։

Դ. Ի վայրկեան ժամանակի տեսցես զանձն քո մերձեցեալ առ սեամն դրանց յաւիտենականութեան։ Ո՛հ, ի՞նչ թէ չէր քո ծախեալ զժամանակդ 'ի դատարկութեան նստելով 'ի լսել նորալուրս, շրջելով տանէ 'ի տուն, 'ի համախմբութիւնս և 'ի զրուցաբանութիւնս, կամ 'ի գործս՝ որ չէին անկ եկեղեցականաց, այլ պտղաբերեալ գործովք պաշտօնակցաց քոց, և քանի՞ խնդութիւն ունէր զքեզ յայնժամ։ Յանկանալով ցանկասցիս ունել զմի օր յաւուրց անտի կորուսելոց, կամ դէթ զմի ևեթ ունել ժամ առ ընդունել զթողութիւն, զշընորհ, որով և զփառս։ Բայց ոչ ոք լուի-

ցէ քեզ. պարտ էր չվատնել զժամանակն մինչդեռ 'ի քո ձեռս էր։ Ընդ իտանայիր թէ զինչ գործեսցես, յորժամ երկայնեալ ձգէր տիւն, և ոչ 'ի վերայ գայր երեկոյ. իսկ այժմ վճարեալ է ամենայն. և միթէ միսիթարեսցիս։ Օ մըտաւ ած զի եթէ այժմ հասցէ քեզ մահ, որպէս արդեօք գտանէիր զանձն քո։ Ընդէր չապահովէս զանձն՝ առնելով անդանդաղ զայն ինչ, զոր կամէիր յայնմ պահու թէ արարեալ ւոցէ քո։ Այս կանուխ ազդեցի քեզ, և արդ երկրորդեմ որպէս հայր բարեգութ. գործեա զբարին, մինչ չեւ պակասեալ ւոցէ քեզ ժամանակն, մինչ չեւ արհաւիրք յաւիտենականութեան հասեալ պաշարիցեն. յայնժամ գայ զիշեր, յորում ոչ կարիցես գործել։

Հրահանգք

Խորհեաց, զի եթէ այժմ իսկ հասցէ քեզ մեռանել, ունիցիս ինչ արդեօք խայթ խղճի. և վաղվաղակի 'ի բաց արա զայն 'ի քէն։ Հատո զոր պարտիսդ, հրաժարեաց 'ի տանէ անտի և

յազգատոհմէ որ լինի քեզ 'ի գայթակ-
ղութիւն, և յորոց 'ի սոցին սակի։
Ատիր 'ի խոստովանութիւն, պա-
տարագեա և հաղորդեսջիր իբրու եթէ
զվերջինդ առնուցուս թոշակ, և սսա
անձամբ անձին զաղօթս զոր այլք յա-
ւանդեալ զհոգիդ մատուցանիցեն։ Ուրբն
Ադամնդոս արքեպիսկոպոս Կանտաբ-
րիոյ տեսեալ զանձն մերձեալ 'ի դրունս
մահու՝ մեծափափաք սիրով խնդրեաց
ընդունել զխորհուրդն սուրբ. և համ-
բարձեալ զձեռս առ տէր և ասաց հա-
ռաչելով. Դու այն ես, յոր հաւատա-
ցի, զոր քարոզեցի. դու ինքնին վկայես,
զի զքեզ միայն խնդրեցի յամենայն 'ի
կեանս իմ. ոչ իմիք ցանկացայ, և ոչ
ցանկանամ, բայց զի արարիցս յամենայ-
նի զկամն քո, Ն.ստուած։

ԺԳ

Դարձեալ յաղագս մահուան :

Ա. Դու ինքնին գիտես, որդեակ, զի որպէս կեայ դու, նոյնպէս և մեռանի : Այլ ես ասացի քեզ, եթէ պատուաւ-կան է առաջի տեառն մահ սրբոց իւրոց : Բազումք 'ի սրբանուէր սպասաւորաց քանին 'ի մեռանել եկեալ՝ գոչեցին սրբ-տակաթ եթէ ոչ գիտէի թէ այսչափ քաղցր ելցէ մեռանել : Օ՜ իսկզդ սքան-չելի է մեռանել յորժամ՝ դու 'ի կեանս իւր վաստակեալ տքնեցաւ 'ի փրկու-թիւն հոգւոց : Բայց և քանի դառն է մահ մեղաւորին և որոց 'ի մեղս և 'ի դատարկութեան մաշեցին զաւուրս իւ-րեանց, զի մերձեցեալք 'ի մահ նզովիւք նզովեցին զօրն յորում ծնան, և զժամն յորում մատեան 'ի սպասաւորութիւն սեղանոյն : Դու ցանկաս մահուան արդարոց . այլ զիսկզդ գտանիցես զայն թուլամորթ կենդանի վատթարաց : Օ՜ի է զի ոչ հաւատս ընծայես սպառնա-

լեաց իմոց և աչաց քոց գլխովին որք տեսին զմխիթարութիւն սրտի բարեաց, և զանմխիթար վիճակ չարաց 'ի պահու անդ։ Օ այս ամենայն դու ինքնին ասես այլոց և քարոզես. և միթէ այլ աւետարան ունիս վասն քո, այլ օրէնք, և այլ գիրք։ Ո՞ւ իմ՞ այնպիսի կեանս վարես, զորոյ ճանաչես և խոստովան լինիս զչարութիւն և թէ ոչ տայ քեզ քաջալերս առ 'ի մահ։

Բ. Ալ թէ որ սկսանիցի՝ բարիոք մեռանի, այլ որ տևեալ հանապազորդէ մինչեւ 'ի մահ։ Ո՞ւ բարւոք մեռանել պէտք են ունել զառանձին պարգեւ վախճանական շնորհաց իմոց։ Մի յանյուսութեան դեգերիր, բայց միանգամայն յիշեա զի Յուդա կոչեցեալ յինէն յառաքելութիւն, բարւոք սկսաւ և չարաչար վախճանեաց։ Յուշ լիցի քեզ, զի սակաւք 'ի քահանայից կեան ըստ արժանեաց, վասն որոյ և սակաւք մեռանին ըստ բաղձանաց։ Յուշ լիցի քեզ, զի յոլովք 'ի քահանայից թէպէտեւ սուրբ գտան, այլ երկնչէին և դողային զի մի՛ չարւոք մեռանիցին։ Այսպա աբիացիր և բուռն արա անձին քում. և սուրբ ահիւ և դողութեամբ գործեա

զփրկութիւն անձին յաշխատութեան, 'ի վաստակս, և յողորմութեան, 'ի մեռելութիւնս, 'ի պահս, և յանարատ ողջախոհութեան. իսկ եթէ անեռանդն և աներկիւղ լիցես և չունիցիս փոյթ ուղղել զանձն քո, այնուհետեւ արժան է և ինձ մոռանալ զսէր իմ և յանգիւտ կորուսան զքեզ առաքել։ Բազում ժամանակք են զի սպասեմ քեզ. և դու թէպէտեւ ըղձանայցես զբարւոյ զհետ երթալ, սակայն ոչ կարես տեսել 'ի նմին։ Հապա, վասն զի մահն ոչ սպասեալ մնայ ամենեքեան զքեզ յայնմ աւուր և 'ի ժամանակի յորում 'ի շնորհս լիցես և յեռանդան, քանզի յորում ժամուն ոչ ունիցիս, գայ ոչդի մարդոյ։

Գ. Մի անգամ միայն լինի մեռանել. եթէ ոչ բարւոք մեռանիցիս զայն նուազ, եղծեալ քեզ. անհրաժեշտ կործանումն կայ մնայ քեզ։ Ի վերայ խաչի մեռայ ես, զի և դու մեռանիցիս զբարիոք մահ. կարող էի յանկարծամահ զքեզ առնել, և մահու հարկանել 'ի մեղս, այլ որպէս հայր բարեգորով խնայեցի 'ի քեզ՝ մնալով դարձի քում։ Վերատին ազդ առնեմ քեզ. պատրաստ կաց, զի ոչ գիտես զօրն և ոչ զժամն։

Կարի անագորոյն ես ընդդէմ անձինդ, և ապաշնորհ առ տէր եթէ յապաղիցես և զմի վայրկեան զդարձդ առ իս։ Դաջ խորհեալիր որդեակ, զի չիք տարակոյս թողութեան զոր քեզ առաջի առնեմ և խոստանամ, եթէ այսօր զղջացիս, եթէ յայսմ ժամու ՀՀմարտապէս'ի դարձ և յուղղութիւն գայցես. այլ ոչ խոստանամ քեզ, և մի՛ յապահովի լինիցիս վասն վաղուեան դարձի քո։ Թ միտ առ զիմ փոյթ խնամոց վասն բարւոյ հոգւոյդ նաեւ յայնմ զի անստոյգ թողի զժամ մահու քոյ. որպէս զի անտեղեակ գոլով յամենայն ժամ'ի պատրաստի իցես։

Հրահանգք

Իրաւ արա ընդ Աստուծոյ և ընդ ընկերին։ Արա զկտակ քո, ըստ խրատու սրբոյն Աւգոստինոսի, յառողջութեան քում. կտակեա զՀոգիդ Աստուծոյ, զմարմինդ հողոյ և զինչսդ ժառանգողին։ Ուղղեա զընթացս կենացդ այնպէս որպիսի կամիր լինել'ի պահու մահուանդ առանց ամօթոյ առաջի Աստու-

ծոյ և մարդկան և անձինդ գլխովին. և արա անյապաղ՝ զոր կամիցիս առնել յայնմ ժամանակի։ Ոչ մեռանի յանկարծ, որ միշտ կայ 'ի պատրաստի և հանապազ զմտաւ ածիցէ թէ կայ մնայ նմա մեռանել։ Արանելին Գրիգոր Պարպառիկոյ յընդունել անդ Ջերմեռանդն փափաքանօք զսուրբ խորհուրդն և 'ի յիշել զդատաստանն Աստուծոյ, որում յետ սակաւուց առաջի կայր նմա յանդիման լինել, լցաւ երկիւղիւ և դողութեամբ, և ամբարձեալ զձեռս և զաչս յերկինս, լալագին ձայնիւ երկրորդէր. Ա՛հ զի՞նչ լինիցի ընդ իս. և հարուստ մի ժամն կրէր զտագնապ յերեսաց ահի սաստկապահանջ սատենին, մինչեւ յետոյ ուրեմն երկիւղն այն փոխեցաւ 'ի խաղաղութիւն։ Օ՜ զի՞նչ լինիցի և ընդ քեզ։

ԺԵ

Դատաստան :

Ա. Յատենի խմբում և աշխարհիկք տաստիկ համարս պահանջեսցին. և զինչ ապա դու որդեակ, որ եաս մեծամեծ պարտեաց ես պարտական։ Ասացից քեզ յայնմ պահու։ Մատիր այսր առ իս, ոչ միայն որպէս մարդ և քրիստոնեայ, այլ և որպէս քահանայ՝ զօրինաց խնոց, զաշտիճանիդ, զպարգևացս և զքոյոցդ պաշտամանց, և զանձին և զօտարին մեղանաց տալ զհամար։ Ցուր ինձ համար զամենայն չարեացդ զոր գործեցեր. և 'ի լոյս պայծառ երևեսցին յայնժամ մեղք քո բազմապատիկք գործեալք 'ի քէն. և 'ի դատաստանէ խմբէ ոչ ելցես արդարացեալ. տուր զհամար ոչ միայն զյանցուածոցդ, այլ և զայլոց որոց եղեր պատճառք մեղանչելոյ չար օրինակօք, խեղկատակութեամբք և խրատտուութեամբք. կամ զորս առ պղերգութեան

կամ մարդկային ակնածութեան չարդելեր որպէս պարտն էր՝ և ոչ 'ի չարեաց զգուշացուցեր։ Զուր զհամար ամենայն բարեացն, զորս պարտէիր առնել, և զանց արարեր, կամ չարաչար գործեցեր։ Այլ 'ի հանդէս յահեղ ատենիս, որպէս մտեր յուխտ եկեղեցւոյ. որ խորհուրդք էին սրտի քո, և որպէս պահեցեր, լցուցեր և մատակարարեցեր զտնտեսականս, զկտակս, զբարեպաշտական հասս, զինչս եկեղեցւոյ. և զիարդ կեցեր 'ի քահանայութեան կարգի։ Զուր զհամար ուսմանցդ և զՔանից, զպատարագաց, և զբարի օրինակիդ, զհրահանգաց, զքարոզութեան, զխրատուց, զյանդիմանութեանց։ Այլ եթէ հայր խոստովանութեան եղեր, որպէս ժողովեցեր առ քեզ զհոգւոյ որդիս. որսացար եթէ ուծացուցեր 'ի քէն. օգնեցեր նոցա փութով խնամոց և ողորմութեամբ եթէ մարդկային ակնածութեամբ. որպէս հարցեր, ազդ արարեր, բուժեցեր կամ արձակեցեր զտգէտս և զ'ի մեղս սովորեալս։ Այլ եթէ առաջնորդ եղեր, որպէս տքնեցար և պահեցեր և աղաչեցեր զհաւատացեալ քեզ ոգիս։ Արինչդեռ ժամանակն 'ի ձեռս է քո, խնամ կալ իրացս. այն զի կարի սուղ է

ժամանակդ։ Եթէ այսօր, յայսմ պիշերի հասցէ քեզ մահ, և կոչեցիս զքեզ տալ զհաշիւ, զի՞նչ լինիցի ընդ քեզ։

Բ. Մ՛ըշափ քահանայք առ անպիտանութեան եւեթ իւրեանց դատապարտ լինիցին։ Բանիք՝ ի քոց պաշտօնակցաց ասիցեն ցիս. Տէր, ո՞չ յանուն քո քարոզեցաք, մարգարէացաք և դեւս հանաք. և յանուն քո բազում և մեծամեծ զօրութիւնս սքանչելեաց արարաք։ Բայց առ նմին լուիցեն, եթէ՝ ի բաց կացէք յինէն ամենայն մշակքդ անիրաւութեան. զի ես զձեզ ոչ երբէք որպէս զիմն ծանեայ։ Եթէ ոչ շինես յիմ վերայ իբրեւ յոսկւոյ զտոյ զառաքինութիւն Աշխարհիս, յարդն անպիտան և գեղեցիկ տերևք առերևոյթք չարժեն ինչ յաւուրն յայնմիկ։ Եթէ՝ ի դատելս և արդարք իսկ հազիւ կեցցեն, զի՞նչ լինիցի ընդ քեզ ընդ մեղաւորդ և ընդ ամպարիշտ։ Որում՝ շատ տուաւ, շատ խնդրեսցի առ՝ ի նմանէ։ Որ Աստուածալոյ առ յինէն ընտիր պարգևօք, որ ունէիր զայնչափ ժամանակ և զլոյս հնարհաց, և զհանճար և զգիտութիւն և զաստուածեղէն զոգցես իշխանութիւն, կամէիր արդեօք զի պարգեւք իմ դարձցին լինիցին յա-

ութիւն դժնդակագոյն դատապարտու-
թեան։ Որ առաւելեալն է 'ի ձեզ
ճրիւք, առաւել սաստկապահանջ դա-
տեսցի, զի հզօրք հզօրագոյնս պահան-
ջեսցին, և 'ի վերայ զօրաւորաց՝ զօրա-
ւոր քննութիւն հասանէ։ Եւ զինչ
ընդ քեզ լինիցի, որ սրբանուէր պաշ-
տամանդ մեծ ես քան զամենեսին, և
դահագլուխ ամենայն հզօրաց։

գ. Օ՛ խարդ 'ի չքմեղս լինիցիս յա-
հաւոր դատաստանին։ Օ՛տգիտութիւն
արդեօք ինձ 'ի դէմն բերցես, վար-
ժեալդ 'ի հրահանգս վարդապետու-
թեան։ Ա՛յլ դպրոցք, մատեանք և բեմն
յաղթահարեսցեն զքեզ վասն քոյոյ
անգոսնելի անգիտութեան։ Օ՛տր-
կարութիւն արդեօք պատճառիցիս։
Ա՛ինթէ կարիցեմ ասել յայնժամ, թէ
պակասեցին քեզ զօրութիւն և հան-
ճար. մինչդեռ զայնչափ քահանայս և
զաշխարհականս տկարս քան զքեզ, որոց
տակաւ էր դիւրութիւն, և յոլովագոյն
փորձութիւնք, տեսանիցես զի արարեալէ
նոցա բազում բարիս վասն անձանց և
վասն այլոց. կամ թէ կարող լիցես ա-
սել յայնժամ, թէ այլք եւս պաշտօնա-
կիցք իմ իբրեւ զիս քաղաքավարեցան։

Մինթէ խրատք և աղաչանք աշխարհասիրաց կարող էին ապրեցուցանել զքեզ, յորժամ տեսցես զբազմութիւն չար խորհրդատուաց և խեղկատակաց 'ի կորուստ մատնեալ։ Ապացի քեզ արհամարհել զնոսա, և բռնադատել զանձն քո՝ չերթալ զհետ սովորութեան ունայնասիրաց, այլ սիրել զխրատս վարդապետութեան իմոյ. այլ դու ամոքեալ 'ի մտոտի պատճառանս, և 'ի մուրացածոյ հաճութիւնս՝ կամիցիս դէմ ընդդէմ սիրոյ իմոյ զդատապարտութիւն այնչափ մեծ, որչափ մեծամեծ էղէն պարտիք քո, և շնորհք և պատիւ, զորս ընկալար։

Հրահանգք

Արհամարհեա զաշխարհ և զխրատս պատուիրանաց նորա, գիտելով թէ Աստուած է քո դատաւոր։ Դատեա զանձն քո, մինչ չեւ եկեալ էցէ 'ի դատաստան ինքնին Աստուած, որ դատիցի և զարդարութիւն գլխովին, և զգործս անգամ սրբութեան ոչ ըստ դատման աշխարհի, այլ 'ի կշիռս սրբ-

բութեան սրբոց։ Սուրբն Հերոնիմոս յետ այնչափ խստակրօն ճգնութեան, և սրբակրօն կենաց՝ զործախեաց յօգուտ մեծ եկեղեցւոյ, զօրհանապազ երկնչէր 'ի դատաստանէ, և թուէր նմա յամենայն ժամ լսել զփոքն ահաւոր, որ կոչէցէ զնա յահագին ատեանն։ Սուրբն Աւգոստինոս զմտաւ ածեալ զհամարն զոր առաջի կայր նմա տալ վասն անձին և այլոց, համարէր զանձն նուաստ քան զամենեսին, և յանձն առնէր զինքն աղօթից նոցա, երկնչելով և դողալով յառաւել դատապարտութիւն գնալ քան զամենեսին յաղագս մեծագոյն պարտուցն։

ԺԶ

Դարձեալ յաղագս դատաստանի։

Ա. Անթէ չկամիցիս, որդեակ իմ, վարս արժանաւոր պաշտաման քահանայութեանդ բերել յանձին, վայ է քեզ։ Դանզի օր դատաստանին լի-

նիցի քեզ յայնժամ օր ահի և անձկու-
թեան, խաւարի և մրգի։ Զ ի երկինք
և երկիր, տարերք, և հրեշտակք, և
դեւք, և ամենայն արարածք եւցեն
խնդրել զվրէժ իմ՝ի քէն. և ամենայն
սուրբք ընդ իս մերկացին զսուսեր քի-
նու. սուրբ կոյսն Մարիամ երեւեսցի
քեզ ահագին ցասմամբ, և զաթոռ ա-
մենակալ մեծվայելչութեան իմոյ տես-
ցես որպէս թէ ՀՕՀիցէ, և իբրեւ զսայ-
րասուր նիզակ զիմ բարկութիւն սրեալ
՝ի ջաղխել և առաթուր հարկանել զքեզ
յետին սրտմտութեամբ։ Եւ որո՞վ դի-
մաք երևեսցիս առաջի իմ, մինչ դեռ քաջ
իսկ և դու գիտիցես եթէ ոչ զթութեան
այլ ցասման իմոյ իցես արժանաւոր։

Բ. Որչափ ինչ հնարեցար թաքու-
ցանել առաջի խոստովանահարց, մե-
ծաւորաց, և աշխարհի, և անձինդ, ամե-
նայն ՝ի լոյս գայցէ։ Որպիսի ամօթ իցէ
յորժամ ամբաստան լիցի զքէն խիղճ
մտացդ, և ամօթապարտ առնիցեն զքեզ
այնչափ քահանայք ընկերակիցք, և աշ-
խարհականք՝ որոց յաշխարհի կալով
սուրբ գտան, և բազմութիւնք անհա-
ւատից սակաւամեղք քան զքեզ։ Խոր-
քեսցեն զքէն աղքատք՝ ոչ չգային ՝ի քէն

տիսիութիւն, ուր դու յապեցուցանէիր զախտս քո և զկիրս, զշունս, զգայլս և զերիվարս։ Ցդէտք ոչ լուսաւորեալք 'ի քէն, մեղաւորք ոչ խրատեալք, հոգիք դատապարտեալք 'ի պատճառս քո, և գործակիցք չարեացդ վրէժխնդիր լինիցին. և նոքին իսկ վէմք բեմին բողոք կալցին վասն զանցառութեանց քոց 'ի պաշտամանդ, և վասն սեղանակապտութեանց քոց։ Ո՞ւռ եղէ ցայս վայր. այլ յայնժամ մեծաձայն բարբառեցայց, և զինչ տացես պատասխանի դառն կշտամբանացս։

Դ. Ա՛յժմ բիւր հնարս հնարիս 'ի գերեւ հանել զդատապարտութիւնս՝ ոչ որ ոց արժանի եղեր յաշխարհի. այլ յայնժամ ոչ կաշառք քո և ընծայք, ոչ պաշտպանք և ոչ բուն իսկ աստիճան քո կարող լիցեն կորզել զքեզ 'ի ձեռաց արդարութեան իմոյ. մերկացին 'ի թիկանց քոց զզգեստ քահանայութեան, և կարգընկէց արասցեն զքեզ անարգանօք յանդիման ամենայն աշխարհի։ Ո՞րպէս կոր 'ի գլուխս եղիցիս 'ի տեսանել վճարեալ 'ի քո վերայ զվճիռն ահագին առ 'ի մատնիլ 'ի տանջանս անհրաժեշտս։ Ո՞ւրդ դառն լիցէ քեզ տե-

սանել՝ի մէջ ընտրելոց և սրբոց զՀինա-
կանս և զդուէհիկս, և զՋերմեռանդն
կանայս տկարս՝ զորովք այսն արարեր և
քամահեցեր, և զմաքսաւորս և զպոռ-
նիկս զղջացեալս երթալ յերկինս, և
զբաժին քո լինել ընդ կեղծաւորս և ընդ
անհաւատս։ Կամիս ուրեմն զի որ վասն
քո զմահ դառնութեան՝ի վերայ խաչի
մեռայ, եղէց՝ի գլորումն անկանգնելի
պաշտօնէի սրբութեան սեղանոյս. կա-
միցիս զի մարմին իմ և արիւն՝ զորս բա-
զում անգամ ընկալար, լիցին քեզ յա-
ռաւել յանցաւորութիւն և՝ի մեծ դա-
տապարտութիւն։ Ո՛հ, քաւ. մի՛ զիս
բռնադատեր յամառութեամբդ՝ի դա-
տապարտել զքեզ։ Օ՜մտաւ ած որ-
դեակ, զի այսօր իբրեւ զՀայր գորովա-
գութ այնպէս խօսիմ՝ի սիրտ քո. այլ
յաներեկ աւուրն զդատաւոր քո տես-
ցես յատենի։

Հրահանգք

Տգիտութիւն, տկարութիւն, և չա-
րութիւն անարժան քահանայից ոչ ան-
պարտ լինիցին՝ի դատաստանի։ Այ-

պա այժմէն ամբաստան լեր զԹերու-
Թեանցդ, և ողբա ցաւագին զմեղս քո
զանցեալս. դիր ուխտ ընդ անձին քում
այսուհետև կեանս վարել արժանի սրբ-
բութեան պաշտամանդ. և ըստ խրա-
տու սրբոյ մեծին Գրիգորի՝ հանապա-
զօր ածցես զմտաւ և տացես անձին
պատասխանի զոր միանգամ առաջի կայ
քեզ տալ յատենի արդարադատ դա-
տաւորին։

ԺԷ

Դատաստան արդարոյ։

Ա. Որդեակ իմ, գիտեա քաջ զի
որչափ ահաւոր և անաչառ լիցի առ մե-
ղաւորս դատաստանն իմ, այնչափ ա-
ռաւել քաղցրասցի ընտրելոց իմոց։ Ա-
ԹԷ սիրեցեր զիս, և աշխատ եղեր սրբ-
բութեամբ վասն իմ, երանի քեզ. քան-
զի օրն այն լինիցի քեզ օր խնդութեան
և բերկրութեան։ Բացցին քեզ դրունք
երկնից, և դու խբրեա զսպառազէն քա-
ջայաղթ նահատակ մտանիցես ընդ այն

և լուիցես զուարթագին և աներկիւղ զքո դատաստան յարդարադատ դատաւորէ, փոխանակ զի սիրեցեր զնա, հնազանդ եղեր նմա, և հետոց նորա հետևող։ Բայց, զիարդ երանեսցես աւուրն յորում փախեար յաշխարհէ, յորում ընդդէմ դարձար խեղաթիւր բանից վարդապետութեան նորա և մահառիթ հրապուրանացն։

Բ. Պնդեա զանձն քո, և փութա լինել լուսապայծառ ջահ գիտութեան և շինութեան վառեալ սիրով և նախանձաւորութեամբ, և փայլեալ իբրեւ զաստղ, մանաւանդ թէ որպէս զարեգակն. և ես ինքնին հուչակեցից զգովութիւնս քո, որոց արժանի գտար վաստակօք քովք, խոնարհութեամբ, նախանձայուզութեամբ և սիրով աղքատաց։ Եթէ ոչ յամօթ արասցես զիս, և ես ոչ ամաչեցուցից զքեզ. և եթէ դու արհամարհելով զնոսին երկիւղ մարդկան՝ պարծանս համարեսցիս խոստովան լինել զինէն առաջի մարդկան, և ես փառս ինձ վարկայց խոստովան լինել առաջի հօր իմոյ երկնաւորի. և յամօթահար լինել ամբարշտաց և 'ի խնդրել իմ վրէժ 'ի նոցանէ,

յայնժամ ցնծասցէ սիրտ քո։ Օ որպի-
սի հաճութիւն, և ցնծութիւն ան-
պատում ոչ ունիցիս յիս 'ի փրկիչդ քո
Յիսուս, 'ի տեսանել անդ զիս տի-
րապէս և ամենակերպ թագաւորեալ,
զամենայն թշնամիս իմ պարտեալ, և
կոխան ընդ ոտիւք իմովք յերեսաց փա-
ռաց արդարութեան իմոյ։

Գ. Ընդ աշխատեա և պատերազմեա
որպէս քաջ զօրական, զի կայ մնայ քեզ
յաւուր յայնմիկ անթառամ պսակ փա-
ռաց վասն արածելոյ քո զիմ հօտ ոչ
վասն անարդ զօշաքաղութեան, այլ
առ սէր իմ եւեթ։ Եթէ զայդ արաս-
ցես, և զամենայն ինչ թողցես դալ
զկնի իմ և պինդ ունել զկոչումն քո
սուրբ, պատրաստեցից քեզ աթոռ փա-
ռաւոր, և նստցիս որպէս դատաւորա-
կից ընդ իս առ 'ի տալ զդատակնիք մարդ-
կան, և դատել զհրեշտակս զլխովին։
Այդչափ ապահովութիւն, այդչափ
ուրախութիւն, և այդպիսի յաղթա-
նակ զո՞ր փառս քեզ չխոստանան յեր-
կինս։ Եւ չիցէ՞ արժան, զի յաստիս
փոքր մի վշտասցիս 'ի փրկութիւն ան-
ձին և այլոց, առ 'ի վայելել անդ ընդ
իս յանվախճան և յանպատում փառս։

Հրահանգք

Սիրեա և արա զոր ամենայն զգործս ողորմութեան, զի և գրեալ իսկ է թէ բարձրագլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւ. և ինքն Քրիստոս խոստացաւ տալ վարձս այնոցիկ որ զաղքատսն ժողովիցեն։ Նրանելին Գրիգոր Պարպառիկոյ, ութ հարիւր հազար վենետկեան դահեկանս արծաթիս բաշխեաց աղքատաց. և իբրեւ այլք զարմացեալ գովէին զնա, ետ պատասխանի. Ա՝ այ գեղեցիկ գովութեանս, զի մեծ համարին զբանին սպասաւոր վասն չինելոյն գող։ Նա եթէ մեծաց վարձուց է արժանի ապրեցուցանել զտառապեալ ոք 'ի մահուանէ, որ վերահաս վտանգ 'ի վերայ կայցէ, քանի՞ առաւել վարձուց արժանաւոր գտանիս 'ի գուն գործելդ ապրեցուցանել 'ի յաւիտենից մահուանէն, անանցական բարեաց երկնից աղքայութեանն արժանաւորելով։

ԺԸ

Դժոխք :

Ա. Դու ինքնին ուսուցանես այլոց, թէ որչափ ինչ կրեսցէ ոք յաստիս լկանս մեծամեծս, առ յաւիտենական հրոփն ոչ միայն փոքր է, այլ և ոչինչ։ Օ ինչ լինիցի ապա վասն հիքացեալոյդ հուրն այն, որ բորբոքեալ յամենազօր արդարութենէ իմմէ, և կարգեալ առ յինէն որպէս նշանակ որոշիչ մեծի յանցաւորութեանդ քո, եղիցի հզօրագոյն խոշտանգիչ անագորոյն անձինդ քան այլոց դատապարտելոց։ Այս ինքնին ազդ արարի քեզ չերկնչել ոչ 'ի սրոյ, և ոչ 'ի մահուանէ, այլ երկնչել միայն յայնմանէ՝ որ կարողն է կորուսանել զմարմինդ և զհոգի 'ի դեհենի։ Դու որ երկնչիս նեղել փոքր մի զանձն քո առ 'ի յաղթել ծուլութեանդ և դատարկասիրութեան, և 'ի բաց թողուլ զանօրէն հաճոյսդ, որ այսօր չկարես համբերել դոյզն ցաւոց, Ջանա-

սէր լինել և առանձնակեաց և կա-
նոնապահ, զիարդ կարասցես հան-
դուրժել տոչորման 'ի հուրն ահագին,
և կիզման 'ի բոցն մշանջենաւոր։ Զէ
վաւեա բորբոքեա զքեզ հրով սուրբ
նախանձաւորութեան 'ի փրկութիւն
անձինդ և այլոց, զի մի՛ տեսցես ապա
զանձն քո շանթացեալ 'ի հուրն ան-
շէջ։

Բ. Ա՛հ, եթէ գիտէիր զմեծութիւն
երկնաւոր բարեաց, յայնժամ 'ի միտ
առնուիր զծանրութիւն չարեաց որ մնան
քեզ, եթէ 'ի յաւիտենից կենացն վրի-
պիցիս։ Դաջ խորհեաց, զի զրկին յի-
նէն յաւիտեան՝ է տանջանք մեծ քան
զահագին հրոյն. տանջանք անվախճան
և անչափ, զի զրկէ զքեզ յանսահման
բարւոյն. տանջանք այնչափ մեծ, որչափ
մեծ եմ ես։ Ո՞րդ դու որ առեր իշխա-
նութիւն կոչելոյ յերկնից 'ի վերուստ
զԱստուած քո, զիարդ զրկիցիս 'ի նմա-
նէ. որ ընկալար զիս և ձեռօք շօշափեցեր
զօր ամենայն, որպէս անջատեալ դրտ-
ցիս յինէն յաւիտեան. որ ընծայեցեր
զիս հօր իմոյ երկնաւորի, և հաղորդ
եղեր խորհրդոյ սրբոյ, զիարդ յանձն
առնուցուս ատել զիս, և ատելի ինձ

լինել յաւիտեան։ Որոցէն ուրեմն բազմութիւնք ընտրելոց յերկինս 'ի ձեռն քո արդարացեալք արեամբ իմով, և սրբեալք մարմնով իմով՝ զորս դու մաստակարարեցեր նոցա. և դու լինիցիս որպէս զՅուր մկրտութեան, որ մնքրեալով զմկրտեալս՝ յերկինս 'ի վեր առաքիցէ, և ինքն երթայ կորնչի 'ի խորս երկրի։ Որ կարգեալդ ես յօրհնել զիս զօրհանապազ, և օրհնես զայլս յանուն իմ, նզովեա՛լ լիցիս յինէն յաւիտեան, և անէծս ժայթքեսցես ընդդէմ ինձ անլուր հայհոյութեամբ։ Որ Ճաշակեցեր 'ի բաժակէս փրկութեան, կամիցիս ըմպել զբաժակ բարկութեան իմոյ։ Եւ որ այնչափ ուրախ եղէ 'ի բարերարել քեզ, և 'ի բարձրացուցանել զքեզ, հարկեցայց նոյնչափ խնդալ 'ի լինել քեզ յահագին և 'ի մշանջենաւոր գլորումն։

Գ. Որքան սոսկալի քան զայլոց դատապարտելոց լինիցին յուսահատ վայրագութիւնք քո, եթէ անձամբ զանձն դատապարտեսցես։ Յայնժամ ասիցես. ուրեմն որ ստացայ զքահանայական գիտութիւն և զլոյս 'ի Ճանաչել զիմ պարտիս առաւել քան զայլս, և ընկալայ

շնորհս 'ի կատարել զիմ մեծամեծ պարտիս, և ամբարձայ յաստուածեղէն պաշտօն՝ այդ ամենայն լուսաւորութիւնք և շնորհք և պատիւ բարձրութեան ահաւորագոյն եւս պատրաստեսցեն արդ դժոխս. զիարդ ժուժկալեալ համբերիցս նախատանացն դիւաց, որոց երբեմն ահարկու էր անձն իմ։ Այ քեզ, եթէ բողոք զքէն կալցին ծառայք և ազգականք, բարեկամք, հոգևոր որդիք, ժողովուրդք, և մի եւեթ հոգի ընդ քեզ և վասն քո դապարտեալ։ Աղուկ քեզ, զի յայնմ աւուր զմեծ աղէտս քո տեսեալ անէծս ցաւագինս հանցես, փոխանակ զի 'ի տէրութեանն կոչեցար սպասաւորութիւն։ Այլ աղէ ողորմեա անձին քում, և դարձո զսիրտ քո 'ի Ճանապարհս սրբութեան։

Հրահանգք

Չմոռք կենդանւոյն 'ի դժոխս, զի մի երթիցես անդր յետ մահու, որպէս խրատ տայր երանելին Բեռնարդոս։ Սուրբն Յովհան Ոսկեբերան հանա-

պաղ առաջի աչաց ունէր զնկար ինչ պատկերի դժոխոց։ Յուշ լիցի քեզ, զի անպիտան ծառայն՝ թէպէտեւ չէր քահանայ, այլ զի ոչ շահեցոյց զարծաթն հաւատացեալ՝ մատնեցաւ 'ի խաւարն արտաքին։ Բազում ինչ պահանջէ պատիւ քահանայութեանդ, և 'ի դատապարտիլ քում այնչափ աՀէ ծանրութիւն պատուհասիդ, որչափ մեծ է պատիւն որ քեզ շնորհեցաւ։

ԺԹ

Վտանգ դատապարտողիւն։

Ա. Բազ խորհեսջիր, որդեակ, և 'ի միտ առ, զի չիք ինչ յաշխարհի այնչափ դիւրին, հեշտալի և հաճոյական կարծեցեալ՝ որպէս վիճակ հովուի հոգւոց, քահանայի և սարկաւագի, եթէ յարտաքինն եւեթ նայեսցի ոք 'ի հանգամանս, և խելամուտ լիցէ աշխարհի չարեացն և վտանգաց. բայց եթէ քահանայն ոչ ըստ պարտեաց քա-

զաքաւարիցի, չիք ինչ աւելի գժուա-
րին և տարժանաւոր և վտանգալից քան
զայն պայման կենաց։ Արդ գիտեա զի
բազումք զանձինս խնդրեն, և ոչ իւիք
զիս։ Յոլով են քահանայք յեկեղե-
ցւոջ, այլ սակաւք առաքինակրօնք։ Ի
յետին իսկ աշտիճանի գտանիլ ուխտի
եկեղեցւոյ երկիւղալի է և սարսափելի։

Բ. Կաս յաշխարհի անդ, զոր ես
ստէպ և հրապարակաւ ընդ վայր հարի,
զի լի է ապականութեամբ և չարու-
թեամբ. և դու կաս 'ի նմա և թոյլ տաս
աճել չարութեան։ Այլ երկիր յոյժ,
զի մի աշխարհ հրապուրեսցէ զքեզ
յաշխարհասիրութիւն և 'ի մեղս, մինչ
դեռ քեզ առաջնորդել առաջի կայ նմա
'ի ճանապարհս առաքինութեան։ Սա-
տանայ փորձիչ է առաւել եկեղեցական-
նաց՝ քան աշխարհականաց. զի առա-
ջինքն են կերակուրք նորա ընտիրք և
ախորժականք։ Մեծապէս ջանիւք փոր-
ձեաց և խարբալեաց և զառաքեալն
գլխովին. յաղթեաց Պետրոսի յանձն-
ապաստանութեամբ, նկուն արար 'ի
սպառ զՅուդա արծաթասիրութեամբ, և
խարդաւանեաց զՆիկոդէմոս սարկաւագ
յանբերելի հերձուածս. և զայլս բիւ-

բաւորս հետզհետէ, զոր բարւոք սկսան և չարւոք վճարեցին։ Յուշ լիցի քեզ, զի մի միայն մեզք մահուչափ բաւական են 'ի դատապարտել զքեզ. և բազում ինչ որ թեթեւ 'ի ժողովրդականս թուի ցին՝ 'ի քեզ յեկեղեցականդ ծանուցք են. բազումք 'ի պաշտօնակցացդ դատապարտ եղեն, փոխանակ զի ամբարձան 'ի քահանայութիւն ընդդէմ կոչման ի մոյ, կամ զի ոչ յարդեցին զհանձար իւրեանց, և սիրեցին կալ 'ի տգիտութեան. կամ զի թէպէտեւ խնամտունք էին և կարողք օգնել եկեղեցւոյ, այլ կեանս վարեցին անշահ և անպտուղ. կամ զի հուր կուտեցին 'ի գլուխս իւրեանց վասն մեղաց այլոց, կամ զի ոչ ըստ արժանւոյն քաղաքավարեցան 'ի սուրբ պաշտամունս և 'ի գործս, կամ արտաքին կերպարանօք առաքինութեան և նախանձաւորութեան, վասն որոյ անարգեցան որպէս մշակք անօրէնք։

Գ. Այս ինքնին ծանուցի թէ անձուկ է դուռն, և նեղ ճանապարհն երկնից, և միթէ ոչ առաւել վասն քո իմանալ արժան է զայդ բան 'ի պատճառս ծանրապոյն բեռանցդ և վտանգաց։ Ցզդեցին քեզ և սուրբք ընդ Յովհաննու

Ոսկեբերանի, թէ սակաւք են քահանայք փրկութեան արժանաւորք, և յոլովք արժանի դատապարտութեան։ Տեսեր և զընտրեալս իմ զի ահիւ մեծաւ տագնապէին, թէպէտեւ էին քահանայք երեւելիք 'ի սրբութեան։ Եւ Պաւղոս գլխովին մեծն յետ այնչափ վաստակոց և քրտանց և քարոզելոյ նախանձու փառացն իմոց և շահեկանութեամբ զաւետարանն, երկնչէր զի մի անպիտան գտանիցի, և դու կելոլ կեաս, և ձեռն 'ի գօտի աներկիւղ և անփոյթ զփրկութենէ քումմէ։ Աւաղ քեզ, զի անխորհուրդդ այդ և անհոգ քաղաքավարութիւն 'ի մեծագոյն վտանգս արկանէ զքեզ։ Աղէ մի չարաչար վարեր զժամանակդ, զլուսաւորութիւնս և զշնորհս զորս քեզ պարգևեցի։ Եւ զի մեծ է յոյժ քո վտանգ, պարտիս և մեծ փոյթ ինամոց բերել յանձին։ Որոյ 'ի մտի հաստատութեամբ տալ զքեզ ինձ բոլորովին, և 'ի միտ առ զի դու և նմանիք քո պարտիք յառաջել 'ի սրբութիւն, եթէ կամիցիք յապահովել անձանց զերանելի մշտնջենաւորութիւն։

Հրահանգք

Մի վհատեցուսցեն զքեզ դժուա-
րութիւնք. անձուկ է դուռնն երկնից,
բայց մտանիցես անդր եթէ ըստ բանի
փրկչին բռնադատեսցես զանձն։ Դաջ
նաւաստի և հմուտ զօրական 'ի պահու
վտանգի ոչ վհատին, այլ առաւել եւս
վաստակին։ Մի զանգիտեցուսցէ զքեզ
տկարութիւն քո. ամենայնի կարող ես
Աստուծով որ զօրացուցանէն զքեզ։
Մի ասիցես, թէ ահա բազումք 'ի
պաշտօնակցաց իմոց զնոյն գործեն յե-
կեղեցւոջ. կեաց ըստ սակաւուց, եթէ
կամիցիս փրկիլ ընդ սակաւուց։

Ի

Ներկի մեղք :

Ա. Որդեակ, անկանիս 'ի բազմապատիկ թերութիւնս կամակար մտօք. և զի են թեթեւ ինչ յանցմունք, դնես 'ի մտի եթէ չիցեն ինչ մեծ չարիք. այլ, բաբէ, զիարդ մեծ է մոլորութիւնդ. զի չեն մեղք մահուչափ, և չառնեն զքեզ գատապարտ շանթիցն դժոխոց, չիցէ՞ քեզ պարտ անձնապահ լինել 'ի նոցանէ, և հաճոյ գտանիլ առաջի իմ։ Ո՛հ եթէ ծանուցեալ էր քո ուրչափ մեծ է տէր Աստուած, չհամարէիր զնոսին որպէս փոքունս։ Մի՛թէ չէ՞ր քեզ արժան թողուլ կորնչել ամենայնի, և մահ եւս յանձն առնուլ, քան իւիք իրօք ընդդէմ դառնալ ինձ։ Դու իսկ գիտես, և այլոց եւս ուսուցանես զայդ, և տակաւին այդպէս ընդ իս կենցաղավարիցիս, և այն ոչ մի անգամ, այլ բազում անգամ, և 'ի գործս իսկ սրբութեան։ Յաւէ ինձ 'ի վերայ տկարութեան քո. բայց ուրչափ

դիւրին էր քեզ յաղթել անձին 'ի փո-
քունս, եթէ չէր քո մերժեալ զիմ
օգնականութիւն։ Եթէ չէս 'ի փո-
քունս հաւատարիմ, և ոչ 'ի բազմին
լինիցիս։

Բ. Տես զիս 'ի վերայ խաչափայտիս,
տես ի՞նչպէս չարչարեցին զիս, և չարչա-
րեն մեղաւորք. և քեզ շատ թուիցի այն
եւեթ՝ զի ոչ վերատին 'ի խաչ հանես
զիս մահուչափ մեղօք. և ես գո՞հ գտայց,
զի ոչ առ ոտն կոխես զարիւն իմ. և մի-
թէ ես այդչափ ճշդութեամբ զքեզ սի-
րեցի։ Հայեաց, քանի՞ գութիկք յա-
մօթ առնեն զքեզ, ոյք նուազագունիւք
քան զքեզ պակասութեամբք ընթա-
նան զճանապարհն առաքինութեան.
և դու այդչափ պղերգ ես և թոյլ 'ի ծա-
ռայութեան իմում. այդ ի՞նչ մխիթա-
րութիւն քո, որով զիս մխիթարիցես։
Յիշեա, զի յանձն առի լուանալ զոտս
աշակերտաց իմոց յառաջ քան զվերջին
ընթրիս, առաւելապէս առ ուսուցա-
նել նոցա, զի որ մերձենայ 'ի սեղան
իմ, պարտի ունել զտիրապէս մաքրու-
թիւն. և դու որ ստէպ 'ի նոյն մատ-
չիս սեղան բազմապատիկ թերու-
թեամբք, և չունիցիս փոյթ մաքրել

զսիրտ քո։ Ո՞չ ապաքէն որ գիտն Հաշակէ, պարտի կեալ բոլորովին վասն իմ։

գ. Համբերող և երկայնամիտ եմ ես. բայց գիտես, զի չկարեմ անպատիժ թողուլ զյանցուածս. գիտես, զի ոչ մի արատ տեղի ունիցի յերկինս. գիտես, զի յատենի իմում 'ի համար ածցին և լոկ բանք ընդունայնութեան, որ չիցեն կարգեալ 'ի շահ բարեպաշտութեան, կամ առ արդարացի հարկ. գիտես, զի ամենայն քահանայ պարտի դատիլ անաչառ խստութեամբ քան զաշխարհիկս։ Ցես զի և Պողոսս անգամ պատժեցաւ վասն ներելի թերութեան. տես ոչչափ հոգիք չարչարին մեծ եւս տանջանօք քան զամենայն տանջանս աշխարհի 'ի քաւարանի ընդ երկար ժամանակ. տես զի և այլ բիւրք դատապարտեալ են յաւիտեան, վասն զի 'ի փոքունց աստի յանցմանց Հանապարհ ինքեանց բացին 'ի մահուչափս. հայեաց 'ի Յուդա։ Անթէ վասն իմ չէ քեզ փոյթ, լիցի վասն անձինդ քո։ Անթէ վասն ամենայն թեթեւ յանցուածոց հարկ լինէր քեզ մատնել 'ի հնոց բորբոքեալ, ո՞չ ապաքէն զամենայն փոյթ 'ի

մէջ առնուէր առ 'ի չանկանել անդր, և ոչ դնել զանձն 'ի վտանգս ահագինս և 'ի տանջանս սոսկալիս։

Հրահանգք

Յամենայն երեկոյի արա զքննութիւն խղճի. նորոգեա զառաջադրութիւնս 'ի վերայ առաւել յաճախելոցդ թերութեանց, և դիր անձամբ անձամբ ապաշխարանս ինչ վասն նոցին։ Ասա ցանձն քո, զի թէ մարթ էր ինձ միով եւեթ ներելի մեղաց ազատել զամենայն դատապարտեալսն որ 'ի դժոխսս, սակայն և այնպէս չէր ինձ արժան գործել զայն։ Ասաւել քան զամենայն ինչ մի մոռացիս յուշ ածել զայն, զի յոչինչ գրելով զփոքրն կամ զսակաւն. խարդաւանիս 'ի մեծամեծս։ Սուրբն Լ(ա)ովմաս վիլլանովացի սովոր էր ասել. զի եթէ վասն ամենայն հաւատացելոց ճշմարտեալ է բանս, թէ որ ոչ յառաջէ յաստուածպաշտութեան՝ դառնայ յետս յուղղութեան ճանապարհէն, քահանայ որ ոչ դիմէ ամենայն փութով 'ի կատարելութիւն անդր, վատ-

թարագոյն է քան զաշխարհիկ գաղջ և թուլամորթ։ Եւ սուրբն Աւգոստինոս ասէր. Յորմէ հետէ մտի 'ի ծառայութիւն Աստուծոյ որպէս չտեսի անձինս լաւագոյնս քան զորս յառաջադէմք էին 'ի կրօնի, նոյնպէս և ոչ տեսի վատթարագոյնս քան զ'ի նմին գլորեալս։

ԻԱ.

Գաղջութիւն։

Ա. Ովդեակ, 'ի մտի եղեալ ես բարուոք կալ ընդ իս, իբր զի չառնես մեզս մեծամեծս, և գործես ինչ ինչ 'ի բարեաց. և տեսեալ բազումս վատթարագոյնս քան զքեզ, մխիթարես զանձն քո ասելով ընդ փարիսեցւոյն եթէ գոհանամ զի չեմ իբրեւ զայլս ցոփակեաց, ագահ, դայթակղեցուցիչ, և սեղանակապուտ. այլ պահս պահեմ, մատուցանեմ զպատարագ, ասեմ զժամերգութիւն, առնեմ ողորմութիւն ըստ կարի։ Բայց որչափ առաւել առաջի կայր

քեզ գործել վասն անձինդ և վասն այլոց, զորս ամենևին չածես զմտաւ։ Յոլովք յաշխարհականաց և 'ի բարեպարիշտ կանանց բարեգործք են քան զքեզ. և միթէ ոչ զառաւելն պահանջիցէ 'ի քէն Աստուած։ Եւ բարին այն զլխովին՝ յոր դուդ պարծիս, զիարդ թերակատար իցէ. զի զիտուն քո յոլովակի առ թիւր վախճանս բերի, վասն որոյ և ոչ ըստ պատշաճի գործես։ Եւ զինչ սասցից զչար գործոցդ. թող նեռելի իցեն քոյդ թերութիւնք. բայց քանիպատիկ եղեն մեղք քո 'ի զգեստս, 'ի խօսս, 'ի զբօսանս, 'ի կենակցութիւնս. և զինչ եղիցի, եթէ մատեար և 'ի մահուչափ անդր. եթէ տարապայման դիւրութեամբ անսացեր չարաչար թելադրութեանց, եթէ երբեմն յերկբայս եղեր, կամ 'ի չքմեղս վասն այնպիսի անմտադրութեան 'ի ծանր ինչ չարիս, որ վասն ունէիր բաւական լուսաւորութիւն։ Խորհեաց զայդ ամենայն ով հէք և թշուառական, աղքատ կոյր և մերկ։

Բ. Որդեակ, տես յայսչափ ամ զինչ շահեցար և զինչ կորուսեր։ Ո՞ վիճակ քո և պարտք պաշտամանդ պահան-

ջեն գերազանցել 'ի սրբութեան առաւել քան զամենայն աշխարհականս առաքինիս. պարտ էր քեզ ըստ իմումն օրինակի ընթանալ ընդ ճանապարհս, որպէս եաս ընթացայ, և որպէս առաքինի իմ պաշտօնեայ լինել բոլորովին հուր. և փոխան այնր զիարդ տեսից զքեզ այսչափ անհոգ զանձնէ, և այդչափ հեղգասիրտ վասն այլոց 'ի ինաս անձինդ և նոցա։ Բանի՛ քանիք կորուսանեն զվարկ աստիճանիդ և կրծնիդ 'ի տեսանել զքեզ այդչափ անփոյթ. և քանիք առիթ առնուն դիւրամէտ լինել 'ի չար անդր ըստ քումդ օրինակի. և այլք եւս որս լինին թշնամւոյն որ սերմանէ զորոմն տգիտութեան և զախտից և հերձուածոց։ Օ՜ի՛ ոչ տքնիս բարի առնել նոցա հրահանգօք, աղօթիւք, խրատու, գործով և նախանձաւորութեամբ։ Փոքր միւս եւս և յօժարէի տեսանել զքեզ խսպառ ցուրտ, քան այդպէս գաղջ. դէթ չապրէիր այդչափ խաղաղ սրտիւ և յանհոգութեան, որ է վատթարագոյնն 'ի չարիս քո։

Գ. Եւ զիարդ լինիցի առ յապայն, եթէ ոչ զգաստասցիս. կամիցիս 'ի պահու մահուանդ յայդպիսի գաղջութեան

գտանել. միթէ չէս արժանի զի փութով
արձակեցից 'ի քեզ զմահ, վասն զի կեաս
որպէս ծառ անպտուղ՝ անօգուտ ան-
ձինդ և այլոց։ Օ՜ր հաստատ տայցես
յատենի իմում վասն այնչափ բարեաց,
զոր կարէիր առնել և չարարեր, և
չարեաց՝ զորս գործեցեր, և եթուր
այլոց եւս գործել. վասն այնչափ լուսոյ
շնորհաց զորովք ապախտ արարեր, և
վասն այնչափ ժամանակի զորս չարա-
չար վատնեցեր։ Եթէ այս ամենայն
չիցեն շատ յերկեցուցանել զքեզ, ահա-
բեկ լեր, մի՛ գուցէ մերժեսցիս յերեսաց
իմոց. կանխաւ սպառնացայ քեզ, թէ 'ի
տաղտկանալ իմում փախեցիս զքեզ 'ի
բերանոյ իմմէ և 'ի բաց առիս զգութ
իմ յորժամ անեռանդն զքեզ տեսանի-
ցեմ։ Օ՜ի գործեսցես եթէ փորձու-
թիւնք զայրասցին, եթէ խիղճ մտաց
խստասցի, եթէ լոյսն հետզհետէ
նուազեսցի. զի՞նչ լինիցի յայնժամ ընդ
քեզ։ Յիշեա զծառայն, որ ոչ յար-
գեաց, այլ թաքոյց զքանքարն. զի 'ի
բաց առի զայն 'ի նմանէ, և ծոյլն այն
ապիրատ արկաւ 'ի խաւարն արտաքին։
Անպտուղ թզենին անիծաւ լինէն չտալ
այլ եւս պտուղ յաւիտեան, և արկաւ
'ի հուրն անշէջ։ Պաշաւեա, և լեր

պտղաբեր վան քո և վան այլոց. Հուխաց զաղքատացեալ հոգիդ վերատին զգենլով զեռանդն քահանայական. զի մի երևեսցի մերկութիւն քո ծանակելի, և վախճան քո լինիցի յետին թըշուառութեամբ՝ մատնեալ 'ի պատիժ յաւէժական։

Հրահանգք

Եթէ գաղջ լցես, քննեա զպատճառան. և եթէ լցէ պակասութիւն մտածութեան, և ուղղչի հոգւոյդ, դատարկութիւն և ընչասիրութիւն, սէր անձնդիւրութեան և կարծեացդ, ցնդումն կամ զբաղումն, և ընտանութիւն ընդ աշխարհիկս, անյապաղ արմատախիլ արա զպատճառս չարեաց։ Սուրբն Ամբրոսիոս բանիւ Երեմիայ մարգարէի յուշ առնէ, զի թէ անիծեալ է որ գործէ զգործ տեառն հեղգութեամբ, հեղգն յաստուածային պաշտաման պարտի զդողանի հարկանիլ, զի մի չարաչար լիցի վախճանն։

ԻԲ

Դատարկակեցուցիչն :

Ա. Ոգեակ,'ի գատարկութեան զքեզ տեսանեմ. և այդ ինչ ընուլ անթերի զպարտս քո : Քահանայութեամբ կարգեցի զքեզ յուսումնասիրութիւն և 'ի ջանասիրութիւն, 'ի գործս նախանձաւորութեան և կրօնասիրութեան : Ոչ 'ի ձեռնադրութիւն մատուցեալ և խրատեցար յեպիսկոպոսէ նուիրել Աստուծոյ զանձն և վերակացու լինել այլոց, և քարոզել զբան տեառն. օգնական նմա լինել որպէս եօթանասուն և երկու աշակերտքն՝ առաքելոց, և պատրաստ գտանել 'ի գործս ողորմութեան. 'ի սոյնս զանձն քո գրաւեցեր յարկանել զանձամբ զզգեստ քահանայութէ : Այս այդչափ յուլաբար վարիցես զպաշտօն քո. կարծիցե՞ս արդեօք այդպէս կատարել զքո պարտիս : Գիտակ իսկ ես, զի եկից՝ յորում ժամու ոչ կարծիցես. և համար ինդրեցիս սատկապահանջ

վասն ժամանակին զոր ետու։ Զոր ինքնին եթէ 'ի ծառայութեան զոք ունիցիս, որ ոչ գողանայցէ, և ոչ անարգեսցէ զքեզ, բայց չառնիցէ զպարտս պաշտամանն, ոչ կարես հանդուրժել. և զիարդ 'ի մտի եդեալ է քո թէ որովհետեւ չգոզանաս, չհայհոյես, չարբենաս, վասն որոյ և ես համբերիցս քեզ. զի չառնելդ զբարին, չար եւս է և դատապարտութեան արժանի։

Բ. Զմտաւ ած՝ որպէս կարող էիր ձոխացուցանել զանձն քո վաստակօք առաջի իմ, լինել պատկառելի և արգոյ առ ամենեսին, և շահաւէտ յոյժ եկեղեցւոյ և կրօնիդ. իսկ 'ի դատարկութեան կալով և ցնդեալ՝ որպէս արդեամբք տեսանի, տես քանի փորձութիւնք յաձախեն և որչափ մեղք լինին։ Ո՞ քան զդատարկասէր առաւել ետ զանձն իւր 'ի կենակցութիւնս ժամավաճառս, 'ի խաղս, և 'ի շուայտութիւնս. ո՞ առաւել տրտնջող, շոգմոգ, ցոփ, և գայթակղեցուցիչ գտաւ քան զդատարկանձունս։ Այսպիսիք անպատիւ առնեն զքահանայութիւն, և համարձակեցուցանեն զաշխարհիկս ասել թէ բազմացեալ են եկեղեցականք, անօ

գուտք, և ՀԱՍԱԿԱՐՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ։ Ա՛Ն անողորմ դատարկութիւն։ Որոյ Հարակ լինի տուն Հօր քո երկնաւորի. առ ոտն կոխեալ են օրէնք իմ. եղբարք քո յափշտակին 'ի սանդարամետական գայլոց. և դու կաս և Հայիս, և ո՞չ շարժիս 'ի գութ, և ասես եւս թէ չգիտեմ զի՞նչ արարից։ Ամոյ արեան զինք խարդաւանին 'ի դժոխս. և դու չկամիս ձեռն ձգել, և ոչ զլեզու անգամ շարժել յարգելուլ զնոսա։ Ա՛Հ քանի՞ ՀԱՍԱՔԵՐ է դատարկութիւնդ։

Գ. Կարիցե՞ս ասել թէ չունիցիս ժամանակ, մինչդեռ ես ետու քեզ զայնչափ ժամանակ, ազատեցի զքեզ յաշխարհական Հոգոց և յարտաքին զբաղանաց, զի մի՛ խափանեսցեն զքեզ 'ի գոլոյ իմ բոլորովին։ Մի՛թէ պակասի՞ն քեզ կարևոր զբաղմունք 'ի պարապումն, միթէ բաց յաղօթից և յուսմանց, և 'ի Հոգևոր ընթերցմանէ, և 'ի ծառայութենէ եկեղեցւոյ չիցե՞ն քեզ բաղմութիւնք աղքատաց յանձնեալք 'ի միխիթարել, և Հիւանդք յայց առնել, բանտարգելք և տգէտք 'ի յանձանձել և 'ի Հրահանգել, և մեղաւորք առ ուղղել. թերեւս պատՃառեսցիս չունել դիւրու-

թիւն և ընդունակութիւն. բայց վայելեաս ապաքէն 'ի բարիս տանդ և եկեղեցւոյ։ Բազում քահանայք են աղքատք քան զքեզ, շինականագոյն և տխմարագոյն. բայց քանզի սիրեն զիս, վասն ոչոյ և առնեն ըստ կարի բազմապատիկ բարիս վասն անձանց և վասն այլոց։ Ոչուցէ 'ի չքմեղս լինիցիս ասելով, թէ այլք այսպէս առնեն, վասն զի բաց 'ի պատարագելոյ և 'ի ժամասացութենէ ոչ ինչ այլ հոգս ունին։ Զի՛ուկ քեզ. 'ի պահու անդ մահուանդ ծանիցես թէ յո՛ր հարկ պաշտաման ձգէին զքեզ պարգևք իմ և քահանայութիւն քո։ Զթէ մնոտալուտ գիտէիր զմահ, հանդարտէիր յանձին այդպիսի չքմեղութեամբք։ Զթէ դատապարտ գտանիս վասն թաքուցանելոյ եւեթ զքանքարն և ոչ յարգելոյ, քանիցն վասն վատնելոյդ զայն, որչափ եւս առաւել վասն պարտական գոլոյդ կործանման հոգւոց բազմաց։ Խոստովան լիցիս յայնժամ զհարկաւորութիւն, զօգտակարութիւն և զդիւրութիւն փախչելոյ 'ի դատարկակեցութենէ, այլ անագան. և փոխանակ զի ոչ կամեցար աշխատ լինել վասն մարդկան, երթիցես տանջիլ անտանելի խոշտանգանօք ընդ դեւս։

Հրահանգք

Լաց 'ի պատարագէ՝ կարևոր պատրաստութեամբ, և բաց 'ի ժամերգութենէ, սահմանեա անձինդ և զժամանակ մտաւորական աղօթից, հոգևոր ընթերցման, քննութեան, գործոց բարեպաշտութեան, սիրոյ ուսման և անձին գործոց. և փոյթ կալցիս զի դեռն մի երբէք 'ի դատարկութեան զքեզ գտանիցէ, այլ 'ի գործս յանկաւորս պաշտաման քո։ Խնայեա 'ի ժամանակդ, որ արագաթռիչ է և անդառնալի. և զնմանէ կախեալ կայ յաւիտենականութիւնն։

ԻԳ.

Ողորմնաւիրուրիւն :

Ա. Լուր ինձ որդեակ, զի եթէ գարշելիցիմ ես 'ի տեսանել զտգիտութիւն յաշխարհիկ այր, որպէս մարթացայց ժուժել այդմ 'ի քահանայն։ Որքան ի՞նչ անպատուութիւն Աստուծոյ՝ աղաչեալն ամենայն լուսոյ և ամենայն գիտութեան՝ քոյդ խաւար և անգիտութիւն։ Ի՞նչդ լինիցի ինձ ունել պաշտօնեայ զոք իբրեւ զքեզ որ ոչն գիտիցէ պատուել զիս, թող թէ տալ այլոց զիս պատուել։ Կամ պալատական զոք որ զօրն ողջոյն համարեսցի գովել զիս լոկ սաղմոսելով. միջնորդ զոք, որ աղաչաւոր առ իս մատիցէ առանց գիտելոյ զոր ասէն. և դեսպան, որ անգիտանայցէ բերել կամ իմանալ անգամ զպատգամաւորութիւնն։ Եթէ հնար ի՞նչ անքան գրաստի կերպարանել զիս յերկրի։ Ի՞նչ շահ լինէր առնելն իմ զքեզ դիւանապահ գրոց իմոց, և պա-

տուիրել ստէպ ստէպ 'ի նոյնս խորհել, և տալ քեզ զլոյս պայծառ յառաջնորդութիւն, և զզէնս զօրաւորս 'ի պաշտպանութիւն, և զանձս փարթամացուցիչս ոգւոյդ, և զփականս ամենայն բարութեանց, եթէ դու ոչ բացցես, և ոչ հայեսցիս գլխովին 'ի նոսին։ Օ՜ինչ շահ, եթէ ես ասացից ժողովրդեան դիմել առ քեզ 'ի տարակուսանս իւրեանց, և հարցանել 'ի քէն զօրէնս իմ, երբ տեսանիցեն զքեզ առաջնորդ որ ոչ գիտէ զՀանապարհն, և վարդապետ, որ և աշակերտութեան չիցէ արժանաւոր։ Արդարեւ ասեմ զի չկամիմ քահանայս տգէտս. զի չէն նոքա արժանաւորք անուան քահանայի, և ես ոչ Հանաչեմ զնոսա որպէս զիմն։

Գ. Աւաղ իմում եկեղեցւոյ. քանի՛ նպաստս վասն իմոյին գիտութեանց չետ նա քեզ՝ պատրաստելով վարդապետանոյս և վարդապետս. ՈՐքան ազատութեամբք, յառաջամանութեամբք և վեհագոյն ուսուցչօք յորդորամիտ արար զքեզ։ Պարսպեաց զքեզ պատուիրանօք, սպառնացաւ զբովանդակ զիւր և զիմ վրէժխնդրութիւն. որպէս զի մի՛ ոք 'ի հովուաց զքեզ ձեռնադրեսցէ, և մի՛ դու

իշխեսցես մատչել 'ի սուրբ կարգ յան-
գիտութեան քում, շատ համարեալ ու-
նել քահանայս սակաւս, այլ ընտիրս,
քան յոլովս և անպիտանս. կարգեաց
զկարևոր խնամն զգուշութեան և քննու-
թեան առ 'ի գիտել եթէ գիտակ ի՞ցես
մատակարարելոյ զխորհուրդս, և ուսու-
ցանելոյ ժողովրդեան զհարկաւորս 'ի
փրկութիւն, ակն ունելով թերեւս առ
'ի քէն պաշտպանութեան. և ահա այժմ
ողբայ ցաւագին անպատուեալ ամենայ-
նիւ, մինչեւ տեսանել պակասեալ զհրա-
հանգիչս քրիստոնէութեան, զվարժա-
պետս և զխոստովանահարս. վասն որոյ
և ընտրէ յայն պաշտամունս զնուազ ան-
արժանս, և ոչ զկարի արժանաւորս
յուխտ եկեղեցւոյ։ Տեսանէ զբազմու-
թիւն որդւոց զի նքողին, որ խնդրեն
զհաց հրահանգաց և սուրբ խորհրդոց,
և ոչ գտանեն զոք որ բեկանիցէ նոցա.
և որ չար է, փոխանակ հացի տան նո-
ցա զքարինս ճնասակար վարդապետու-
թեան և խրատուց. վասն զի որ ունի
զօրէնս 'ի ձեռս, և ոչ ինքն խելամուտ
է նոցին։ Տեսանէ զյոքունս, զի ան-
կեալ գնին 'ի տխմարութեան և 'ի մո-
լորութիւնս. վասն զի չիք որ ջամբեսցէ
նոցա զկաթն ողջամիտ վարդապետու-

թեան։ Յաւագին աչօք տեսանէ յոր-
դեալ զուղիս անօրէնութեան. վասն զի
բազմութիւն քահանայից կուրաց և
տխմարաց որպէս զհամերս չգիտեն բա-
նալ զբերան. յայնմ վայրի յանդիման
աչաց տառապեալ մօրն Իբրու զտեղա-
տարափ ինչանեն դատապարտ ոգիք որ-
դւոց նորա 'ի դժոխս։

Գ. Անդուկ քեզ. յինչ ծախեցեր
զայնչափ ժամանակ քո, զհանճար և
զգիւրութիւն։ Հայեաց 'ի պաշտօնա-
կիցս քո, ո՛րչափ են ձոխացեալ բարեօք
բարեվարդութեան, առաքինութեան
և վաստակոց. որքանեա՛ց օգնեցին և օգ-
նեն զօր ամենայն՝ օրինակք բարիք հա-
մեստութեան և նախանձու փառացն
Աստուծոյ։ Իսկ դու զինչ կարացեր
կամ կարես առնել վասն քո և վասն
այլոց, երբ անգիտանաս և զեղանակ
առնելոյն։ Անթէ ներհուն դտանէիր
ըստ պարտեացդ, ոչ լինէիր 'ի նշաւակ
անձինդ և այլոց։ Օ՜ ո՛րքան մեղս 'ի բաց
փարատէիր, յորքանեա՛ց 'ի բաց խու-
սափէիր վշտաց, քանի՛ փորձութիւնք պա-
կաս լինէին, քանի՛ վտանգք նուազեալ։
Սնոտի և փնասակար պարապմունք քո
չբարձին 'ի քէն զտգիտութիւն, և յա-

ւելին զլուցկիս մեղաց 'ի քեզ և յայլս։ Զոհ և ոչ էիր դու հայր խոստովանութեան և առաջնորդ, ոչ առաջի կայր քեզ համարս տալ վասն բազմադիմի անկարգութեանց և ինասուց զորս ածեր յեկեղեցի։ Այլ ոչչափ եւս առաւել եթէ յառաջագահութեամբն կամեցար կեալ և ոչ գիտացեր փառաւոր առնել յանձին քում զԱստուած։

Հրահանգք

Եթէ ոչ ուսար ըստ արժանւոյն, կամ եթէ յետ նախկին ուսմանց մոռացար զամենայն, դարման տար ինասուցն 'ի լաւ անդր յառաջադիմելով։ Սուրբն Իգնատիոս և սուրբն Կամիլլոս յետ երեսնամեայ հասակի սկիզբն առարին ուսման, և այնչափ արդիւնաւորեցին. թէ և ալեւորեալ ի ցեսս, լից զթերին հանապազորդեան ընթերցուածովք հրահանգաց կոչման ընծայութեան, հոգեւոր գրենոյ և վարուց սրբոց։ Եւ եթէ ժամավաճառ եղեր յընթերցուածս նանիրս և անօգուտս և ինասակարս, արդ յապաշաւ և 'ի

զեղջ եկեալ սիրեա զԱստուած և զընկեր քո։ Եւ թէպէտ այնպէս իմն թուեսցի քեզ եթէ ըստ ներել պայմանիդ հրահանգեալ և վարժ իցես 'ի դըպրութիւնս, սակայն և այնպէս յուսանելոյ մի դադարիր. որով լիցիս օգտակար անձին և ընկերացդ։ Այլ մի պարծիր 'ի գիտութիւն քո, զի մի լիցի քեզ տեսանել յաւուր միում զբազմութիւն պարզամտաց և խոնարհաց 'ի կարգս սրբոց յերկինս, և զանձն քո հանեալ 'ի խաւարն արտաքին։ Մի դանդաղիր գտանել զոմն մեկնիչ, որպէս զի յասելդ զժամերգութիւն՝ կարող լիցիս ոչ միայն սաղմոս ասել, այլ որ առաւել օգտակարն է սաղմոս ասել ի մտաց։ Ամօթ մեծ է չիմանալ զոր բարբառիս։ և զուգական է ամօթոյ դատապարտութիւնն. վասն զի որ անգիտանայ զաստուծոյն, անգիտացեալ մնայ յԱստուծոյ։

ԻԴ

Հաւատք :

Ա. Որդեակ, տեսանես ուրպէս յաւուր յայսմիկ յորդէն գայթակղութիւնք. հերձեալ է եկեղեցի իմ, հայհոյին վարդապետութիւնք, զկրօնս իբրեւ ցնորս համարին, զաւետարանն առասպելս ասեն, և զդժոխօք ծիծաղին։ Ընդեա զանձն քո, թէ ուրպէս հաստատուն կաս՝ ի հաւատս։ Որդեւ՛ն արդեօք և դու՝ փոխանակ հաստատելոյ զփորձանաւորս։ Օ՜ի մի՛ անհրահանգ և տգէտ յաչս աշխարհի համարիցիս, և՝ ի կանխակալոյ կարծեաց զերծ, հաճեցարո՛ երբէք կամ գովեցեր զայնպիսի գիրս ամբարշտութեան՝ ոչ մահաւորք են ուղղափառ հաւատոց։ Օ՜բանս ապականարար մշակացն ողբ այլոց զաղատութիւն խոստանան, գովեցեր երբէք փոխանակ հակառակ կալոյ նոցին, և՝ ի բաց խորշելոյ՝ ի նոցանէ։ Յուցեր զանձն քո հակամէտ նոցա փոխանակ զայլոցն

թիւրութիւնս կշտամբելոյ։ Օ՜ որպիսի ահագին անարգանս ինձ չառնես՝ առաւել յարգելով զանգուռն բերանոց հայհոյութիւնս ազատամոլ անզգամաց քան զսուրբ Աշմարտութիւնս աւետարանին իմոյ։ Եւ ո՞ր անպատուութիւն ինչ այդ քոյումդ պաշտաման, որ պարտական զքեզ կացուցանէ արեամբ և մահու չափ նախանձաւոր լինել հաւատոցդ, զոր հանդիսապէս դաւանեցեր։ Դանիք ոմանք խարդաւանին 'ի մեզս օրինակաւոր չարութեան։ Ո՛հ թշնամանացս և ամօթոյս։

Բ. Ոչ պէտեւ բերանով ասացես հաւատալ, զինչ շահ եթէ զկնի յուրատ լինիցիս գործովք։ Հաւատալ յիս 'ի սուրբ խորհրդեան, այլ պատարագել միանգամայն գաղջութեամբ և մեղօք. հաւատալ թէ խորհուրդքն են արդասիք սուրբ արեան իմոյ, և անարժանութեամբ մատակարարել զնոսին. հաւատալ և ուսուցանել զաւետարանն, քարոզել զխաչելեալն, և կեալ բոլորովին զհակառակ կեանս, և թուլամորթքան զժողովրդականս. հաւատալ 'ի դատաստան սատակապահանջ, և 'ի դժոխոց տանջանս, և միանգամայն զբը-

գուել զցասումն իմ, և շարժել զայն 'ի վերայ քո դատարկութեամբ և մեղօք. հաւատալ թէ ծանրագնոյ ստացայ ինձ զմարդիկ, և ոչ իւիք 'ի խնդիր լինել փրկութեան նոցա, այլ մանաւանդ մահուան նոցա լինել պատճառք չար օրինակաւդ. հաւատալ թէ գաղջութիւնն տաղտկութիւն ինձ բերէ, և զքեզ արտաքսէ և գահավէժ առնէ, և միանգամայն կեալ անեռանդն և անփոյթ վարուք. հաւատալ թէ որ լսէ եկեղեցւոյ՝ ինձ լսէ, և արհամարհել զկանոնս նորա, և հակառակ կալ իշխանութեան նորա. հաւատալ մեծութեան աստուածեղէն քոյ պատուոյ, և նուաստացուցանել զայն 'ի գործս, 'ի զբօսանս, և 'ի պարապմունս անարժանս. հաւատալ թէ զիս յանձին քում կերպարանեա և կեալ ըստ աշխարհասիրի։ Ա՛յսել հաւատալ և արդեամբք զայսօրինակ գործել՝ չիցէ՞ գործովք ուրանալ զբանս։ Դու հաւատամ ասես, բայց և դեւք հաւատան և սարսեն. իսկ դու չսարսես։ Նթէ բանք քո չմիաբանիցին ընդ գործս քո, դու ինքնին ստիպես զիս ահագին դատապարտութիւն ածել 'ի վերայ քո քոյին իսկ բանիւքդ որպէս զստախօս և զխաբեբայ յանդիմանելով։

գ. Եւ զիարդ ոչ տեսանես, զի այդու կենօք խանգարես զիմ հաւատս ոչ միայն 'ի քեզ, այլ և յայլս։ Բազումք 'ի հաւատացելոց յորժամ տեսանիցեն զքահանայդ Թուլամորթ՝ ալեկոծին և դանդաչեն, և ոմանք իսկ առ ոչինչ գրեն զաւետարանն, համարելով զայն ոչ շնչումն աստուածային, այլ գիւտ և շահավաճառ մարդկեղէն. չընծայեն հաւատս զօրութեան իմոյ, քամահեն զխորհրդովք, ժխտեն զանմահութիւն հոգւոյ, չերկնչին 'ի դժոխոց, ոչ փափաքեն երկնից, և արքայութիւն անձանց ստեղծուն զչնչին և զանցաւոր իրս յաւիտենիս այսորիկ. և ահա դու եղեր պատճառք չարեացս և վնասուց։ Ո՛հ քահանայ, դու ինքնին գիտես թէ ո՞րչափ ինչ ես արարի և կրեցի 'ի հաստատել զիմ հաւատս. գիտես, զի քահանայ զքեզ կացուցի, զի 'ի հաւատս հաստատեսցես զոգիս արեամբ իմով փրկանաւորեալս. գիտես, զի պարտական ես զքո նախանձաւորութիւն քահանայական կանգնել ընդդէմ խեղաթիւր անհաւատութեանն յորդեւոյ։ Յաջորդ ես դու առաջնոց սուրբ քահանայից, որք զիմ հաւատս ծաւալեցին և պաշտպանեցին այնչափ վաս-

տակօք, ջանիւ, վարդապետութեամբ, սքանչելեօք և արեամբ չափ։ Դու վարդապետ ես պահապան և պաշտպան հաւատոյն. և զիարդ լինիցի զի փոխանակ ամրացուցանելոյ 'ի հաւատս զփորձանաւորս՝ պատճառք լինիս գլորելոց, և հետևողք յամառելոց. այդպէս առնուցուս 'ի կիր զպաշտօն քո զմեծ։

Հրահանգք

Փախիր 'ի նանրահաւատ և 'ի հերձամիտ մարդկանէ, անհետ արա զդրեանն հակառակ հաւատոց. ատեօջիր զնոսին. թող անդր 'ի բաց զանպիտան ուսմունս, զհետ լեր այնոցիկ՝ որ հաստատուն առնեն զքեզ 'ի վերայ հիման հաւատոյ, և ցուցանեն քեզ զիշխանութիւն եկեղեցւոյ, առ պաշտպանել անձին և կարող լինել ողջամիտ վարդապետութեամբ պաշտպանել և այլոց յերեսաց մոլորութեանց. և կարևոր խոհեմութեամբ հանդերձ վանել զնոսին եթէ բանիւ և եթէ գրով։ Բայց և յուսանել անդ զգոյշ լեր յունայնասիրութենէ. մի մոռանար զի Աս-

տուած ծածկէ յամբարտաւան իմանոց աշխարհի զլոյս իւր, և մանաւորէ զայն խոնարհաց։ Ընձեռապահ լեր և 'ի շահասիրութենէ, որով յոլովք յաստուածաբանից և 'ի կանոնագիտաց զմիտս հաճեցին հզօրաց, մատն եղեն եկեղեցւոյ, և մոլորեցան 'ի հաւատս։ Հեռի լեր 'ի գինւոյ և յանհամեստութենէ, որով ապստամբեցին 'ի հաւատոց անգամ իմաստնագոյնքն։

ԻԵ

Յոյս։

Ա. Մարդեակ, չէ արժան քեզ երկրնչել ուստեք բաց յինէն, և յոչինչ յուսալ բայց յինէն, որ եմ Ստուած քո զոր ընտրեցեր 'ի բաժին և 'ի ժառանգութիւն։ Օ՜ինչ շահ է քեզ ապաստան լինել 'ի մեծութիւն և 'ի զօրութիւն, ուր գրեալ է թէ Նիւծեալ որ դնէ զյոյս իւր 'ի մարդ, և նկուն լիցի որ պանծայ յանձին զօրութիւն։ Զթէ

ոչ 'ի բաց բարձցես զմարդկային յանձն-
ապատանութիւն, ոչ լիցի քեզ ձեռն-
տու աստուածեղէն զօրութիւն։ Յիս
յուսա, և ապա թէ կարասցես բողոք
բառնալ՝ եթէ յետ խնդրելոյդ զիս
յամենայն սրտէ պակասեսցէ քեզ ինչ։

Բ. Արդ ասեմ, սիրեցեալդ, մի լի-
ցի քեզ վհատիլ և սրտաբեկիլ։ Ոչն
ինձ կամք, զի դու մեծայոյս լիցիս ա-
ռանց խիթալոյ յանձնէդ, բայց և ոչ
զայն կամիմ, զի յուսահատ դանդաչի-
ցես։ Յաղագս մեղաց քոց յիրաւի է
քեզ զահի հարկանել, մանաւանդ զի
մեծեղեռն քան զաշխարհականս ես.
բայց չգիտիցես զի ես խոստացայ շնոր-
հել թողութիւն ամենայնի, և ետու
իշխանութիւն եկեղեցւոյ իմոյ արձակել
զքեզ 'ի մեղաց։ Ոչ ապաքէն երդուայ,
թէ ոչ կամիմ զմահ, այլ զփրկութիւն
մեղաւորի։ Դու ինքնին ուսուցանես
զայդ այլոց, և ոչ քաջալերեալ խրա-
խուսիցիս։ Ոչ միայն ներեմ քեզ, այլ և
պատրաստ եմ սուրբ առնել զքեզ։ Հայ-
եաց 'ի Պետրոս, հայեաց 'ի Պաւղոս.
ապաքէն մեղաւորք ոմանք էին, և ես
'ի սրբութիւն զնոսա ամբարձի և նա-
խագահ իշխանս եկեղեցւոյ կարգեցի,

որպէս զի 'ի միտ առցես դու զիմ գութ
սրտի առ մեղաւորս։ Հապա, մի՛ լքուս-
ցեն զսիրտ քո նեղութիւնք, փորձու-
թիւնք, տկարութիւնք և ծանրաբեռ-
նութիւնք. կամեաց միայն, և օգնեցից
քեզ. տես 'ի վերս իմ յայդոսիկ զսէր
իմ։ Եթէ զքեզ միջնորդ կացուցի այ-
լոց, եթէ 'ի պատարագն զոր հանա-
պազ մատուցանես, և 'ի խորհուրդս
զոր մատակարարես, և 'ի պաշտամունս
զոր կատարես, ետու քեզ զիմ շնորհս
և զարիւն իմ, նա և զանձն գլխովին
յաղագս առաւել հիքացելոց, չլինի-
ցիմ և քո քաւիչ։ Ընտրեցի զքեզ 'ի
քահանայութիւն և ածի 'ի կրօն, ետու
ստանձնել քեզ բեռինս ծանունս, և կար-
ծիցեա՞ս թէ ոչ տաց քեզ և զօգնակա-
նութիւնս կարեւորս առ հաւատարիմ
պատուիրանապահութիւն։

Գ. Յիշեա, զի թէ որդի իմ ես, ա-
պա և ժառանգ փառաց իմոց. և եթէ
յանձին կալցիս չարչարակից ինձ լինել,
ամենայն չարչարանք ժամանակեայք ո-
չինչ են առաջի անդանօր վարձուց. և
դու անտանելի համարիցիս զփոքրն զայն
և զչնչին զոր կրես։ Ո՞չ ինչ ինչ ոչ
կրեցին առ 'ի զերկինս ստանալոյ այնչափ

քահանայք Աստուծոյ՝ թէպէտեւ տը-
կարագոյնք քան զքեզ. բայց քաջալե-
րեալք ակնկալութեամբ յաւիտենից
վարձուց՝ թեթեւ և խոտան համարե-
ցան զամենայն վաստակս իւրեանց և
զձգունս և զկիրս։ Օ՜ ինչ ինչ և ինձ չե-
զեւ պարտ կրել՝ի մոռանել՝ի փառս իմ
սեպհական. միթէ այդչափ ծանրագնոյ
լիցի և քեզ։ Օ՜ ինչ ոչ առնեն աշխար-
հիկք, և դու եւս ունէիր առնել յաշ-
խարհի վասն իրաց ընչեանոց. և վասն
երկնից այդպէս հեղգ զքեզ տեսից։
Վասն քո պատրաստեալ է իմ պսակ
փառաւոր, և չկամիցիս զնա ժառան-
գել։ Սուղ է ժամանակն. փութա ար-
գասիս բարեաց շտեմարանել. գամ ես
վաղվաղակի, և վարձք իմ պատրաստա-
կան ընդ իս, և հատուցից իւրաքանչիւր
ըստ գործս իւր։

Հրահանգք

Սուրբն Բեռնարդոս ասէր թէ պէտք
են՝ի քահանայութիւն՝ի վեր առնուլ
զնոսա եւեթ, որք ուսեալ լիցեն և սովո-
րեալ յաղօթս կալ, և յամենայնի ա-

ռաւել յաղօթս իցեն ապաստան քան յանձանց հնարս և 'ի ջանս։ Խոյս տուր յառաքից հրապուրողաց, յաշխարհէ, և յաշխարհական զբօսանաց։ Ստուած պատուիրեաց հրեշտակաց իւրոց պահել զքեզ յամենայն Ճանապարհս քո, և ոչ եթէ 'ի վախս ինքնաւէժս։ Հրահանգք պաշտամանդ ծանուցեալ զժուարին քեզ թուին, քանզի զակատեալ ես զհետ աշխարհի և ախորժես կեալ իբրեւ զաշխարհիկս։ Յիշեա զի քահանայ ես, և չես յաշխարհէ. յուշ ած զերկնից բարութիւնս մեծամեծս, և յայնժամ որպէս տիզմանարգ արհամարհեացես զամենայն իրս կենցաղականս։

ԻԶ

Ոգեր Աստուծոյ։

Ա. Սիրեա զիս յամենայն սրտէ քումմէ, և յամենայն մտաց քոց, և յամենայն զօրութենէ քումմէ. սիրեա զիս առաւել քան զամենայն ինչ, քան զա-

մենայն փառս, և քան զանձն քո. սի-
րեա՞ զիս առաւել քան զայլս։ Յուշ լի-
ցի քեզ, զի արկար զքեւ զձեւ քահա-
նայական 'ի նշանակ առանձինն աս-
տուածսիրութեան։ Այլ զի՞նչ օգուտ
ի՞նչ քեզ հրեշտականման բարբառել,
ունել զամենայն գիտութիւն, և սքան-
չելիս եւս գործել, բաշխել զամենայն
ինչս քո աղքատաց, ծախել 'զկեանս քո
'ի մեծ ձգնութիւնս, եթէ զիս չսիրի-
ցես։ Օ՜ ի՞նչ շահ եղեւ Յուդայի առա-
քելութիւնն։ Զանց սիրոյ՝ թէ և զա-
մենայն առաքինութիւն ունիցիս, չես
քահանայ. քանզի առանց սիրոյ անօ-
գուտ է ամենայն ինչ։

Բ. Զի՞ թէ չիցե՞ս արժանի քումդ
սիրոյ. զի՞նչ ինչ սիրելի կարող ես յիս
խնդրել, զոր ես չունիցիմ։ Զի՞ թէ գըտ-
ցես ինչ մի լաւ քան զիս, ոչ ինչ դը-
ժուարիմ եթէ զիս չսիրիցես։ Զո՞ւ
սիրես զարարածս վասն կայծի միոյ բա-
րութեան, զոր յինէն ունին. և զի՞արդ
չսիրիցես զիս զամենայն բարի և զաղ-
բիւր բարութեանց։ Զի՞ թէ աշխարհ
զիս ոչ ծանիցէ, և երթիցէ պաշտօն
հարկանել կրից մարմնոյ, պատուհասք
անհնարինք կան մնան նմա. իսկ եթէ

և քահանայդ Աստուծոյ զնոյն գործի-
ցես, ո՞ կարիցէ ժոյժ ունել։ Որդեակ,
քանզի յաշխարհականաց և 'ի սրբա-
կրօն կանանց միամտութեամբ սրտի
հալին 'ի սէր իմ։ միանգամ եւեթ եթէ
զինէն խորհիցին նուաղին սիրտք նոցա,
և լան ցաւագին, զի սէրն ոչ է սիրե-
ցեալ. ոչ ինայեն յինչս, յաշխատու-
թիւնս, և 'ի կեանս եթէ կարիցեն
իւիք արգելուլ զի մի դառնացուցանի-
ցեն զիս մարդիկ. և դու որ պաշտօ-
նեայդ ես տան իմոյ և խորհրդոցս հա-
զարապետ, ոչ ինչ փոյթ յաղագս իրացս
ունիս յանձին։

Գ. Օ՜ինչ ինչ առնել էր իմ առ 'ի
սիրելի լինելոյ քեզ։ Սիրեցի զքեզ ան-
դրստին 'ի յաւիտենից. գիտակ իսկ ես
առանձին ընորհաց, պարգևաց և իշխա-
նութեանց՝ զոր ետու քեզ 'ի քահանայ-
ութեան, զի զիս սիրիցես։ Ոտեսա-
նե՞ս զնոյն 'ի թողութիւն առնել իմում
մեղաւորաց, զորս լուացի արեամբ ի-
մով, և 'ի քաղցրութիւն ցուցանել իմում
առ սրդարս, որոց մատակարարի մար-
մինս իմ. 'ի վարիլ քո ընդ իս ընտանե-
բար, և 'ի հպատակել իմում զիս քեզ
իւիք օրինակաւ, և յառնելն զքեզ որ-

պէս միւս եւս ես։ Ո՞ կարող էր առաջել սէր ցուցանել և բարերարել քեզ։ Օ՜ արիւն իմ բովանդակ հեղի առ 'ի շնորհօք ընուլ զքեզ, և ծանրագնոյ գնեցի. ետու քեզ զայնչափ պարգեւս, զայնչափ պատիւս և իշխանութիւնս, և դու զիս ոչ սիրիցես։ Այլ մինչդեռ ատելութեամբ էիր ընդ իս՝ ոչ բարձի թողի արարի զքեզ, այլ համբերութեամբ ժուժեցի ապստամբելոյդ. և ստիպաւ խընդրեցի զփախստականդ, զթալիր խնամով ներեցի քեզ և ողջագուրեցի. միայն թէ դու զիս սիրեսցես։ Սէր զսէր ձգէ. և միայն առ 'ի քէն չմարթացայց ունել զայդ։ Այդի գրաւ զամենայն զօրութիւն իմ և զիշխանութիւն ընդ պատուիրանի սիրելոյ, որ առաջինն է և մեծն։ Խոստացայ քեզ զամենայն բարի, եթէ զիս սիրիցես. խնդրեմ՝ 'ի քէն իբրեւ 'ի պարգեւի մասին, կամ որպէս թէ աղաչելով, զի ինձ տացես զսիրտ քո, որ և իմ իսկ է։ Ընդ առ այսչափ հանդէս սիրոյ չտացես դու փոխարէնս և ոչ վառեսցիս սիրով։

Հրահանգք

Զոն գործեա վառիլ՝ի սէր Աստուծոյ, և զայլս եւս վառել, Ջանալով ձանաչել անձամբ, և տալով այլոց եւս ձանաչել եթէ՝ի քարոզս, եթէ՝ի խոստովանութեան և կամ յառանձին յորդորակս՝ ոչ միայն զբարերարութիւնս Աստուծոյ, այլ և զանսահման բարեմանութիւնս նորա։ Ասուրբն Անատիոս սովոր էր ասել թէ չէք փայտ լաւագոյն՝ի լուցանել զհուր սիրոյն Աստուծոյ որպէս զխաչափայտն։ Աւելութիւն ախտից քոց և ցանկութեան՝ աձումն է աստուածսիրութեան։

ԻԷ

Սէր ընկերին։

Ա. Որդեակ, եթէ զիս սիրես, զիարդ ոչ սիրեսցես զեղբարս քո. զիարդ կարասցես մոռանալ զվերջին կամս և զկտակ հօր քո երկնաւորի. Սիրեսջիք, ասացի, որդեակք իմ զմիմեանս. կամեցարուք իրերաց զայն ամենայն բարի, զոր ես ձեզ կամեցայ։ Այս անկեղծ սէր 'ի մէջ ձեր ես ձեզ ետու որպէս նշանակ, զի ծանիցէք աշխարհ եթէ իմ աշակերտք էք։ Գիտես, զի սիրեցի զքեզ որպէս զբարեկամ, և բացի քեզ զբոլոր սիրտ իմ, և եղէ առաջին 'ի խնդրել զքեզ, և ընտրեցի զքեզ միջնորդ և բարեխօս ամենայն բարեաց 'ի պէտս եղբարց քոց։ Այսպա, պինդ կալջիր զանձն քո միաբան ընդ այլս 'ի սուրբ խաղաղութեան, որ է ժառանգութիւն զոր քեզ թողի. և ըստ կանոնի այնր սիրոյ՝ զոր ես ցուցի, սիրեա զնոսա 'ի բոլոր սրտէ. միւսանգամ քեզ երկրորդեմ,

զի մեծապէս փոյթ է ինձ զերաց։ Այրն իմ երկնաւոր ոչ պակասեսցի յօգ-
նականութենէ. նա զձեզ սիրէ, և ես աղաչեցի զնա 'ի բոլոր սրտէ 'ի պա-
հել զձեզ այնպէս միացեալս ընդ մի-
մեանս, զի լինիցիք մի ընդ երեարս, որ-
պէս ես մի եմ ընդ նմա։ Եւ յետ այս-
քան փութոյ զիարդ լինիցի ինձ տեսա-
նել զքեզ գերեալ 'ի հոգւոյ երկպառա-
կութեան և գժտութեան, կամ լոկ
միաբանեալ արտաքնայարդար և քաղա-
քավար սիրով։

Բ. Դաջ գիտես որչափ ինչ արարի
վասն քո։ Հնարհեցի քեզ զմարմին
իմ և զարիւն. Ետու զբովանդակ կեանս
և զանձն իմ 'ի չարչարանս և 'ի մահ
վասն քո 'ի վերայ փայտի խաչին. և
այսպիսի սիրալիր օրինակք չարժեցեն
զքեզ նմանող ինձ լինել յեղբայրսիրու-
թեան։ Ետու քեզ զկոչումն կրօնաւո-
րական, և օծի զքեզ ինձ 'ի քահանայ
իւղով սրբութեան, որ է նշանակ ողոր-
մութեան. զի առաւել քան զառաւել
առատանայցէ 'ի քեզ փոյթ սփոփելոյ
ողորմածութեամբ զաղքատս, և լի-
նիցիս բոլորովին գութ և փոյթ 'ի հո-
գալ եղբարց քոց զամենայն բարի։ Ու-

չափ ինչ առնիցես միում 'ի փոքրկանցս յայսցանէ, համարեցայց եթէ ինձ ա-
րարեր։

գ. Զ՚ի փոյթ է քեզ, թէ մարդիկ երախտագէտ ոչ լինիցին, այլ և հալա-
ծիչ քո եղիցին. ապաքէն և զիս հա-
լածեցին։ Զ՚ի ինչ ոխանար, թէ ոք կապ-
տեաց զհանդերձս քո, զինչս և զպա-
տիւ. ես ինքնին հրամայեցի քեզ տալ
և զբաձկոն քո՝ որում խնդրիցէ 'ի քէն
կուսուվ զշապիկդ քո. և դարձուցանել
զձախոյ ծնօտն քո որում հարկանիցէ
զաջ ծնօտդ։ Եր զքեզդ հալածէ, և
դառն զրպարտութեամբ զամենայն չար
խօսի զքէն, յակամայս իսկ պատրաստէ
քեզ պսակ յերկինս։ Եւ դու որ տաս
զխաղաղութիւն եղբարց քոց 'ի սուրբ
պատարագի, և յիշատակես զիմ չար-
չարանս և զմահ, զորս յանձն առի յօգ-
նել թշնամեաց իմոց, դու որ ճաշակես
և բաշխես զիս զդառն հեղ, որ անիծանդ
զացս ոչ անիծի, չարչարեալ և ոչ սպառ-
նացայ, և զանմեղ անձն իմ թողացուցի
դատել յանիրաւի, մանաւանդ թէ ող-
ջագուրեցի զանօրէնն զՅուդա, և 'ի
վերայ խաչի աղօթեցի վասն խաչահա-
նուացս, դժուարեսցիս 'ի սիրել, ողջու-

նել, մարդավարել, և ասել բան մի քա-
ղաքավար զրպարտչին քում։ Ասուցիչդ
սիրոյ այդպէս վարեսցիս ընդդէմ սիրոյ։
Յուշ լիցի քեզ, զի պէտս ունիս առ
յինէն Թողութեան և մարդասիրու-
թեան. և ես խոստանամ ցուցանել
քեզ զայդ, միայն թէ և դու թողցես,
և քաղցր լինիցիս առ դառնացուցիչս
քո։ Որով չափով չափեսցես այլոց, և
ես նովին չափեցիս քեզ։

Հրահանգք

Օ մտաւ ած, զի թէ ունիցիս խէթ
ընդ եղբօր քում, այսօր իսկ քեզէն փու-
թա հաշտել ընդ նմա, և հաստատու-
թեամբ դիցես 'ի մտի մի մատչել 'ի
հաղորդութիւն կենարար հացին մինչ
չեւ իցես 'ի խաղաղութեան ընդ նմա։
Ուրբն Յովհաննէս Ոսկեբերան հայրա-
պետ Կ. Պոլսոյ 'ի պատարագել անդ
իւրում յիշեաց, զի ոմն 'ի ժառանգա-
ւորաց իրաւամբ յանդիմանեալ 'ի նմա-
նէ՝ ունէր զխէթ ընդդէմ իւր. և յուշ.
ածեալ զբան փրկչին, թէ թող զպա-
տարագն քո 'ի վերայ սեղանոյ, և երթ

նախ հաշտեաց ընդ եղբօր քում, փոխ ընդ փոխ եթող զսուրբ պատարագն և կոչեաց առ ինքն զյամառեալ ժառանգաւորն. անկաւ յոտս նորա խորին խոնարհութեամբ, և այնպէս շահեցաւ զնա 'ի Քրիստոս. և ապա դարձաւ յեկեղեցի անդր մատուցանել զպատարագն։ Սիրեա զխաղաղութիւն յանձին քում, և Ջանա ըստ կարի զնոյն տնկել և 'ի սիրտս այլոց։ Որ որոմնութիւն ինչ՝ առաւելապէս առ 'ի խափանել զմեզս։ Եթէ Աստուած դատապարտելոց է յահեղ ատենի զորս ոչն առնիցեն զսէր և զողորմութիւն, ո՛րչափ մեծ եւս ի՞նչ քոյդ յանցաւորութիւն և դատապարտութիւն, որ քահանայութեամբդ պարտաւոր կացուցեր զքեզ սիրոյ։

ԻԸ

Նախաձաշորդութիւն :

Ա. Ես ինչ անտեղեակ, որդեակ, զի իմ տենչ միակ և իղձ սրտի այն եղեւ փառաւոր առնել զՀայր իմ, և ձգել զՀոգիս առ նա : Տեսեր զիս խոնջ և վաստակեալ անկերակուր և անհաց ճըգ-նելով վասն միոյ եւեթ կնոջ մեղաւորի 'ի Սամարիա. զի՝ արդ մեծ եղեւ ուրախու-թիւն իմ 'ի տեսանել անդ 'ի գիրկս զոչխարակն զկորուսեալ, և զանառակ որդին զգաստացեալ. միթէ խնայեցի՞ 'ի քրտունս, յարտասուս, յարիւն և 'ի կեանս գլխովին յաղագս փրկութեան բոլորեցուն : Ո՛հ սիրով սիրեցեալդ իմ, եթէ զիս սիրես, չասեմ թէ պահօք խոշտանգեա զքեզ և խարազանօք տան-ջեա, այլ ապրեցո ինձ զՀոգիս. առանց այսր ոչինչ գործես, և ոչ իւիք ցուցա-նես զսէր քո առ իս. դիր հաստատու-թեամբ 'ի մտի, թէ չկարես առնել ինչ մի առաւել գերապանծ, և ինձ ա-

ւելի հաձոյական։ Օ՞ր ձգունս, զաշ-
խատութիւնս և զհալածանս ոչ կրեցին
Պետրոս, Պաւղոս, Յովհաննէս, և
բազմութիւնք սուրբ քահանայից առ 'ի
միութարել զիս։ Եւ յառաջ իսկ քան
զաւետարանն իմ Մովսէս, Պենեհեզ,
Եղիա, և մարգարէք որոմ նախանձու
վառեցան, զինչ ինչ ոչ գործեցին 'ի
պատիւ փառաց իմոց, և դու զհետ ի-
մոցս օրինակաց և փութոյ և սիրոյ ան-
շարժ կացցես մնասցես։

Բ. Քահանայ զքեզ կացուցի ոչ 'ի
քո դիւրութիւն, այլ վասն բարւոյ հա-
սարակաց. այս իսկ է վախճանն՝ որ վասն
բարի արարի քեզ. այս բովանդակու-
թիւն պաշտամանդ քոյ։ Դու փեսայ
և պաշտպան եկեղեցւոյ իմոյ, դու սահ-
մանեալդ հրեշտակ պահապան, և հայր
հոգւոց՝ զիարդ ժուժեսցես տեսանել
զխարդաւանել բազմաց 'ի վիհս դժո-
խոց։ Օ՞ իարդ ոչ զամենայն ձիգն հնա-
րիցիս կորզել գոնեա զոմանս 'ի ձեռաց
թշնամւոյն, գուն գործելով և խօսելով
հրապարակաւ և առանձինն. որպէս
կարես 'ի դատարկութեան կալ և յան-
գործութեան յայնչափ կոտորածս իմոց
և քոց որդեկաց։ Մի՝թէ վասն այնորիկ

ընկալար յինէն զիշխանութիւն և զաս-
տիճան պատուոյ, մինչեւ ընտրել ինձ
զքեզ յիմ գործակցութիւն և 'ի սա-
տարութիւն փրկութեան հոգւոց, զի
յետ այսր ամենայնի թշնամիք իմ ա-
ռաւել ժրաջան գտցին 'ի կորուսանել
ինձ զնոսա քան եթէ դու յապրեցու-
ցանել։ Յուշ լիցի քեզ, զի արեան իմոյ
գինք են նոքա, և պահանջեցից 'ի քէն
համար սասատիկ յոյժ յոյժ։ Զի էր
քեզ յօժարիլ յաւելուլ Ստուծոյ քում
զդառնութիւնս կորստեամբ այնչափ հո-
գւոց, և քո իսկ գլխովին։

Գ. Որ ոք դարձուցանէ ինձ զմեղա-
ւոր զոք, բաց 'ի շահելոյ զնա փրկեսցէ
և զանձն իւր, և փայլեսցէ որպէս զաս-
տեղս. կամիցիս յաձախել քեզ պսակս.
յաձախեա, որդեակ, շահել զհոգիս։
Եթէ տօն ցնծութեան կատարեն յեր-
կինս հրեշտակք և սուրբք վասն միոյ մե-
ղաւորի եկելոյ 'ի զգաստութիւն ապաշ-
խարութեան, որչափ եւս առաւել ոչ ա-
ռասցեն վասն այնորիկ որ դարձուցանիցէ
զնա 'ի զգաստութիւն։ Այս գիտեա,
զի առաւել քան զամենայն զգործս իմ
պատուական ինձ համարիմ զհոգիս. և
միթէ չկամեցայց ամենայն բարեաք ի-

մովք փարթամացուցանել զսպրեցու-
ցիչն նոցա։ Բաբէ քաղցր արգասեացս.
զոր բերկրանս չբերեն 'ի պահու մա-
հուան. զոր խնդութիւն 'ի յերկինս,
և դու անփոյթ առնիցես։

Հրահանգք

Տես եթէ նախանձայուզութիւն քո
'ի սիրոյ ելցէ վառեալ և գիտութեամբ
կերպացեալ, և հաստատութեամբ ամ-
րացեալ։ Այր երկայնամիտ է, քաղցրա-
նայ, ոչ նախանձի ընդ գործս այլոց, ոչ
ամբարտաւանէ, ոչ խնդրէ զիւրն՝ զշա-
հասիրութիւն ասեմ, և զփառասիրու-
թիւն, և զկամս. խնդրէ զբարին նախ
զիւրոցն, և ապա զօտարին. նախ զիւ-
րական, և ապա զայլոցն։ Որ իւրում
տանն խնամ չտանիցի, զիարդ խնամա-
կալ եկեղեցւոյ լինիցի։ Որ անձին իւ-
րում չար է, զիարդ այլում բարի լինի-
ցի։ Զդանց ուսումնասիրութեան, խոր-
հրդակցութեան, և աղօթից ոչ երբէք
լիցի քեզ ունել զգիտութիւն սրբոց,
որ իմաստուն առնիցէ զքեզ և խոհական
և գործօնեայ։ Յոյց զանձն քո յամե-

նայնի արժանաւոր պաշտօնեայ Քրիս-
տոսի, սպառազինեա զքեզ համբերու-
թեամբ բազմաւ 'ի վաստակս և 'ի պըտ-
ղաբերութիւն. մի դադարեր թէպէտ
և բազումք ընդդէմ դարձցին քեզ և
հալածանօք խոշտանգեսցեն. այլ լեր
աներկբայ զի վարձս ընկալցիս ոչ ըստ
պտղոյն, այլ ըստ քումդ աշխատու-
թեան։ Աւրբն Ատուռնիոս առաքեալն
սաքսոնիացւոց յետ բազմադիմի վաս-
տակոց և հալածանաց կրելոց յիւրումն
առաքելութեան մարթացաւ ասել 'ի
մահուանն. Ընկին աչք իմ յայլ ինչ յա-
մենայնի զոր արարի, բայց միայն 'ի
փրկութիւն հոգւոց և 'ի կամս Աստու-
ծոյ։

ԻԹ

Խոնարհութիւն և հեզութիւն :

Ա. Որդեակ, ուսիր յինէն. և զինչ. ոչ զաշխարհ կերտել, և ոչ աքանչելագործել, այլ հեզ լինել և խոնարհ սրտիւ : Հայեաց յիմ վարս, և փոքր 'ի շատէ համեմատեա ընդ քոյումդ : Այս՝ որչափ և կարես զմտաւ ածել՝ մեծ եմ քան զքեզ. և սակայն յանձին կալայ ծնանիլ յաղքատ կուսէ, համարեցայ որդի հիւսան. աղքատին ձեւ զգեցայ, և յամենայնի որպէս տառապեալ վարեցայ. և դու հէքդ և յետնեալ՝ ախորժիցես մեծութիւն ցուցանել ըստ ծննդեան, զգեստուց, գնացից, և ըստ ամենայն բանի. միթէ ես ընդ ծնանիլս չկարէի՞ ընուլ զաշխարհ համբաւով մեծահրաշ գործոց. այլ զամն երեսուն ժուժկալեցի յաղքատին տան և յանարգ գործատան. հարցանէի զվարդապետս ուսանել 'ի նոցանէ. և յաճել ամաց հասակիս ցուցի ընդ ժամանակին և

զգիտութիւն և զշնորհս. իսկ դու ամ-
բարտաւանդ չառնուս յանձն ուսանել,
և հարցանել խորհուրդ. ցանկաս որում
ոչ ունիս, և ձեռներէց լինիս 'ի կարգ
և 'ի պաշտօն անպատրաստ և անար-
դիւն, և խնդրես պաշտամունս մեծապայ-
ծառս։ Նդէ ես ընդ օրինօք, հնազանդ
եղէ մօր իմում, և Յովսեփայ գլխո-
վին, մկրտեցայ 'ի Յովհաննէ. և դու
ոչ կամիս հնազանդել բանից և պա-
տուիրանաց առաջնորդացն քոց։ Ոչ էր
'ի մտի, որդեակ, զի 'ի խոնարհս եւեթ
հայիմ ես և նոցա մատնաւորեմ զշնորհս
իմ։ Նթէ ոչ լինիցիս որպէս մանուկ
տղայ, ոչ մտանիցես յերկինս։ Ա.յս է
հիմն քրիստոնէական կենաց, եւս ա-
ռաւել առն եկեղեցականի. և դու ա-
ռանց հիման կամիցիս շինել։

Բ. Նլեալ իմ 'ի տես հրապարակի՝
յամենայն 'ի վաստակս իմ և 'ի քարո-
զութիւնս և 'ի սքանչելագործութիւնս
ոչ ինչ այլ խնդրեցի, բայց զփառս հօր
իմոյ։ Նա դու որ ոչ ինչդ ես, և ոչ ինչ
կարես, և ոչ իմիք ես արժանի, ոչ ինչ
խնդրես, բայց զքո անոտի և զանմիտ և
զվնասակար փառս՝ հակառակ կալով
և փառաց անուան իմոյ։ Ոչ բարձրա-

ձայն և ոչ մեծաբանս խօսեցայ ընդ ումեք. խօսելով խօսեցայ և ընդ իշխանս հեթանոսաց, այլ ակնածութեամբ. առաքեցի զժողովուրդն առ քահանայս հալածիչս իմ. ոչ վիճեցի ընդ ումեք, և ուսուցի մեծամեծաց փոքրկանալ և տեղի տալ բոլորից և անիրաւաց անգամ և յափշտակողաց զինչս, և հարստահարողաց։ Իսկ դու հէքդ քրիստոնեայս և բամբասես, և երգիծանես զթերութիւնս այլոց. բանակռիւ լինիս և սերմանացան 'ի մէջ երիցանց և կրօնաւորելոց։ Ի բարկութիւն բրդիս, դառնացուցանես զայլս. և 'ի կրելդ ինչ դժկամակ՝ յանամոքելի միտս բերիս։ Այս խոյս ետու 'ի թագաւորելոյ և յամենայն մարդկային մեծութենէ. լաւ համարեցայ քարոզել 'ի Հրէաստանի եւ ի աղքատաց և սակաւաւորաց, և մեղաւոր սամարուհւոյ. 'ի թիկունս ինձ առի զաշակերտս, որպէս թէ պէտս ունիցիմ նոցա. ետու նոցա իշխանութիւն գործելոյ սքանչելիս մեծամեծս եւս քան զիմն, և երթալ ընդ ամենայն աշխարհ։ Ստնարհեցուցի զանձն իմ լուանալ զոտս նոցա և ծառայ լինել բոլորեցունց. փոքրկացուցի զանձն իմ, և եղէ որպէս զյետին. և 'ի պարգեւս իմ

անգամ և 'ի սքանչելագործութիւնս ոչ
ինչ ցուցի հանդէս մեծութեան։ Այլ թէ
'ի հաղորդութեան թաքուցի զանձն իմ
ընդ հասարակ բաղարջ հացիւ, դու
զիարդ ցանկանայցես մեծանուն պա-
տուասիրութեանց, և զյառաջագահս
խնդրիցես, և զամենայն նախապատու-
ութիւնս. մինչեւ 'ի պաշտամունս իսկ
քո մուծանել մախանս և ոխակալու-
թիւնս՝ դայթակղութեամբ հանդերձ
աշխարհականաց. կամ թէ խորհիցին
հաճոյ լինել Աստուծոյ, և դարձուցա-
նել առ իս զձգիս խստութեամբ և ամ-
բարտաւանութեամբ, ուր ես ոչ արա-
ցի զայդ, բայց խոնարհութեամբ և
հեզութեամբ։

Գ. Դարձեալ և 'ի կիրս չարչարա-
նաց յորպիսի ծով ոչ ընկղմեցայ նուաս-
տութեան և անարգանաց. թողեալ
լքեալ յիմոցս, ուրացեալ 'ի Պետրոսէ,
մատնեալ 'ի Յուդայէ, հալածեալ 'ի
քահանայից, որպէս յիմար համարեալ,
քան զԱրաբբա վնասակար գրեալ,
ամօթահարեալ, դատապարտեալ յա-
նիրաւի 'ի փայտ նախատանաց. և յայսը
ամենայնի վերայ ոչինչ ընդդէմ դարձայ,
ոչ 'ի սուտ հանի զզրպարտութիւնս և

ոչ արդարացուցի զանձն իմ, և ոչ բողոքեցի յատեան արդարութեան. եթէ խօսեցայ, չարարի զայդ առ ազատելոյ զանձն իմ՝ի թշնամանողաց, այլ միայն զճշմարտութիւնն յայտ արարի. և այն՝ գիտելով չափ զի յաճախեն ինձ չարիք։ Այս դու մեղապարտդ չկամիս յանդիմանիլ և խրատիլ, և ոչ առաջի խոստովանահօր յանձն առնուս յանցաւոր երեւել, և զինքն իսկ քանքարտաս վասն խրատելոյ իմոյ զքեզ երբէք. կամ թէ առ՝ի փախչելոյ՝ի դոյզն նուաստութենէ և յայպանաց կեղծիցեաս, պատրուակիցեաս, և թաքուցանիցեաս զկարեւոր ճշմարտութիւնն յանկաւոր պաշտամանդ քում։ Հարց զիմ թշնամիս, որպէս վարեցայ ընդ նոսա. որպիսի՛ քաղցր բարբառ արձակեցի առ Յուդա. աղօթեցի վասն խաչահանուաց, և՝ի տեղի կառափման եպերանօք յորդորեալ ինքանել՝ի խաչէ, թէպէտեւ կարող էի միով բանիւ և միով ակնարկութեամբ կորզել զանձն իմ՝ի թշնամանադրութեանց, յանձն առի մեռանել՝ի մէջ անօրինաց՝ լցեալ և յագեալ նախատինաք, և լինել արհամարհ յաչս բոլորից. և այսպէս յաղթեցի գազանութեան մարդկան և մարդկային գոռոզութեան.

յաղթանակ կանգնեցի ընդդէմ աշխարհի, մահու և դժոխոց. զբռամբ ածի զփրկանաւորութիւն հոգւոց, զփառս հօր և անուան իմոյ։ Այլ միթէ սովիմբք ուսուցի քեզ պաշտպանել պատուոյ անձինդ յոխորտանօք և ամբարհաւաճութեամբ. և զիարդ անձամբ զանձն խաբիցես՝ որպէս թէ առնիցես զայդ 'ի փառս իմ։ Որդեակ իմ, խոնարհութիւնք առաջնորդեն 'ի խոնարհութիւնս, և խոնարհութիւնն 'ի փառս։

Հրահանգք

Անձեռա զմեծամտութիւն և զխըստութիւն։ Սովոր էր ասել Երանելին Ֆրանկիսկոս սալեզացի թէ շատ ճանճք ըմբռնին միով դրգալաւ մեղու քան հարիւր տակառօք քացախոյ։ Այլ 'ի դէմս ածել նմա, թէ առաքեալն պատուիրէ խօսել 'ի ժամու և 'ի տարաժամու, 'ի վերայ էած. Ուժգնութիւն առաքելական բանիցն է յերկուս ձայնս, ամենայն համբերութեամբ և վարդապետութեամբ։ Այ արդապետութիւնն

ՀՇմարտութիւն է. բայց պարտ է խօսել համբերութեամբ, հանդուրժելով և 'ի մերժիլն և 'ի ծաղրիլ 'ի հակառակորդաց, որպէս և կրեցին բանք Քրիստոսի։ Յամենայնի խնդրեա զփառս Աստուծոյ. եթէ զքոյդ խնդրիցես, գող և աւազակ Ճանաչիս։ Որովհետեւ քահանայ ես, այնչափ առաւել պարտ է քեզ խոնարհեցուցանել զանձն, որչափ մեծութիւն վիճակիդ, և պարգեւացն Աստուծոյ՝ հանդերձ ապերախտութեամբ քով հարկեցուցանեն համար մեծ տալ Աստուծոյ։ Որին աղաչաւ սուրբն Ֆրանկիսկոս չէաւ յանձն քահանայանալ, և այլք յոլովք հրաժարեցին առ խոնարհութեան։

Լ.

Մեռելոտիւն :

Ա. Յետ ընտրելոյ իմոյ զքեզ հետևող և պաշտօնեայ խաչեցելոյս, շատ լեցի, որդեակ, ասելս իմ առ քեզ. "Եթէ կամիս զկնի իմ գալ, ուրասջիր զանձն, առ զխաչ քո, և եկ զկնի իմ.,, : Բանզի ես 'ի կարի իսկ դժնդակացն ոչ հրաժարեցի, և դու ո՞չ կամիցիս փոքու իւիք նեղել զանձն քո : Յոլովք յաշխարհականաց ապաշխարութեամբ և խստամբեր վարուք և մտադիր փութով թողուն զպատիւ անձանց և զինչս և զհաճոյս և զկեանս գլխովին վկայական մահուամբ, և դու քահանայդ՝ որ զիս յանդիման առնես, և զիմ յիշատակես զչարչարանս և զմահ 'ի պատարագի, և զիս տեսանես զոհ և քաւութիւն վասն քո 'ի ձեռս քո, զի՞արդ չկամիցիս զհետ իմ գալ մատուցանելով զանձն քո պատարագ ընդունելի, և 'ի մեռելութիւն կրթելով զմարմին քո և

զցանկութիւնս։ Եթէ կամիս զի խաչն իմ եղիցի 'ի փրկութիւն քեզ, բարձ զայն, որպէս արժան է, հետևելով վարուց իմոց. քանզի և ես ինքնին առ 'ի մտանել 'ի փառս իմ՝ պարտ ինձ վարկայ չարչարիլ։ Որ ոք 'ի թուոյ իմոց աշակերտաց իցէ, պարտի ուրանալ զանձն իւր։ Եւ զինչ. կամէիր Եպիկուրոսի մանաւանդ լինել աշակերտ, քան Քրիստոսի, որպէս իրաւամբք բողոք բառնայ Բեռնարդոս։

Բ. Քեզ անկ է ուսուցանել այլոց զմեռելութիւն. և որպէս կարող լինիցիս ասել նոցա սանձել զբարկութիւն, զյամառութիւն, զանձնասիրութիւն, սիրել զՀնշումն զգայութեանց, զուրացութիւն կամաց և զխորշումն 'ի վտանգաւոր կենակցութեանց, երբ դուդ չառնիցես զայդ ամենայն։ Եւ թէպէտ ասիցես նոցա, զինչ զօրութիւն իցէ բանիցդ, մինչդեռ դու զՀակառակն գործիցես։ Աւաղ, զի կարի իրաւամբք ասիցէ ժողովուրդն զքէն, որպէս և զբազմաց այլոց, թէ երիցունք և կրօնաւորք ոչ յայլ ինչ ակն դնեն, բայց յուտել և յըմպել և 'ի զբօսնուլ. թող զի և յաւելուցուն աղքատք թշնամանել, ասելով

թէ ինչք մեր էն զոր դոքա ուտէն։ Սոքա էն քաջ զօրականք կարծեցեալք, ոյք փոխանակ տանելոյ զդրօշ մեռելութեանն Քրիստոսի, ոչ յայլ ինչ դէտակն ունէին, բայց 'ի կնամարդի մեղկութիւնս։ Զդուկ խմումն եկեղեցւոյ, որոյ էին երբեմն պաշտօնեայք հաշեալք և մաշեալք 'ի ձգնութիւնս, աղքատք 'ի գոյից, հիւծեալք տքնութեամբ և պահօք, անշուք անձամբ, մեռեալք աշխարհի և անձանց. իսկ այժմ յանձնեալ է 'ի ձեռս փափկասէր թուլամորթից։ Զի գործեացեն աշխարհիկք յայսպիսում աշխարհի անձնատուր 'ի հաճոյս, 'ի գրգանս, 'ի դատարկութիւնս, 'ի տեսանել անդ զքահանայս, ոյք պարտական էին օրինակ լինել մեռելութեան, զայսօրինակ քաղաքավարիլ։ Զիցէ՞ն և ինձ իրաւունք մեծաձայն բողբելոյ, զի փոխանակ բազմացուցանելոյ զհետևողս խաչի իմոյ՝ բազմացուցանես նմին զթշնամիս։

Գ. Խաբիս ուրվ դու, առանց ուրանալոյ զանձն զիարդ ընուցուս զայնչափ պարտս քո զհասարակս ընդ աշխարհականս, և զսեպհականս քումդ աստիճանի։ Պարտական ես փախչել յաշխար-

հային տուրեւառից, յարտաքին գոր-
ծոց, 'ի բանակռուութենէ, և 'ի մար-
դահաճութենէ. և որպէս 'ի գլուխ
տարցիս զայդոսիկ, եթէ ոչ ուրացցիս
զսէր ընչից և փառաց. զիարդ ատես-
ցես զաշխարհական զբօսանս, զխաղս,
զխրախութիւնս, զտեսարանս, զշռայ-
լութիւնս, զպարս և զկենակցութիւնս,
որ քեզ տիրապէս արգելեալ են, եթէ
ոչ սանձեսցես զցանկութիւն հեշտա-
լեաց։ Որպէս անարատ և ողջախոհ
պահեսցես զանձն քո վարելով զկանայս
'ի քո իսկ սպասս, եթէ ոչ սանձիցես
զզգայարանս քո, և զչարախտաւատ
ցանկութիւնս մարմնոյ։ Նրբ պարա-
պեսցիս, որպէս արժանն է, յուսումնա-
սիրութիւն, յաղօթս, 'ի նախանձա-
ւորութիւն և յաշխատութիւն վասն
մերձաւորաց և վասն եկեղեցւոյ, եթէ
սիրես զամենայն դիւրութիւնս անձինդ,
և չկամիս յաղթել մարդկային ակնա-
ծութեանց, և ոչ գիտես տանել նա-
խատանաց և թշնամանաց վասն իմ։
Ամենայն անհնազանդութիւնք առ իս
և առ կանոնս եկեղեցւոյ իմոյ ոչ այպա-
քէն յառաջ գան 'ի չկամելոյ մնհանալ
անձին։ Զ՝ամենր ինչ թուիցի քեզ խաչն
իմ. բայց միթէ չՀգնիս մինչ 'ի մահ

վան աշխարհի. եթէ վան նորա չարչարիս, զիարդ վան իմ ոչ։ Ոչ ապաքէն կրեն քեզ անբերելի թուի, և միթէ վան իմ միայն կրես։ Ուրեմն 'ի խորշիլ քո 'ի կրելոյ՝ գիտիցես ուստի խորշիս. խորշիս և փախչիս 'ի փոխարինացս՝ զորս ունէիր ընդունել 'ի կրելն վան իմ, և 'ի գալն զհետ իմ. խորշիս և փախչիս յօգնականութենէ շնորհացս իմոց, որք զիմ լուծ քեզ առնէին ոչ միայն թեթեւ, այլ և քաղցր. խորշիս և փախչիս 'ի վարձուց և 'ի պսակաց, որովք յաւուր միում դարձցի տրտմութիւնն յուրախութիւն, և օրհնեսցես զժամն յորում չարչարակից եղեր ընդ իս, թագաւորելով յերկինս յաւիտեան։ Այլ թէ ոչ, կամիս ուրեմն մարտիրոս լինել առաւել վան աշխարհի, քան եթէ վան իմ. և չիցէ այդ կամիլ չարչարիլ թշուառաբար յաստի կեանս, և ապա չարչարիլ և 'ի հանդերձելումն մշտնջենապէս։ Տես եթէ լաւ իցէ այդ վան քո։

Հրահանգք

Գիտեա՛ թէ որ այն ախտ և կիրք լցեն յորս ստէպ անկանիս. և ջանա նուաճել զայնոսիկ ապաշխարութեամբ և անձնուրացութեամբ։ Որչափ բռնադատես-ցես զանձն քո, այնչափ առաւել յառաջադէմ գտցիս յառաքինութեան։ Սպառազինեսջիր վանել զնոտի զրոյցս և զակնածութիւնս մարդկան, և մի լինիր սիրող դիւրութեանց անձին։ Շռայլութիւնն և մեղկութիւն, ասէր Դաւերեանն, և բազմօրինակ մարդահաճութիւնք են գլխաւոր պատճառք ողբալի վիճակի եկեղեցւոյ։ Սուրբն Ամբրոսիոս՝ի բանից անտի առաքելոյն, թէ «Ոչնչեմ զմարմին իմ և հնազանդեցուցանեմ, զի մի որ այլոցն քարոզեցի, ես ինքն անպիտան գտանիցիմ»։ Զայս ինչ՝ի վերայ բերէ բանս խրատուց թէ որ ոչն ճնշիցէ զմարմին, թէպէս և առաքելաբար վարեսցի, անպիտան է, և՝ի թիւս անարգելոց։

ԼԱ.

Արքայութիւն :

Ա. Դեզ սպասեալ մնան մեծ փառք յերկինս, որդեակ։ Բաբէ, եթէ զայդ զմտաւ ածէիր, զինչ ոչ առնէիր վասն նորին։ Այս պատրաստեցի քեզ զայն. և ասացի թէ ուր ես եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի, որչափ եւս առաւել իմ հաւատարիմ քահանայն. իմ փառք քո եղիցին, և ես ինքնին եղէց վարձք քո անզուգական։ Օ խարդ բերկրեսցի անձն քո զի ընդ դուշնաքէից զորս ինձ ետուր՝ փոխարէն ընկալցիս անհամեմատ չափով, թաթաղուն և զեղուն, այնչափ մերձաւորագոյն առ իս գտեալ, և մեծարեալ յերկինս, որպէս յերկրի եղեր առաւել մօտաւոր և պատուական պաշտամամբք. բաբէ, որպէս ցնծասցես յայնժամ, զի վայել չապէս և արիաբար կրեցեր զծանրութիւն քահանայական վակասին, յորժամ տեսցես զայն փոխեալ 'ի քառամանեակ փառաց։ Ընդ

յերկինս պայծառ փայլեսցեն քան զլուսաւոր ականս պատուականս նշանակք աստիճանիդ, և բազմեսցիս յաթոռ գերագահ, փոխանակ զի եկիր զհետ իմ արհամարհելով զաշխարհ։ Նրանի՛ քեզ, զի աշխատ լեալ վասն հոգւոյդ, և ուսուցանելով զայլս՝ տեսցես կրկնապատկեալ քեզ պսակ 'ի վերս քան զայլոցն յերկինս։

Բ. Որդեակ, տեսանելն եւեթ զքեզ ազատ յամենայն թշուառութեանց աղցաւոր կենցաղոյս, և դադարեալ զամենայն վաստակ և զարտասուս, զխաչս և զհալածանս՝ աներկիւղ և անկասկած այնուհետեւ յամենայնէ, և ազատ յընդհարկանելոյ ընդ մեղս և ընդ մեղաւորս, չէր բաւական քեզ 'ի մխիթարութիւն մեծ յոյժ յոյժ։ Ո՞ինչ ապա լինիցի տեսանել զանձն քո ձոխացեալ ամենայն բարեօք, և ժառանգորդ եղեալ բուն իսկ ուրախութեան Աստուծոյ քո սիրելւոյ։ Սուղ բանիւ ասի այդ որդեակ, իսկ զի՞նչ իցէ խեղամուտ լինել։ Եւ խեղամուտ լինիցիս, յորժամ մուտ գտեալ անդէն, և կարասցես ասել զորքանն փառաց արքայութեան իմոյ, և թէ ո՛րչափ մեծագործ իցէ Աստուած 'ի

լինել վարձահատոյց։ Օ մտաւ ած, որ-
չափ ինչ զօրեաց 'ի Պետրոս 'ի վերայ
Թաբորական լերին դոյզն ինչ Ճառա-
գայթ փառաց իմոց, կամ փայլատակումն
եւեթ նշուլից 'ի Պաւղոս, կամ ուրուա-
կան իմն ստուեր սրբոյ քաղաքին Ե-
րուսաղեմայ Յովհաննու։ Բաւական է, եթէ մի
եւեթ շիթ ցուցեալ սոցա, և ո-
ւմանց ումանց 'ի սիրելեաց իմոց, այնչափ
քաղցր Թուեցաւ 'ի հովտիս տրտմու-
Թեան և արտասուաց, զինչ լինիցի,
յորժամ զօրացեալ աստուածեղէն լու-
սով՝ ոչ եւս առակաւ և օրինակաւ, այլ
դէմ յանդիման տեսցես զիս բացաւ Ե-
րեսօք, և ես ուղխաբար զեղից յանձն
քո զփափկութիւնս իմ։ Յայնժամ ա-
սասցես, Թէ ո՛վ սիրեցեալդ ապաշխա-
րութիւն որ այսքան փառաց արժանա-
ւոր զիս արարեր։

Գ. Ընդ քիրտն մտեր 'ի սուրբ պաշ-
տամանդ, աշխատ եղեր յուսումնասի-
րութիւնս, խոնջեցար 'ի խոստովանա-
րանս, հալածանաց տարար վասն իմ.
այլ բաւական որքան ցնծասցէ սիրտ քո
'ի տեսանել յաճախեալ քեզ զփառս
վասն յանձնառելոցդ հալածանաց, և
վասն քաջ հոգաբարձութեան հոգւոց։

Օ ամենեսին զնոսա շուրջ պար առեալ ունիցիս զքեւ յերկինս. և զինչ զեղումն սրտի յուրախութենէ քան զայդ։ Որ ժամ մի զմիով ելեւեալս առնելով կուտեսցին 'ի վերայ քո շնորհս զքէն ունել՝ աղքատք վասն ողորմութեանցդ, որովք արդեալն 'ի մեղանչելոյ. ապաշխարողք վասն խրատուց և յանդիմանութեանց՝ զոր նոցա արարեր, կամ վասն յապաղելոյդ իսկ զարձակումն առ սիրելոյ զնոսա. ժողովուրդք թեմիդ բարուք հրահանգեալք և դաստիարակեալք. երիտասարդք վառեալք 'ի սէր որբութեան, ընտանիք հաստատեալք 'ի խաղաղութեան. և դու բոլորովին խրախմիտ շնորհս կալցիս հլութեան և հնազանդութեան նոցա, և անպտուղ չառնելոյ զվաստակս քո։ Եւ սուրբք իմ պաշտպանք նոցա, և հրեշտակք նոցին պահապանք, և Մարիամ գլխովին իմ և նոցա մայր, որպիսի սիրալիր սրտիւ ոչ ակնարկեսցեն 'ի քեզ, կամ ուրպէս ինդամիտ զինքեանս ոչ ցուցանիցեն։ Եւ դու մեծապէս շնորհս զնոցանէ ունիցիս, զի այնչափ բարեխօս եղեն վասն քո, և ձեռնտու 'ի կարիս քո սիրով։ Ամենեքին քեզ սպասեալ մնան, որդեակ, մինչեւ տեսցեն զժամն ընկերակից զքեզ

ունելոյ. և ես առաւել ևս քան զնոսա այգմ փափաքեմ։ Այլ զինչ ոչ արարիցս ընդ քեզ. նմանագոյն ինձ արարիցս զքեզ 'ի փառս իմ, որովհետեւ միսիթար ինձ եղեր նմանող լինելով 'ի վաստակս փրկութեան հոգւոց, և փութաջան ինամով առաջնորդեցեր բազմաց գալ առ իս։ Օ մտաւ ած՝ թէ կարիցես, որպէս՛ լինիցի ցնծութիւն 'ի տեսանել անդ զքեզ 'ի մէջ այնչափ հոգւոց և ընդ նոսա ողջագուրեալ 'ի գիրկս իմ։ Վ՛ան պատուիր խնդութեանս, ով անձառ քաղցրութիւն։

Հրահանգք

Պանդուխտ ես 'ի վերայ երկրի. արհամարհեա զ'իսպառ ոչինչ և զանցաւոր աշխարհ. հայրենական քո գաւառ վերին դրախտն է արքայութեան. առաքեա յառաջոյ ողորմութիւնս և բարեգործութիւնս։ Մ՝արտիրոսաց, կուսանաց և վերակացուաց հոգւոց փրկութեան երրեակ պսակք պահեալ կան յերկինս. ցանկացող լեր առաջնոյն, և փութա ստանալ զերկոսին մաքրութեամբ և նա-

խանձաւորութեամբ. մեծ են պարտք քո վասն ողջախոհ մաքրութեան, և վասն փութոյ օգնելոյ հոգւոց՝ 'ի քահանայական կոչմանդ։ Ի ընուլ զպարտս քո զայսոսիկ ոչ փոքու աշխատութեան պէտք են քեզ. բայց յուշ լիցի քեզ, ասէր սուրբն Փիլիպպոս ներեան, զի արքայութիւնն ոչ է վասն հեղգացելոց։ Սուրբն Փրանկիսկոս ասիզացի 'ի խրախուսել անդ զմիանձունս իւր ասէր. Ողբարք իմ, մեծ են ուխտք մեր, այլ մեծամեծք եւս զորս ուխտեաց մեզ տէր. պահեսցուք զմերսն, ցանկասցուք աստուածայնոցն։ Հեշտալիքն են սուղ և չարչարանք փոքր. այլ փառքն են անսահման։ Դազումք են կոչեցեալք, և սակաւք են ընտրեալք. իւրաքանչիւր ոք ըստ վաստակոց ընկալցի զհատուցումն։

ՓՆՆՈՒԹԻՒՆ ԽՂՃԻ

ՎԱՍՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՁԻՆ

Ընդէ՞ր սիրեաց արդեօք ընտրել զպայման ժառանգաւորաց. միթէ վասն շահասիրութեան՝ 'ի ձոխացուցանել զտուն իւր թոշակօք և հասիւք, 'ի հաճել զազգականս, 'ի խորշիլ յաշխատութեանց, և վարել կեանս դիւրութեամբ. կամ վասն ժամանակաւոր բարեաց՝ առանց օրինաւոր կոչման։ Եթէ ընկալաւ զկարգս 'ի մահուչափ մեղս, մանաւանդ սովորեալ 'ի մեղս ընդդէմ մաքրութեան. եթէ ստայոդ վկայութեամբ և առանց պատշաճական գրոց ընծայութեան։

Օ՜ որ վարկ ունիցի զքահանայական պատուոյ, և ոչպէս ցուցանէ զայն արդեամբք. եթէ իւրովք գործովք տացէ պատճառս աշխարհականաց անգոնել զայն յանձին նորուն կամ յայլս։ Եթէ

խնդրեաց ուսանել և հրահանգիլ 'ի դը-
ժուարին պարտս պաշտաման եկեղեցա-
կան վիճակի, և զորպիսի փոյթ ունիցի
յանթերի կատարել զնոսին։

Անթէ ծախեաց զժամանակն առանց
աղօթից. եթէ խելամուտ իցէ թէ
զիարդ հարկաւոր իցեն աղօթք առն
եկեղեցականի. վասն զի առանց այսր
ոչ ուսցի երբէք կեալ ըստ հարկի պաշ-
տաման իւրոյ, և ոչ ընուլ զպարտաւո-
րութիւնս վիճակի իւրոյ. և եթէ գի-
տիցէ, զիարդ արգասաւորեաց։ Անթէ միտ
դնէ ուսման, և ուսումն այն իցէ ինքեան
պատշաճեալ. փոյթ իցէ 'ի հոգևոր ըն-
թերցումն, և որպիսի գիրս ունիցի, անպի-
տանս, աշխարհայինս, ազատասէրս, է-
թէ լաւս. և որպէս 'ի վար արկանէ զնո-
սին, եթէ անցուցանէ զժամանակն յիրս
անշահս և աշխարհականս, կամ 'ի սեպ-
հականս իւրումն վիճակի և 'ի շահե-
կանս պաշտաման իւրոյ. եթէ կեայ
արդեօք պարապորդ առանց յարգելոյ
զտաղանդ իւր, կամ՝ Ջանալոյ 'ի կիր ար-
կանել շահեկանութեամբ զսուրբ պաշ-
տամունս, կամ առանց անճնատուր լի-
նելոյ ըստ կարի 'ի ծառայութիւն եկե-
ղեցւոյ, և 'ի ճեռնտուութիւն և 'ի բա-
րին հոգւոց, չկամելով և 'ի տօնս անգամ

երթալ ուսուցանել զսուրբ վարդապետութիւն քրիստոնէական։ Եթէ եցոյց երբէք զնուազ յարգ, կամ չարաբանեաց, կամ գրեաց զեպիսկոպոսէ իւրմէ. կամ տհաճեցոյց զնա, և անլսող եղեւ նմա. եթէ պակասեցաւ 'ի պատկառանաց որ առ նա՝ գործով, բանիւ, կամ գրով առաջի հովուաց, կամ այլոց երիցանց և կրօնաւորաց քահանայից. եթէ ցանեաց կամ արծարծեաց երկպառակութիւնս ընդդէմ մեծաւորաց կամ հաւասարակցաց. և առաւելապէս՝ եթէ 'ի վերայ հասին վասն այսր անիրաւ զեան, կամ գայթակղութիւն 'ի գղերս կամ յաշխարհականս։

Եթէ քաջ հասու եղեւ ուրչափ ծանր հետևանս ունիցին բարի կամ չար օրինակք եկեղեցական անձին՝ մանաւանդ առաջի աշխարհականաց. եթէ ցուցանէ արդեամբք զայս գիտակցութիւն օրինակօքն զոր տայ ընտանեաց իւրոց և օտարաց, և այնոցիկ ընդ որս վարի ընտանեբար։ Ի՞ իսկզբանէ վարի 'ի փախչելն եթէ՛ յերևուեթէ և եթէ յառթից ախտից, զորս վասն առաւել վնասակար կամ հասարակ գոլոյ պարտին եկեղեցականք օրինօք կշտամբել յաշխարհականս առ ապրեցուցանելոյ զնո-

սա 'ի յաւիտենական դատապարտութենէ. և զայդ չկարէ երբէք առնել, ցորչափ չբառնայ զամենայն ստուերը կասկածանաց չարի զանձնէն։

Որպէս վարէ առաւելապէս զլեզու իւր զարբազանեալն մարմնով և արեամբ փրկչին. եթէ առնու 'ի միտ, թէ բառք ինչ՝ թող թէ ամբողջ բանք՝ կամ ըստ ինքեան, կամ 'ի պատճառս երևելի անվայելչութեան իւրումն վիճակի, կամ բանիւ գայթագղութեան, կամ վասն այլոց մասնաւոր առթից կարեն ժամանել մինչեւ ցմահուչափ մեղս, որ ոչն այնպէս լինէր յայր ոք ռամիկ։

Օ՛ խարդ ի՞ցէ աչալուրջ՝ մանաւանդ յողջախոհութեան մասին՝ անձին նուիրելոյ Աստուծոյ հանդիսիւ, որ ունիցի առանձին պարտաւորութիւնս առաւել քան զայլս. եթէ ցուցանէ արդեամբք, թէ խելամուտ է, զի յայսմ մասին չլինի երբէք գոգցես և յաշխարհականս անգամ փոքրկութիւն կամ չքմեղութիւն. և թէ յեկեղեցական անձին ամենայն մեղք ներգործեալ է կրկնապատիկ չար, վասն ըստ ինքեան մեծեղեռն գոլոյ չարութեանն, և վասն առանձին բանի սեղանակապտութեան 'ի նմա. և եթէ երբէք եթ առիթ մեղաց

ումեք անձին գործակցի, կրկին յանցաւորութիւն է այն ըստ առաջնոյն, և է ծանրաբեռնել զոգին մեղօք և սեղանազերծութեամբ։

Եթէ առնու իւր կանոն գործելոյ 'ի սրբութենէ անտի և 'ի գերազանցութենէ վիճակի իւրոյ, կամ թէ շատանայ կարի նուազագոյն չափովք, որ հասարակ են և ռամկաց։

Եթէ ընկալաւ կամ մատակարարեաց զխորհուրդ ինչ 'ի մահուչափ մեղս. Եթէ 'ի կիր արկ զսուրբ կարգն յայնպիսում վիճակի, կամ ունելով յանձին զբանադրանս ինքն, որով անկեալ էցէ յանկանոնականութիւն. Եթէ 'ի վար արկեալ էցէ կամ շօշափեալ անպատուութեամբ զիրս սրբազանս. Եթէ մատուցեալ էցէ զպատարագ առանց կարևոր նախապատրաստութեան, կամ գոհութեան. կամ 'ի նիւթս անյարմարս, կամ առանց պատմուճանի, կամ անվայելչական սպասուք, կամ յանպատեհ ժամու. ուրշափ ծախէ ժամանակ 'ի պատրաստութեան, և ուրպէս առնէ զայն, ուրշափ 'ի գոհութեան, և զիարդ։ Եթէ պատարագեաց վասն շահասիրութեան եւեթ, վասն մարդկային ակնածութեան, և 'ի սովորութենէ. Է-

թէ 'ի մահուչափ մեղս, կամ յերկբայութեան մեղաց, առանց կարեւոր խոստովանութեան՝ կարող գոլով ունել զխոստովանահայր, և չունելոյ զստոյգ հարկաւորութիւն պատարագելոյ. Եթէ մատոյց զայն հարեւանցի, 'ի նուազագոյն միջոցի քան զերիր մասն ժամու. Եթէ 'ի պատարագելն զանց արար զբանիւք ինչ կամ զարարողութեամբք. Եթէ ելից զպարտս պատարագեաց, և կամ յանձնեաց զայն այլոց առ 'ի չծանրաբեռնիլ առաւել քան զարժանն, և կամ առ 'ի չմոռանալոյ։

Եթէ առանց օրինաւոր պատճառի եթող զժամասացութիւն. և եթէ ասաց զայն պատկառ մտօք, կամ առանց օրինաւոր մտադրութեան և ջերմեռանդութեան, կամ տարադէպ խուճապաւ, կամ կրճատմամբ և շփոթմամբ բանից, եթէ յառանձին ժամասացութեան և եթէ 'ի հասարակաց ժամերգութեան, կալով 'ի դասի առանց պահելոյ զկանոնս նորին։

Եթէ թէպէտ ած եկեղեցական բարձի և պատուոյ և իշխանութեան. և այն առ ինչ վախճան, զիարդ և կամ որպիսի օրինակաւ։

Եթէ առանց առնլոյ զհաւանու-

թիւն յեպիսկոպոսէ լուաւ զխոստովա-
նութիւն, կամ առանց իշխանութիւն
ունելոյ իշխեաց արձակել 'ի դիպուա-
ծոց և 'ի բանադրանաց պահեցելոց։
Եթէ գտաւ՝ երբ 'ի հարկէ պաշտամանն
արժան էր նմա կալ 'ի խոստովանարա-
նի։ Եթէ 'ի մահուչափ մեղս գոլով
լուաւ զխոստովանութիւն, կամ առանց
ներգործութեան զղջման 'ի դիպուածս
հարկի, Եթէ անխորհրդաբար ելոյծ
զինդիր ինչ առանց հարկաւոր հիման։
Եթէ 'ի դժուարալոյծ դիպուածս 'ի կնոջ
արկ զկարեւոր զգուշութիւնս։ Եթէ
ամբարեալ առ իւր ընտիր ընտիր
գիրս, և վարժեցաւ 'ի նոսին, Եթէ
չարաչար զընդհանրական խոստովանու-
թիւնս, որք հարկաւոր էին 'ի պատ-
ճառս ունակութեանց, առթից, հա-
տուցմանց, ատելութեանց և մեղաց
լռեցելոց։ Եթէ եհաւրց զսկզբունս 'ի
վերայ քրիստոնէական վարդապետու-
թեան և ազդարարութեան, տուեալ
դեղոց և ապաշխարանաց՝ մանաւանդ
բուժողականաց։ Եթէ խնդրեաց պըր-
ծանիլ փութապէս՝ մանաւանդ յաւուրս
յորս բաղումք խռնէին 'ի խոստովանու-
թիւն։ Խնդրեաց ողորմութիւնս, ըն-
կալաւ ընծայս իբրու կաշառս։ Եթէ

շատացաւ լոկով խոստմամբ առ 'ի արձակել՝ առանց տեսանելոյ զկարեւոր նշանս ուղղութեան, եթէ արձակեաց զսովորեալսն անկանել կրկին և կրկին 'ի մեզս, կամ զայնպիսիս ոչք չկամիցին թողուլ 'ի բաց զոխակալութիւնս, զներգործութիւնս մեղանչականս, և զառիթս մերձաւորս. կամ զայն՝ որ ոչն հատոյց զոր կարէր, և խոստացեալ իսկ էր առնել. եթէ ամրկ 'ի փորձ կարեւոր դարմանս հնարից առ սրսալոյ զայդպիսի չուառականս. եթէ վարեցաւ ընդ նոսա նուազ կամ աւելի նեղողամտութեամբ։ Նթէ իւրով եղանակաւ խօսելոյ ատելի արար զխորհուրդ խոստովանութեան։ Նթէ իւրով յանցաւորութեամբ զայսպիսի մեծ խորհուրդ արար առիթ հոգեւոր գլխոր-մանն անձին կամ այլոց։

Նթէ պակասեաց յատենէ ժողովոյ՝ մինչ պարտ էր ինքեան գտանիլ. կամ գրաւեաց զթոշակս՝ երբ մին բաւական էր նմա յանդորր բարեկեցութիւն։ Նթէ զբռամբ ած զթոշակս, կամ կորզեաց զտնօրինմունս յարամբի մտեալս կամ մուծեալս, և կամ սիմոնականութեամբ հանդերձ։ Նթէ զգուշացաւ 'ի վերայ եկեղեցական ընչից որպէս 'ի

ժառանգակալութեանց Քրիստոսի և աղքատաց, իբրեւ 'ի վերայ ուխտից հաւատացելոց, և գնոց արեանն տեառն։ Վասն որոյ և բարուք քննեսցի, եթէ արդար ողորմութիւն յաւելորդաց առ իւր կարեւոր պարէն։ Եթէ 'ի գործ արկ զհասս թոշակի 'ի Ճարակ ագահութեան կամ փառասիրութեան ազգականաց, կամ առ 'ի դարմանել զանձն շռայլութեամբ, շքով, խաղիւք, կամ յայլ իրս անարժանս։ Եթէ օտարաց ցոյց զգետինս կամ զիրս թոշակին. Եթէ յետնեալ գտաւ 'ի լցուցանելոյ զայլ ծանրութիւնս և զպարտաւորութիւնս թոշակի իւրոյ։

Եթէ 'ի հոգաբարձութեան հոգւոյ երկեալ 'ի ծանր և յահագին բեռանէ անտի, որ վասն ունի համարս տալ ոչ միայն զանձնէ, այլ և զմիոյ միոյ 'ի հոգւոց առանդելոց 'ի ձեռս իւր. Եթէ հրահանգեալց գոնէ 'ի կիւրակէս և 'ի տօնս տարեւորս զժողովուրդ իւր 'ի վերայ կարեւորաց առ փրկութիւն. Եթէ չմեկնեալց նոցա զաւետարանն, կամ թէ արար զքրիստոնէական և զժողովրդապետական զրոյցս լոկ առ աչս կամ առ փառասիրութեան կամ շահասիրութեան և այլոց անարժան վախ-

Ձանաց, և այն յանպատրաստից, անոՀ, անեռանդն, և յանհոգս ընդդէմ պարտուցն։ Եթէ չեղեալ պատրաստական 'ի մատակարարել զսուրբ խորհուրդն ողջոց և հիւանդաց. եթէ չարար աղօթս վասն ժողովրդեան իւրոյ, և չմատոյց զպարտաւոր պատարագս։ Եթէ յանբաւական լինելն անձամբ առ 'ի պէտս ժողովրդեան հոգացաւ ունել զգործակից քահանայ, և զերկրորդ նմին, և զխոստովանահարս, և զորպիսիս։ Եթէ խնամ կալաւ, զի ժողովուրդն ընդ ժամանակս ժամանակս ունիցի ըստ արժանւոյն զքարոզութիւն բանին Աստուծոյ, և զխոստովանահայր ոք օտար։ Եթէ չկալաւ փոյթ վասն գետնոյ, շինուածոց, գրոց, վիճակի անձանց մկրտելոց, պսակելոց, վախճանելոց, և վասն դիւանի 'ի պահել զգրուածս, և զկրեանն, և զհաշուեգիրս եկեղեցւոյ։ Եթէ ոչ կալաւ զհաշիւ աւանդից և պարտաւորութեանց, կահուց կարասեաց, սպասուց եկեղեցւոյ և աղքատաց։

Եթէ կալաւ խաղաղութիւն ընդ ամենեսին, և եցոյց զայն առ ամենեսին. եթէ խնդրեաց և պինդ կալաւ պահել զխաղաղութիւն 'ի մէջ բոլորեցունց, եթէ արար զայն անիրաւ կու-

սակցութեամբք, և անպատեհ ընտանութեամբք, և որոմ վախճանաւ։ Եթէ եւ գայթագղութիւն, կամ չար օրինակ, կամ առիթ քրթմնջելոյ զանձնէ իւրովք գնացիւք և վարուք։ Եթէ ոչ տքնեցաւ և արգել և կշտամբեաց իմաստութեամբ զմեղս ժողովրդեան իւրոյ։ Եթէ արդարութեամբ և օրինօք արար զգիր վկայութեանց կտակաց։ Եթէ ելից ըստ պարտեաց զկարգաւորութիւնս մեծաւորաց, և զվճիռս այցելութեան. Եթէ պահէ զամենայն ինչ 'ի կարգի. որպէս զի և 'ի յեղակարծ այցելութեան մարթասցի անդորրութեամբ արդարանալ առաջի մարդկան և Աստուծոյ։

ԱԶԴԱՐԱՐ ԲԱՆԻ

ԱՌ ԽՈՍՏՈՎԱՆԱՀԱՐՍ

ՔԱՂԵԱԼԻ Ի ԳՐՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՑԱՑ

Կաւ յանձին զմեծ մաքրութիւն և զյստակութիւն խղճի մտաց, քանզի հարկ պաշտամանդ է սրբել և մաքրազարդել զայլոցն, զի մի 'ի դէմս ածցի քեզ հին առակն թէ "Բժիշկ բժշկեա զանձն քո"։ և առաքելականն, "Որով զայլս դատիս՝ զանձն քո դատապարտես"։ Ամին իրի եթէ հանդերձեալ երթալ 'ի խոստովանեցուցանել՝ դատես զանձն քո, որ քաւ 'ի քէն, 'ի մահուչափ ինչ մեղս, պարտ է քեզ նախ գնալ խոստովանել և ընդունել զարձակումն։ Իսկ եթէ ոչ կարիցես առնել զայդ առ 'ի չգոյէ խոստովանահօր, պարտիս արծարծանել 'ի քեզ զսուրբ զղջումն։

Ոչ քեզ պարտ շատանալ առ մատա կարարութիւն խորհրդոյս ազատ գտանել 'ի մահուչափ մեղաց, այլ եթէ ցանկաս առնել պտուղ հոգւոց՝ կարի կարեւոր է քեզ նախ անձամբ գործել զայն առաքինութիւնս հարկաւորս, զոր յայլս ցանկանաս. վասն զի առաւել շարժեն օրինակք՝ քան բանք. և չէ մարթ քաջ ուսուցանել այլոց զառաքինութիւն առանց առնելոյ անձամբ։ Սուրբն Կարոլոս Պորրոմէոս։

Յորժամ մատչիս 'ի լսել զխոստովանութիւն, վերակնեալ մտօք առ Աստուած՝ ուղղեա ներգործութեամբ զդիտաւորութիւն քո 'ի փառս եւեթ Աստուծոյ, և 'ի փափաքումն փրկութեան հոգւոց, խորհելով արթնութեամբ, զի երթաս 'ի լուանալ զապաշխարողն պատուական արեամբ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Սուրբն Կարոլոս։

Նա քանզի բազում վտանգք առաջի կան 'ի տնտեսութեան խորհրդոյս այսորիկ, զոր օրինակ սխալել 'ի վճռել անդ զդիպուածոց և զպարտաւորութեանց պատահելոց, կամ 'ի տալ զարձակումն անարժանից, կամ իւիք իրօք արատ ձգել և յանձն իւր գլխովին, վասն որոյ մի երթար 'ի լսել զխոստո-

վանութիւն, եթէ ոչ նախ համառօտ
իմն աղօթիւք, ըստ տանելոյ ժամանա-
կին, խնդրեցեա շնորհս և լոյս 'ի տեառ-
նէ, զի մի վրիպակ ինչ գործեսցես, այլ
այնպէս լուսացես զաղտս ոգւոց այլոց,
զի մի շաղախեսցես զքո հոգիդ. աղօթս
արա վասն դարձի այնոցիկ, զորոց լսել
առաջի կայ քեզ զխոստովանութիւն։
Սուրբն Կարոլոս։

Կարի հարկաւոր է հօր խոստովա-
նութեանց պարտուպատշաճ և բաւա-
կան հմտութիւն բարոյական աստուա-
ծաբանութեան. և առ ստանալ զայդ
պէտք են կրթիլ յուսումն նորա. և է-
թէ 'ի պաշտել անդ զայս խորհուրդ
դիպիցին իրք դժուարինք, յառաջ քան
զպատասխանի տալ, ա՛ռ քեզ ժամանակ
և խորհուրդ։ Այրն խոստովանու-
թեան յիրս երկբայութեան մի շատաս-
ցի ակն արկանել 'ի մի եւեթ մատեան,
այլ 'ի բազումս հայեսցի, և 'ի նոցա
միջի յառաւել ակնածելիս. և ապա
կալցի զայն կողմն, զոր գտցէ հաստա-
տուն՝ պատշաւոք և դիտութեամբ մա-
տենագրաց։

Զ՝ալով առ խոստովանորդիս՝ յուշ
լիցի քեզ, զի նոքա 'ի սկզբան խոստո-
վանութեան հայր անուանեն զքեզ.

և դու արդեամբք պարտիս ունել առ նոսա սիրտ հայրագորով, ընդունելով զնոսա սիրալիր փութով և ծայրագոյն սիրով և երկայնմտութեամբ տանել տխմարութեան, տկարութեան, և այլոց եւս թերութեանց նոցա, չլքանելով երբէք օգնական և ձեռնտու լինել նոցա, ցորչափ կայ 'ի նոսա յոյս իմն ուղղութեան։ Լուր զինչ ասէ սուրբն Բեռնարդոս. Մէր հովուաց չունի լինել լոկ նպաստամատոյց զօրաւոր հոգւոց, այլ և տկարաց և կթոտելոց. վասն զի զօրաւորքն ըստ բաւականին առնեն անձամբ անձին, այլ պիտոյ է տանել տկարաց. զոր օրինակ անառակ որդին թէպէտեւ մերկ դարձաւ և վատթարեալ և ժահահոտ 'ի խոզարածկենացն, բայց և այնպէս հայրն ողջագուրեաց զնա, համբուրեաց սիրողաբար, և արտասուօք թանայր զնա. վասն զի հայր էր նորա, և սիրտ հարց մտադիւրագոյն է 'ի գորով։

Բերցես յանձին զխոհեմութիւն բժշկի. վասն զի հիւանդութիւն և վէրք հոգւոյ են մեղք. և ուշիմ մտօք քննեա զշարժմունս սրտի խոստովանորդւոյդ, զի ըստ նմին վարեսցիս ընդ նմա։

Եթէ տեսանես զնա վրդովեալ շա-

ռագունութեամբ և ամբիծապարտու-
թեամբ, քաջալերեա զնա և սրտապնդեա և համարձակեցո առ քեզ և ասա.
Ես եմ և ոչ դու հրեշտակք ոմանք եմք.
և չէ պարտ զարմանալ թէ մարդիկ մեղանչական լցեն. իսկ խոստովանութիւն
և ապաշխարութիւն առնեն զմարդ անհամեմատ պատուական, քան որչափ
մեղքն կարիցէ անարգ կացուցանել. և
Աստուած յառաջ քան զամենայն, թող
թէ խոստովանահայրն, չհային 'ի մարդ
ոք ըստ նախկին վիճակի անցելոյ, այլ
ըստ այնմ զոր այժմդ վարեն. և մեղք
խոստովանեալք հետախաղաղ թաղեալ
կան առաջի Աստուծոյ և խոստովանահօր, մինչ զի ոչ եւս այլ յիշեսցին։

Այս սկիզբն արա հարցանել զնա
զկրաց թեթեւագունից, որպէս զլուեալ
բանից անհամեստից. 'ի լրոյ էջ 'ի խորհուրդս, և 'ի խորհրդոց 'ի բաղձանս,
'ի կամն, և 'ի գործս. և այսպէս տակաւ տակաւ և քաղցր օրինակաւ ածցես
զապաշխարողն ամբիծահարեալ յառնել զկատարեալ խոստովանութիւն։

Եթէ անամբիծ տեսանես զնա և անզգաստ, յուշ ածցես նմա թէ գայ անկանել առաջի Աստուծոյ. և թէ աստանօր բանն է վասն յաւիտենական

փրկութեան նորա. և թէ 'ի ժամ մահուան ոչ վասն այլոյ բանի ունիցի այնպէս ճիշդ համար տալ, որպէս վասն չարաչար խոստովանութեանց իւրոց. և թէ յարձակման 'ի մէջ բերի գին և յարդ մահուան և չարչարանաց տեառն մերոյ։

Նթէ տեսանես զնա նեղեալ և տարակուսեալ վասն ընդունելոյ զթողութիւն մեղաց իւրոց, քաջալերեա զնա՝ ցուցանելով նմին զմեծ հաճութիւնն որով միսիթարի Աստուած յապաշխարութենէ մեծամեծ մեղաւորաց. և թէ 'ի մերումն նուաստութեան առաւել փառաւորի ողորմութիւնն Աստուծոյ. և թէ տէրն մեր աղօթեաց առ Աստուած հայր իւր վասն խաչահանուացիւրոց, առ 'ի տալ մեզ գիտել, զի թէպէտեւ 'ի խաչ հանեալ էր մեր զնա ձեռօք մերովք, մտադիւր սիրով թողութիւն մեզ շնորհէր. և թէ այնչափ մեծարոյ է յաչս Աստուծոյ ապաշխարութիւն, մինչ զի և դոյզն ապաշխարութիւն յաշխարհի՝ միայն թէ 'ի ճշմարիտ սրտէ լինիցի, տայ նմա 'ի մուրացօնս արկանել զամենայն ազգ մեղաց. և թէ մեծամեծք 'ի սրբոց եղեն երբեմն մեծամեղ մեղաւորք, որպէս սուրբն Պե-

տրոս, սուրբն Մատթէոս, Մագդաղէ-
նացին. և որ մեծն է, մեծապէս թըշ-
նամանէ զՄ.ստուած և զմահ և զչար-
չարանս նորա անարգասաւոր համարի,
յորժամ անվստահ լինիցի վասն ընդու-
նելոյ զթողութիւն անօրէնութեանց
իւրոց. նմին իրի դարձեալ ուսուցանեն
մեզ հաւատք խոստովան լինել'ի թողու-
թիւն մեղաց, զի մի՛ յերկուասցուք բնա-
ւին ընդունել զայն 'ի խոստովանու-
թեան։ Սաղէդոնն։

Այլ զոք տեսանիցես մերձեցեալ 'ի
խոստովանութիւն առանց ներքին կամ
արտաքին տրամադրութեան, օրինակ
ինն, զի զկարեւորն քննութիւն չիցէ ա-
ռարեալ, և ոչ 'ի վերայ մեղացն զղջա-
ցեալ և կամ յաղօթս ապաւինեալ
զդոյզն ինչ ժամանակ, պարտիս ազդ
առնել նմա քաղցրութեամբ, զի նախ
պատրաստեսցի ըստ արժանւոյն, և ա-
պա դարձցի առ քեզ։ Սուրբն Կարո-
ղոս։

Այլ կանայք գան առ քեզ աւելորդ
պաճուճանօք, և ոչ 'ի հանդերձս պար-
կեշտս, որպէս վայել է յարգութեան
խորհրդոյն և վիճակի ապաշխարողին,
որ իբրեւ մեղապարտ երթայ յատեանն
Մ.ստուծոյ խնդրել զողորմութիւն և

զԹողութիւն, պարտ է հեռի առնել զնոսա 'ի խորհրդոց, մինչեւ 'ի բաց գիցեն զուռնայնասիրութիւնս։ Կղեմ։ ԺԱ։

Եթէ տեսանես զի ապաշխարողն 'ի կողմանէ իւրմէ փոյթ ինչ կալաւ առ օրինօք խոստովանիլ, բայց առ իւրոյ անընդունակութեան կամ վասն այլոյ բանի երևի քեզ՝ Թէ չիցէ քաջ քննեալ զխիղճ մտաց իւրոց, կամ Թէ զխոստովանութիւնն աղաւաղէ առ չգիտելոյ բարւոք բացայայտել, վարելով անհամեստ խօսս, կամ 'ի մէջ բերելով չքմեղութիւնս, պատճառանս և պատմութիւնս, պարտ է քեզ երկայնմտութեամբ ընուլ զԹերին բարեպատեհ հարցուածովք։ բայց չէ պարտ ընդհատել զխօսս նորա, եԹէ ոչ առ լաւ եւս հասկանալոյ զիրսն, մինչեւ աւարտեսցէ զամենայն զոր կամիցի ասել։ յայնժամ քաղցրութեամբ և սիրով ուստ նմա զառաւել պարկեշտ եղանակ բացատրութեան, և խելամուտ արա զնա անպատեհութեանց, և Թերութեանց նորա 'ի խոստովանութեան, այլ առանց յանդիմանելոյ զնա։ Սուրբն Կարոլոս Սալէղէանն։

Եւ քանզի փորձն տայ հասու լինել, զի յոլովք՝ մանաւանդ գռեհիկք, չամ-

բաստանեն զանձինս վասն բազում բա-
նից կարևորաց, որպէս զի խոստովանա-
հայրն մարթասցի առնել ուղղութեամբ
զիւր պաշտօն, մեծապէս հարկաւոր է,
ըստ որում յուշ առնէ սուրբ Ժողովն Լատ-
տերանու, զի հայրն խոստովանութեան
հարցցէ զպարագայս մեղաց անձին մե-
ղաւորի, առ'ի կարող լինելոյ տալ զպատ-
կանաւորն խրատ, և այնպէս ապաշխա-
րողն ընկալցի և պահեսցէ զառողջու-
թիւն հոգւոյ։

Այլ ուրեմն յոչ ունել քո ծանօ-
թութիւն զխոստովանողդ՝ պարտիս
հարցանել զնա վասն վիճակի նորա,
հանգամանաց, գործոց, արհեստի և ո-
րոց 'ի սոցին սակի։ Յորչափ ժամա-
նակս չիցէ խոստովանեալ. արարեալ
իցէ զ'ի վերայ եդեալ ապաշխարանս.
յիշիցէ՞ ինչ մի մնացեալ 'ի յետին կամ
յայլ խոստովանութիւնս։ Այլ յետ ա-
սելոյ նորա զոր յիշէն, պէտք են հար-
ցանել զնա՝ եթէ լաւ համարիս, 'ի վե-
րայ մեղաց՝ զոր ստէպ գործեն անձինք,
որք իցեն 'ի նմին վիճակի և հասակի և
'ի հանգամանս և 'ի գործս. բայց խոհե-
մութեամբ և զգուշութեամբ, մանա-
ւանդ 'ի հարցանել զկանայս և զման-
կտի. զի մի ուսանիցին զոր ոչն գիտեն,

'ի կիր արկանելով զբանս՝ որ ոչ կծանի-
ցեն զականջս խոստովանողաց։ Հարց
ջիր զնա 'ի վերայ չար յօժարութեանց
և հաճութեանց. եթէ անկեաւ էցէ 'ի
մահուչափ յանցուածս խորհրդոց, կամ
հայեցուածոց, կամ անմաքուր գործոց,
հարց զտեսակսն, և զպարագայս՝ որ
փոխեն զտեսակն, կամ մեծապէս ծան-
րացուցանեն, որպէս և զթիւն։ Սո-ղբ-
Կարոլոս։

Հարց և զպատճառն մեղաց, հայե-
ցուածն էցէ, եթէ կենակցին, կամ
ըսելն, կամ ընթեռնուլն, զի կարող լի-
ցիս 'ի բաց բառնալ զայն։ Հարց եթէ
'ի յետին կամ յանցեալ խոստովանու-
թիւնս անկեաւ էր 'ի նոյն յանցանս.
վասն զի այս հարցումն է կարեւոր յոյժ
'ի գիտել, եթէ ապաշխարողն էցէ կըր-
կին և կրկին գլորեալ, կամ էցէ 'ի մեր-
ձաւոր առթի իրիք մեղաց։ Բանի
քանի ստէպ գլորեալք առնուն զարձա-
կումն վասն չքննելոյ և չգտանելոյ զու-
նակութիւնն կամ զառիթն պատշաճա-
կան հարցուածովք։

Յուշ լիցի քեզ զի մերձաւոր առիթ
ոչ այն միայն է, յորում յաճախ մե-
ղանչէ ոք գործով, այլ և յորժամ կայցէ
յաճախութիւն սահեցմանց լոկով իսկ

մեղք անմաքուր շարժմանց, զրուցաց, ցանկութեանց, և մահուչափ հաճութեանց. և թէ աւ 'ի լինել առիթ մերձաւոր չէ հարկ զի գլորումն ինչ բազում անգամ, այլ այնպիսի համարեալ լինի, թէ և ոք չգլորիցի 'ի բազում նուազս, հայելով 'ի պատճառս չգլորելոյն. իբր զի յայն նուազս չեղեւ դիւրութիւն կատարելոյ զչարն, կամ գործակիցն չէաւ յանձն. ուստի անպակաս են մերձաւոր առիթք՝ մանաւանդ 'ի խօսակցելն, 'ի ցուցանել զսէր, 'ի կենակցինն կարի ընտանութեամբ, յաճախութեամբ և աղատօրէն։

Յարց զնա յաղագս պահեցողութեան աւուրց պահոց և աղուհացից, և զսրբութեամբ տօնից։ Ի մանաւորի հարցջիր արդեօք յարհեստի անդ իւրում կորզեաց զինչս այլոց, կամ պահեաց յանիցաւի, կամ էաւ 'ի ձեռաց որդւոց տանուտեաւն, կամ 'ի գողոց։ Եթէ ունիցի պարտս կամ վարձս հատուցանելիս. եթէ եւ զեան, կամ խաբեաց 'ի տուրեւառս կամ արար սակարկութիւնս անարդարս. եթէ յանցեալ ժամանակս ինչ արարեալ, և հատոյց զիրան։ Եթէ աւելորդ ծախիւք շռայլութեան, փառասիրութեան, զբօսասիրութեան

վատնեաց զժառանգութիւն որդւոց։ Օ կանայս հարցջիր 'ի վերայ ունայնասիրութեան և անպարկեշտ զգեստուց, և յաղագս գստերաց։ Յարց զհարս և զմարս, եթէ հրահանգիցէ՞ն զորդիս, հսկիցէ՞ն 'ի վերայ ընթացից նոցա, և խրատիցէ՞ն զնոսա, եթէ արգելուցո՞ւն 'ի սիրոյ օտարաց. եթէ պահէ՞ն զտղայս յանկողնի իւրեանց նախ քան զտարեկանն լինել, կամ զկնի հնգամեայ տիոց։ Յարց զգեղջուկս, եթէ գիտէ՞ն զերս կարևորս 'ի գիտել հարկաւորութեամբ միջոցի և պատուիրանի։ Օ կնի ամենայնի՝ 'ի վերայ մեղաց զանցառութեան, և առաւել 'ի վերայ պարտաւորութեանց սեպհական վիճակի. լուսն արդեօք երբէք հայհոյութիւն. և ունիցի՞ն առ իւրեանս գիրս վատթարս. ունիցի՞ն ինչ խայթ խղճի 'ի վերայ անցելոց կենաց։

Պարտ է քեզ և զայն հարցուածս առնել 'ի վերայ անցելոց խոստովանութեանց, որ հարկաւոր իցեն 'ի գիտել, թէ լեա՞լ իցեն յոչինչ. որպէս եթէ կամաւ լուեաց երբէք զմահուչափ մեղս ինչ, կամ խոստովանեալ իցէ առանց իւրեք զղջման և ցաւոյ 'ի վերայ մեղացն, կամ առանց առաջադրութեամբ ուղղելոյ զանձն, կամ առանց բնաւին փոյթ

ունելոյ յիշել քննութեամբ զմեղս իւր։ և յայսպիսում դիպուածի հարկաւոր է տալ նմա առնել զընդհանրական խոստովանութիւն։ Եւ քանզի յոլովակի սովոր է դիպել բազում անհոգութեանց 'ի խոստովանութեան, որպէս է տեսանել առաւելապէս 'ի ժամանակին՝ յորում ոք ոչն կեայ յերկիւղի տեառն, և ոչինչ կամ կարի դոյզն ինչ հոգայ զհոգւոյ իւրմէ, և յամենայն դէպս մեծապէս օգտակարութեան մատչելոյ յընդհանրական խոստովանութիւն, մանաւանդ 'ի սկզբան անդ՝ յորում ոք հաստատութեամբ դնէ 'ի մտի ճշմարտապէս յուղղութիւն գալ, և դառնալ առ Աստուած, ըստ տանելոյ անձին և տեղւոյ և ժամանակին յորդորեա զխոստովանորդիս առ առնել զբարիոք խոստովանութիւն ընդհանրական. որպէս զի սովիմբ առաջի աչաց բերելով զբովանդակ զանցեալ կեանս՝ ջերմագայնս դարձցին առ Աստուած. և այնպէս լցցեն զբովանդակ թերութիւնս, որ լեալ իցեն յանցեալ խոստովանութիւնս։

Սուրբն Կարոլոս։

Յետ պատկանաւոր և կարեւոր հարցմանց առ 'ի գիտելոյ զվիճակ ապաշխարողին՝ տեսցես իցէ արժանի արձակման

թէ ոչ։ Եւ զի մի լինիցի քեզ արձակել զոչ իսկապէս արժանիս, որպէս ստէպ պատահէ անմտածութեամբ կամ անհոգութեամբ կամ դեգերելով յոգունց զբազում ժամանակս 'ի նոյն մեղս, և խարդաւանիլ հոգւով յողբալի կործանումն, նշանակեսցուք յայսմ վայրի դիպուածս ինչ կարի յաձախեալս, յորս պարտ է ժխտել կամ յապաղել զարձակումն։ Սուրբն Կիպրիանոս։

Ա. Զէ ընդունակ արձակման անգէտն գլխաւոր սկզբանց հաւատոյ։ Եւ եւս եթէ չգիտէ ոք զամենայն մասունս առաքելական հանգանակին գէթ ըստ գոյացութեան, և զպատուիրանս Աստուծոյ և եկեղեցւոյ, և զտէրունական աղօթս, և զայլ բանս հարկաւորս 'ի գիտել հարկաւորութեամբ պատուիրանի, և չիցէ դիւրապատրաստ առ ուսանել փութով, չպարտի խոստովանահայրն արձակել զնա։ Այլ եթէ խոստասցի առնել զիրսդ սրտի մտօք, բայց և յայլ նուազս խրատեալ՝ չիցէ տարեալ զկարևոր փոյթ ուսանելոյ ըստ իւրում կարի, յապաղեսցէ զարձակումն մինչեւ յուսանել։ Իսկ եթէ չիցէ կանխաւ խրատեալ, հրահանգեսցէ զնա որչափ հար-

կաւորն է, և արձակեսցէ։ Սուրբն Կա-
ղոլոս։

Բ. Խոստովանահայրն մի՛ արձակեսցէ զտանուտեարս, եթէ ոչ խոստանան զուղղութիւն, կամ եթէ բազում անգամ ազդեալք չեկին յուղղութիւն, մինչեւ չտայցեն զստոյգ նշանակս և զփորձս ուղղութեան, զհարս ասեմ և զմարս, որ չտանին փոյթ զի որդիք իւրեանց և ծառայք ուսցին զկարեւորս սրբութեան հաւատոց, կամ չհոգան զի պահեսցեն զպատուիրանս Աստուծոյ և եկեղեցւոյ, կամ խափան լինին պատուիրանապահութեան. որպէս առնեն նոքա՝ ոյք այնչափ զբաղեցուցանեն զծառայս, մինչև իւրք օրինակաւ ստիպեն զնոսա աշխատիլ վասն իւրեանց՝ ի տօնս, կամ չտան նոցա ժամանակ պատարագ տեսանելոյ՝ ի տօնս. և նոքա ոյք ընթրիս տան, կամ թողուն ընթրել որդւոց պարտաւորելոց՝ ի ծոմապահութիւն, կամ տան ճաշել՝ ի ծոմաւորս յառաջքան զկարգեալ ժամն. նոյնպէս և նոքա՝ ոյք չարձակեն՝ ի բաց՝ ի տանէ զաղախինս և զծառայս գայթակղեցուցիչս, որ յետ յոլով անգամ խրատելոյ կան մնան անուղղայք։ Սուրբն Կարոլոս։

Գ. Սովին օրինակաւ վարեսցի խոստովանահայրն ընդ այնոսիկ, որք յաւելորդ պՀնութիւնս մարմնոյ և 'ի շքեղութիւնս մահուչափ մեղանչեն. և զի պաՀուՀանք և շռայլութիւնք ժամանակիս անցեալ են ըստ չափ, և այն բազում մասամբ յանցաւորութեամբ և անհոգութեամբ խոստովանահարց, որք անխորհրդաբար և առանց խիղՁ արկանելոյ թերեւս խոստովանորդւոց արՁակեն զնոսա, դիցուք աստանօր գլուխս ինչ բանից, յորս զարդասէրք և պաՀուՀասէրք մահուչափ մեղանչեն. որպէս զի յարՁակման լիցի վարիլ ըստ նոցին։ Ընդ յորժամ լինիցի պՀնիլ և զարդարիլ շքով 'ի սակս մահուչափ մեղաց, լինի մահուչափ մեղանչել։ Յորժամ այսպիսի պաՀուՀանօք պատուիրանազանց գտանին, կամ տան այլոց զանցանել զպատուիրանաւ իւրք Ընտուածոյ կամ եկեղեցւոյ, զոր օրինակ գործելով 'ի տօնս, կամ տալով գործել երևելի օրինակաւ, կամ թողուն զպատարագ կամ տան թողուլ առ 'ի զարդարիլ, կամ պատՁառ լինին զի արք իւրեանց և կամ այլք հայհոյիցեն, շահեսցին և արասցեն սակարկութիւնս արդելեալս, կամ դադարեսցին 'ի հա-

տուցանելոյ զբարեպաշտ տուրս, կամ զայլ պարտս կարեւորս, կամ պահեն կամ յապաղեն զվարձս վարձկանաց, կամ առնեն նորանոր պարտս, զորս չկարեն վճարել 'ի պայմանեալ ժամանակի, ուստի ծագեն ինքեանք ընկերին, և չկարեն զետեղել պակաւ զդստերս ժամանեալս յարբունս յորմէ մեծամեծ չարիք յառաջ գան, կամ այլ այսպիսի մեղք ծնանին կամ ունին ծնանիլ, զորս է տեսանել առ հասարակ ծագեալս յաւելորդ շքոյ և 'ի զարդուէ. վասն որոյ և այն պաշտօնանք 'ի մահուչափ մեղս համարեալ են։

Եւ զի դրեթէ անկարելի է զի յորժամ ոք վատնէ զինչս կամ վարի աւելի քան զչափ իւր, ոչ ճանաչիցէ կամ կաղրողասցի և պարտական իցէ ճանաչել թէ անտի յառաջ գան կամ ունին յառաջ գալ այնպիսի մեղք, մարթ է առնել իբրու հասարակ դատաստան, թէ այնպիսիքն են 'ի մահուչափ մեղս, եթէ ոչ 'ի զգուշաւոր քննութենէ, զոր առնէ խոստովանահայրն 'ի վերայ խոստովանորդւոյն՝ հաւատի երևեցի նմա հակառակն վասն մասնաւոր պատճառի։

Ասեղանչէ ոք մահուչափ և յեղանակն զարդարելոյ թէ ծախքն չանցցեն քան

զվիճակ և զկար անձին. զոր օրինակ եթէ զարդարանքն է ձգիչ յանառակութիւն՝ կամ ըստ ինքեան, կամ ըստ հասարակաց դատման առ մարդիկ. և կամ թէ թէպէտ չիցէ սաղրիչ ըստ ինքեան, այլ հաւանականաբար լինի երկբայիլ կամ մակաբերել, թէ 'ի պատճառս այնպիսի պճնութեան անսովոր եղելոյ հասարակաբար առ լաւ անձինս համավիճակս, առանձնական ոք շարժիցի 'ի սիրել զնա անհամեստութեամբ, կամ մանիցի յայդ մեղս. և զայս գիտելով տակաւին անփոյթ առնէ զհոգեւոր փրկութենէ մերձաւորին իւրոյ։ Սուրբն Կարոլոս։

Ապա չեն արժանի արձակման եթէ չխոստանան զուղղութիւն, կամ թէ յետ խոստանալոյն յայլ նուազս՝ չեկին յուղղութիւն կանայք այնոքիկ ոչք 'ի զգենուլ անդ ցոփութեամբ գնան յանպարկեշտս թիկնաբաց և լանջաբաց՝ եթէ արտաքոյ և եթէ առտնին, կամ վարեն քօղս թափանցիկս, կամ զգեստս բարակամանս 'ի գայթագղութիւն տեսողաց։ Սրբազան հայրն Ինոկենտիոս ԺԱ. եդ զվերապահեալ բանադրանս, յոր ունիցի անկանիլ խոստովանահայրն անգամ, եթէ արձակեսցէ զայնպիսիս։

Դ. Օ գոյշ լիցի խոստովանահայրն չարձակել զայնոսիկ որք կուեն դաշինս յանուանէ արգելեալս, կամ յայտնապէս անպատեհս, եթէ նախ չքակեն զայնպիսի դաշն, կամ չառնեն զարժանին հատուցումն. և եթէ դաշինքն են երկբայականք, յորժամ խոստովանողին տացէ բան զայն կողմն ունել՝ յոր վճիռ ելցէ, կարէ արձակել զնա։ Մի արձակեսցէ յառաջ քան զօրինաւոր հատուցումն ոչք ունին զայսմանէ պարտաւորութիւն ինչ եթէ ըստ ընչից և եթէ ըստ մնասուց եղելոց ընչից կամ անուան, երբ մարթ իցէ վճար առնել։ Սուրբն Կարոլոս։

Յապաղեսցի արձակումն այնոցիկ ոչք ոչ վճարեն զպարտս իւրեանց, երբ ունին կարողութիւն վճարելոց։ Այլ եթէ յայլ նուազ խոստացան վճարել, և ոչ պահեցին, ցորչափ խոստումն մնայ 'ի կախ, յապաղեսցի և արձակումն նոցա մինչեւ 'ի վճարումն։ Ա'րչափ անձինք դատապարտին վասն ընչից այլոց, և վասն ոչ վճարելոց։ Այթէ խոստովանահարքք վարէին ըստ այսմ կանոնի, ոչ վճարքք և ոչ պարտք յերկարաձգէին ցտասն և ցքսան ամն, և ոչ լինէին այնչափ չարաչար վճարողք։ Մի լինիր

դիւրահաւան և դիւրանսաց բանից չա-
ղաչար վՀարողին, և պարտապանին 'ի
հատուցանել, մանաւանդ եթէ ընչեղ
ից է. վասն զի այսպիսիք առաւել դժուա-
ղաւ հատուցանեն, եթէ չունիցիս յոյս
հաւատի թէ կամիցին հատուցանել։
Այսպիսիք, ասէ տուրբն Ֆրանկիսկոս
քսաւերեան, յառաջ. քան զարձակումն
խոստանալով խոստանան, այլ զկնի
չպահեն զխոստումն։

Ե. Ոչ արժան արձակել և զորս
չկամիցին 'ի բաց դնել զթշնամութիւնս,
զատելութիւնս, կամ ներել և հաշ-
տիլ։ Դարձեալ և զծակիցս, եթէ ոչ
կեան 'ի միասին առանց օրինաւոր պատ-
Հառի։

Զ. Ոչ արձակեսցէ խոստովանա-
հայրն զՀրապարակական կամ զգայ-
թագղեցուցիչ մեղաւորս՝ առանց 'ի վե-
րայ դնելոյ ապաշխարանս համեմատս
սխալմանցն. որպէս զի ուղղութեամբ
իւրեանց բարձցեն զգայթագղութիւնն
հասարակաց։ Սուրբն Կարոլոս։

Է. Յապաղեսցի արձակումն և սովո-
րելոցն 'ի մեղս և ստէպ սայթաքելոց, է-

թէ 'ի հայհոյութիւն, 'ի ցոփաբանութիւն, 'ի ծանր բամբասանս, յատելութիւնս. և եթէ 'ի գործել առանց հարկի 'ի տօնս, որպէս և 'ի մեղս մարմնականս, և այլն. թէ և ասիցեն կամ խոստանայցեն 'ի բաց կալ 'ի մեղաց. մինչեւ չտայցեն նշանակս և ապացոյցս ուղղութեան, և չիցեն արդեամբք յուղղութիւն եկեալ. եւս առաւել՝ եթէ բազում ամք իցեն, յորմէ հետէ գլորին 'ի նոյն մեղս առանց ցուցանելոյ փոյթ ինչ ուղղութեան։ Սուրբն Կարոլոս։

Յուշ լիցի 'ի սոյն սակի և նախադասութիւնն դատապարտեալ Յ|ննոսվկենտիոսէ, մոլար ամենեւին. այսինքն թէ "Պաշխարողի սովորելոյ 'ի մեղս՝ թէ և յոյս ինչ չկայցէ ուղղութեան, չէ պարտ ժխտել և ոչ յապաղել զարձակումն, միայն թէ բերանով ասասցէ թէ զղջամ և առաջադրեմ ուղղել զանձն,,։ Յուշ լիցի և այն, թէ ժխտելն և յապաղել զարձակումն ստէպ գլորելոց՝ օգտէ 'ի գիտել և 'ի փորձել զտրամադրութիւն նոցա, և 'ի տալ 'ի միտ առնուլ նոցա զմեծ արհաւիրս մեղաց, և առնել զնոսա զգոյշս. օգտէ 'ի տրամադրել զնոսա առ շնորհս՝ առնելով եօթնեակս ինչ կամ գէթ աւուրս

ինչ զծանապահս , զողորմութիւնս , զա-
զօթս , զմեռելութիւնս զղջման յառաջ
քան զարձակումն ։ Եւ չէ պարտ զան-
գիտել թէ մի գուցէ ապաշխարողն
չգայցէ այլ եւս , վասն զի եթէ զղջա-
ւոր է , դառնայ անդրէն առ քեզ , կամ
երթայ առ այլ ոք առաւել տրամա-
դրութեամբ ։

Ողբալի ինն է գտանել բազմաց , որ
'ի բազում ամաց հետէ 'ի մեղս սովոր-
եալք կամ ստէպ ստէպ գայթոտք 'ի հայ-
հոյութիւնս , յանառակութիւնս , յար-
քեցութիւնս , յետ խոստովանելոյ յայն-
պիսում վիճակի առ ոտս բազում խոս-
տովանահարց , վերստին գլորական գրտ-
եալք յամենայն խոստովանութիւնս ,
չիցէ նոցա գտեալ զխոստովանահայր զոք
որ ժխտիցէ կամ յապաղիցէ նոցա զար-
ձակումն . և եթէ գտին զոք երբեք ,
դիպուած ինն եղեւ այն։ Եւ չգիտեմ թէ
որո՞վ խղճի մտօք մարթ իցէ արձակումն
տալ այնպիսումն , որ չտայ զյոյս ինչ 'ի
բաց կալոյ 'ի մեղաց ։ Յորժամ մեղա-
ւորն արդեամբք ցուցանէ թէ յայնչափ
ամաց հետէ չեղեւ նմա ունել զհաստա-
տուն առաջադրութիւն փոխելոյ զվարս
'ի լաւ անդր , և ոչ տեսաւ ուղղութիւն
երբեք , զիարդ մարթի խոստովանա-

հայրն խնամատուութեամբ դատաստան առ-
նել զՀշմարիտ զղջմանէ նորուն. քանի՞
խոստովանահաւք պատրին, և որչափ
հոգիք դատապարտին այսպիսի տարա-
պայման ներողամտութեամբ։

Ը. Յիստեալ կամ յապաղել արժան
է զարձակումն և այնոցիկ 'ի ժառան-
գաւորաց և 'ի քահանայից, որք ստէպ
անկանին 'ի նոյն մեղս և վարեն զաշխար-
հիկ իմն կեանս ցոփութեան։ Այլ եթէ
լցէ ժառանգաւոր ոք սովորեալ 'ի մեղս,
և կամիցի ընդունել զսուրբ կարգն, թէ-
պէտ տայցէ յայտնի նշանս մասնաւոր
զղջման 'ի պէտս արձակման, այլ տա-
կաւին ինքն իսկ չվստահի պարզապէս
և բարիոք խղճիւ թէ կարող լցէ ժուժ-
կալել, և յայսր ամենայնի վերայ ցան-
կացի ձեռնադրիլ, զայնպիսին պարտ
է քեզ 'ի բաց արձակել որպէս զան-
յարմար. վասն զի եդեալ է 'ի մտի յանձն
առնուլ զայնպիսի վիճակ յորում խիթայ
թէ չկարիցէ ընուլ զպարտս իւր, մանա-
ւանդ թէ առաջի կայ նմա յանցանել մե-
ղօք սեղանակատութեան. վասն որոյ
այսպիսիք պէտս ունին յերկար փորձոյ
մինչչեւ թոյլ տուեալ նոցա մատչել 'ի
սուրբ աստիճանս։

Թ. Ոչ մարթ արձակել և զայնոսիկ ոչք ոչ ունին զՀշմարիտ կամս 'ի բաց թողլոյ զմահուչափ մեզս և զմերձաւոր առիթս նոցին։ Այսն որոյ և Լենովիկենտիոս ԺԱ. դատապարտեաց զայս նախադասութիւն, թէ "Արթ է երբեմն արձակել զնա որ դեղերիցի 'ի մերձաւոր առթի, զոր թէպէտ կարէ, սակայն չկամի 'ի բաց թողուլ։ Ուր լաւ եւս խելամտել իրացս 'ի միտ առ զի մերձաւոր առիթն է 'ի գոն, զոր օրինակ ունել առտնին կամ այլուր զկին զոք ընդ որում ստէպ անկանի, կամ աղախին զոր տանուտէրն ստէպ հրապուրէ, և նա յաճախակի կամակից լինի, և որ 'ի տոցին սակի, չպարտի խոստովանահայրն արձակել զառթականն, եթէ կանխաւ և իրօք ոչ թողուցու զառիթն 'ի բաց։ Սուրբն Կարոլոս։

Ապա եթէ առիթն այնպիսի ելցէ, զոր չիցէ մարթ հատանել առանց վտանգի կամ գայթակղութեան, զոր օրինակ եթէ բանն ելցէ ընդ ընտանի բարեկամ առնն, կամ ընդ տագր և ընդ նու, քահանայն յապաղեսցէ զարձակումն ցայն վայր, մինչեւ տեսցէ զստոյգ նշանակ Հշմարիտ ուղղութեան։ Իսկ եթէ չկարիցէ յապաղել զարձակումն առանց

վանդի վատանունութեան խոստովան-
որդոյն, և տեսցէ 'ի նմա զայնպիսի
նշանս զգջման և զյօժարութիւն ընդու-
նելոյ զդեղս զաւ 'ի հօրէն խոստովա-
նութեան կարեւոր դատեալս յուղ-
ղութիւն նորին, պարտի առաջի դնել
նմա զայն դեղս՝ որ առաւել դիպող և
հարկաւոր երևեսցին. զոր օրինակ չգը-
տանիլ միայնակ ընդ անձինն, փախչե-
լով և 'ի համարձակ աչարձակութենէ,
և յանկարեւոր զրուցոց. և հանապազոր-
դել յաղօթս, ստէպ ստէպ արծարծա-
նել զքերմ առաջադրութիւնս՝ և դնել
'ի սրտի ամենայն իրօք չկամիլ այլ եւս
մեղանչել. առնել և մեռելութիւնս
ինչ հաշիւս մարմնոյ, և 'ի վեր քան զա-
մենայն յաճախել 'ի խոստովանութիւն,
սոյնպէս և զայլ դեղս. զորս եթէ յան-
ձին կալցի ոք, կարէ խոստովանահայրն
արձակել զնա։ Այլ եթէ յետ այսչափ
զգուշութեան իւրոյ կամ այլոյ խոստո-
վանահօր չզգաստանայցէ, մի տացէ
նմա զարձակումն, յորչափ ոչ բարձցէ
զառիթն։ Սուրբն Կարոլոս։

Այլ առիթս կամաւորս, որ չեն 'ի
գոլն, որպէս խաղք դրամովք, յայրատ
հայեցուածք, կենակցութիւնք, շար-
ժուածք, տուիանք, կապելայք, չպարտի

խոստովանահայրն արձակել զառաքա-
կանն, եթէ ոչ խոստասցի թողուլ զա-
ռիւթն. եւս և յորժամ թէ և խոստա-
նայցէ, բայց քանզի և յայլ նուազս եւս
խոստացեալ՝ չէկն յուղղութիւն, յա-
պաղեսցէ զարձակումն, մինչեւ տեսցէ
ուղղութիւն ինչ։ Սուրբն Կարոլոս։

Այլ եթէ առիւթն ի ցէ արհեստն,
կամ ինչ մի անկարեւոր և անշահ, զոր
օրինակ պարք, դատարկ կեանք, և
յորս յաճախ լինի գթել 'ի մեղս մա-
հուչափս, չպարտի արձակել, եթէ ոչ
նախ հրաժարեսցէ, և խոստասցի պա-
հել զանձն, և թողուլ զառիւթն. միայն
եթէ թուեսցի խոստովանահօր կարել
ձշմարտութեամբ հաւատալ նախկին
կամ երկրորդ խոստման խոստովանող-
դոյ վասն 'ի բաց թողլոյ զառիւթն
զայն, կարող լիցի արձակել զնա վասն
այնր խոստման. բայց մի այլ եւս ար-
ձակեսցէ, այլ յապաղեսցէ, մինչեւ տես-
ցէ զգործնական ապացոյց ազատ զոլոյ
յառաքէ անտի։ Սուրբն Կարոլոս։

Ո՜ արհեստաւորս, զվաճառականս,
և զորս են 'ի սոցին սակի, եթէ սովո-
րեալ լիցեն, որպէս ստէպ լինի, յաճախ
գթել 'ի մահուչափ մեղս հայհոյու-
թեանց կամ յիշոցաց, գողութեանց,

խարդախութեանց, ստերդմնութեանց, վաշխից, անիրաւութեանց, արբեցութեան, և անասուրբ առնելոյ զտօնս, խոստովանահայրն պարտի յառաջ քան զարձակումն առնել զփորձ ուղղութեան առ ժամանակ մի, եթէ 'ի բանաւոր կարծիս լինիցի, թէ ունիցի դարձ առնել 'ի նոյն մեղս. և եթէ տակաւին չտեսանի ուղղութիւն, պարտ է տալ նոցա հրաժարել յայնպիսի վտանգաւոր արհեստից։ Եւ յայսմ մասին պէտք են բանալ զաչս այնչափ առաւել, որչափ զի պակասութիւն խոստովանահարց յայդմ մասին առիթ լինի, զի յամենայն արհեստս գոգցես և 'ի գործս տիրեսցեն բազմապատիկ անկարգութիւնք, և մեղք ծանուցք։ Սուրբն Կարոլոս։

Հարկ է յուշ ածել, զի բազումք գնան 'ի միոյ խոստովանութենէ 'ի միւս՝ ծանրացեալք մահուչափ մեղօք. բայց քանզի երբեմն հայելով 'ի մերձաւոր առթից մեղս՝ մարթ է ասել, թէ չիցէ անդ յաճախութիւն գլորման, ուստի և որպէս թէ չկայցեն 'ի մերձաւոր առթի, այլ յայսր ամենայնի վերայ եթէ 'ի փորձոյ յոլովակի խոստովանութեանց չերևեսցի խնդրելին ուղղու-

թիւն, յայնժամ պարտի խոստովանա-
հայրն ժխտել նոցա զարձակումն, մին-
չեւ տացեն զցոյց ճշմարիտ ուղղութեան։
Եւ եթէ այս չէ բաւական, յորժամ
թողուն, օրինակ ինն, զայն տուն, զայն
անձն կամ զկենակցութիւն, զխաղ,
զեղեալն առիթ ստէպ գլորման, համա-
րիցի միջոց դիպող և գործունեայ վասն
վերստին չանկանելոյ, որպէս և է իսկ
յոլովակի, պարտի ստիպել զխոստովան-
ողին 'ի բաց թողուլ զայն առիթս՝
ժխտելով զարձակումն, մինչեւ յամե-
նայն սրտէ հաստատեսցէ 'ի բաց բառ-
նալ զայն. զայս այսպէս պահանջէ պաշ-
տօն հոգեւոր բժշկի։

Ընդհանուր կանոն լիցի՝ ըստ կարի
'ի կարձոյ վճարել զերս կանանց, խոր-
շելով յամենայն անկարեւոր բանից՝ առ
զգուշանալոյ 'ի խիթալի չար հետեւա-
նաց. և մի լիցի ասել առ նոսա ինչ մի՝
որ կարիցէ տալ զցոյց սիրոյ և գթոյ՝
թէպէտեւ բարւոյ և հոգեւորականի.
այլ լիցի վարել առ նոսա զեղանակ ան-
աչառ, ծանր, և պնդապահ։ Եւ մի
լիցի 'ի տես երթալ և յաճախել 'ի
տունս խոստովանողի կանանց՝ արտա-
քոյ պիտոյից խոստովանութեան խո-
թացելոց։

Ի սեր անդ զխոստովանութիւնս անձ-
նապահ լիցի քահանայն 'ի շարժմանց
և 'ի նշանաց անտի արտաքնոց՝ որովք
ցուցանիցէ զտաղտկութիւն կամ զտրխ-
րութիւն, առ 'ի չտալ կարծիս կասկա-
ծանաց տեսողաց, միանգամայն և 'ի
չառնել ահաբեկ զապաշխարողն, զի մի
լռեսցէ զմեղս ծանուցս։ Եւ եւս զգոյշ
լիցի չհայտնել իւիք իրօք ոչ զմեղս, ոչ
զմեղաւորն, և ոչ զայլ ինչ լուեալ 'ի
խոստովանութեան, որով մարթ իցէ
իւիք օրինակաւ 'ի յայտ գալ որ և է
խոստովանեալ մեղաց, որչափ և թե-
թեւ իցեն։ Սուրբն Կարոլոս։

Անթէ խոստովանողին 'ի բաց թող-
եալ լքեալ իցէ յայլոց խոստովանա-
հարց, մի լիցի այլուստ դիւրաւ ընդունել
զնա. զի մի լիցի քակել զոր այլք շինել
կամեցան։ Եւ ջանացի, զի մի փո-
խեսցէ օք զսովորական խոստովանա-
հայրն անպատճառ. զի սա գիտակ գո-
լով կարեաց պիտոյից նորա՝ կարող է 'ի
վերայ ածել դեղս դիպողագոյնս և օգ-
տակարս։ Սուրբն Կարոլոս։

Տես, զի մի տայցես արձակումն այ-
նոցիկ, որք ոչինչ նշան զղջման կամ ցա-
ւոց ցուցանիցեն. սին իրի հարկաւոր է
քեզ գիտել, թէ ո՞ր այն իցեն նշանք

զղջման։ Սուրբ ժողովն Տրիդենտեան յայտ առնէ, թէ զղջումն հաստատեալ է յատել զանցեալ կեանս, դադարել 'ի մեղաց, յառաջադրել զնոր կեանս, և յսկիզբն առնել նմին։ Օ այս ամենայն մարթ է ճանաչել, եթէ խոստովանողին 'ի ժամանակաց ինչ հետէ 'ի բաց թողեալ է զմեղս որպէս զդառնացուցիչս Աստուծոյ. եթէ յառաջ քան զպատուիրել խոստովանահօր՝ 'ի բաց թողեալ էցէ զաւրթն, զանձն, կամ զայլ ինչ որով մեղանչէր. եթէ այրեաց զդիրս չարաչարս, 'ի բաց եդ զպՀնութիւնս գայթակղեցուցիչս, արար զՀատուցումն, եթէ տայ և զայլ նշանս, որք ցուցանիցեն զնեղքին ցաւ և զտՀաճութիւն ընդ գործեցեալ մեղս. որ սովոր են լինել յողովակի Հանգոյն նշանացն զոր արտաքուստ ցուցանեն մարդիկ՝ ցաւագնելով և դժուարելով ընդ կորուստ մեծապէն իրաց։

Յետ ըսելոյ զխոստովանութիւն, յոչն գտանիլ խափանաց արձակման, ըստ բազմութեան և ըստ ծանրութեան յանցանաց, և ըստ Հանգամանաց անձին ապաշխարողի՝ արասցէ խոստովանահայրն զպարտուպատշաճ խրատս և յանդիմանութիւնս, և ազդարարութիւնս Հայ-

ցագութ սիրով. և ազգոյ բանիւք գուն գործեսցէ շարժել զնա 'ի ցաւ և 'ի զղջ-ջումն, ցուցանելով նմա զծանրութիւն և զդարշութիւն յանցանաց, զանձառ բարիս արքայութեան զոր կորոյս, և զյաւիտենականն դատապարտութիւն՝ որում արժանի գտաւ. զմեծ ապերախ-տութիւնն զոր եցոյց ընդդէմ Աստուծոյ արարչի իւրոյ և պահպանչի և փրկչի, զանհեթեթ թշնամանս զոր արար ընդ-դէմ Աստուծոյ անսահման բարւոյ, որ ըստ ինքեան է արժանի ամենայն սի-րոյ։ Այնգամայն արծարծեսցէ 'ի նմա զաստուածսիրութեան զհուր, և զներ-գործութիւնս աստուածաբանական ա-ռաքինութեանց. և ապա տացէ նմա զայն գեղս զոր կարեւոր նմին դատեսցի ընդդէմ մեղաց նորա։ Այս 'ի վերայ դիցէ ապաշխարանս, որ ոչ միայն իցեն վճարողականք 'ի հատուցումն անցելոց մեղաց, այլ և դեղ դարմանոյ վասն ա-պագայից։

Ի գնել անդ զապաշխարանս՝ արթուն պարտի լինել խոստովանահայրն, զի մի այնչափ թեթեւ լինիցին, մինչեւ ար-համարհանս բերել իշխանութեան նո-ցա, և մի ինքն կցորդ լիցի մեղաց օտա-րի. բայց և ոչ այնչափ ծանունք կամ

յերկարը, մինչեւ ապաշխարողաց կամ չառնուլ յանձն կատարել, և կամ յետ յանձն առնլոյն չընուլ բովանդակ։ Ոչ տեա և զվիճակն, զհասակ, զբնութիւն և զհանգամանս ապաշխարողին. զի մի լիցի ողորմութիւն 'ի վերայ դնել աղքատին, և ոչ հասարակօրէն անճաշակ մնալ առն աշխատաւորի։ Սուրբն Կարոլոս։

Մի դիցին ապաշխարանք խառն 'ի պէսպէս աղօթից, զի մի մոռասցի զայն ապաշխարողն։ Պարտի խոստովանաւորն դնել զայն քաղցր և միսիթարական բանիւք, մանաւանդ յորժամ տեսցէ զխոստովանողին կարի 'ի զեղջ հարեալ, և միշտ պէտք են հարցանել, եթէ առնիցէ զայն մտադիր. վասն զի եթէ տեսցէ թէ դժուարանայ կատարել, լաւ եւս է տալ նմա զթեթեւագոյնն. իբր զի լաւ է յոյժ սովորաբար սիրով և քաղցրութեամբ վարիլ ընդ խոստովանողիս, միայն թէ մի լիցի մեղկացուցանել զնոսա 'ի մեղս, քան եթէ խստութեամբ վարիլ։ Այլ յայսր ամենայնի վերայ չէ պարտ մոռանալ յուշ առնել ապաշխարողին թէ ըստ ծանրութեան մեղաց իւրոց արժանի էր ծանր ծանր ապաշխարանաց. որ-

պէս զի զ'ի վերայ եղեալն արասցէ ա-
ռաւել խոնարհութեամբ և ապաշխա-
րութեամբ։ Սուրբն Փրանկիսկոս սոլե-
ղէան։

Լաւ լեցի դնել ապաշխարանս զմի
յերացաստի, զոր օրինակ ընթեռնուլ
զայն ինչ գիրս որ տիրապէս օգտակար
դատեալ լինի ապաշխարողին, խոստո-
վանել ամոյ յամիս ընդ ամ մի ողջոյն,
և որ սոցին նման են. զի ոչ միայն 'ի
դէպ գան պատժոյ անցելոց մեղաց, այլ
և պահպանողական դեղք են յերեսաց
ապագայից։ Յաղագս կիրթ անձանց
կարի լաւ է գէթ քառորդ մի ժամու
յաւուրն մտածական առնել, կամ բարի
ինչ խորհուրդ 'ի խոկալ, կամ չարչա-
րանք տեառն. որպէս և այց առնել
սրբութեան կամ տեսանել զպատարագ։

Ցես զի վճարողական ապաշխարանք
համեմատ լեցին մեղացն գործելոց.
զոր օրինակ վասն մարմնական մեղաց
դնելով ծոմապահս, տքնութիւնս, ուխ-
տաւորութիւնս. դարձեալ գնալ յայցե-
լութիւն կրկնք սուրբ տեղւոյ, կամ ե-
կեղեցւոյ, և որ նման են սոցա, ոչք
կարեն հաշել կամ 'ի մեռելութիւն
կրթել զմարմինն։ Վասն մեղաց ագա-
հութեան՝ բաց 'ի հատուցմանէ արդա-

ըութեան՝ ողորմութիւնս 'ի վերայ դնել ըստ իւրաքանչիւր կարի։

Ընդդէմ հպարտութեան և այլոց մեղաց հոգւոյ 'ի դէպ գան աղօթք, առ 'ի խոնարհիլ առաջի տեառն, և ստանալ զօրութիւն և ոյժ ընդդէմ կալոյ այնպիսի մեղաց։ Սոբէն Կարոլոս։

Աղբեցողաց և անժուժկալից պատուիրել ջուր ըմպել, կամ գինի ջրախառն ընդ այսչափ աւուրս, միանգամայն և զառիթն 'ի բաց բառնալ։ Որ լուծանէ զպահս և զաղուհացս, 'ի վերայ դնել ծոմապահս և պահեցողութիւնս ըստ հին սովորութեան եկեղեցւոյ։

Յոխակեցից, ունայնասիրաց և պարաւորաց՝ պարտս 'ի վերայ դնել, զի զքանի մի աւուրս եօթնեկին որոշեսցեն զհրաժարումն 'ի սոցունց խոստմամբ մկրտութեան, հանդերձ հաստատուն առաջադրութեամբ նորոգելոյ զայն հրաժեշտ. պատուիրեսցի և պարկեշտս զգենուլ, և չկրել յանձին զնշանակս պչրանաց, և պարապել 'ի գործս խոնարհութեան։

Ընդ հայհոյիչս, զի պատժեսցեն զլեզուս իւրեանց զայսչափ ինչ աւուրս՝ իւիք համեմատ մեռելութեամբ, կամ

աղօրմութիւնս ինչ առնիցեն՝ քանիցս անգամ և անկանիցին 'ի Հայհոյութիւնս. նոյնպիսի ապաշխարանս արժան է դնել և սովորելոցն յանիծաքանութիւն, և յանհամեստ զրոյցս։

Որոց ուր ուրեմն խոստովանին, և դիւրագայթից 'ի մեղս՝ պատուէր դիցի խոստովան լինել մի անգամ յամսեանն, կամ 'ի հանդիսական տօնս. և եւս զաւուրս հնգետասան կամ զամիս մի ծունր դիցեն խնդրելով զողորմութիւն ՅԱստուծոյ զղջմամբ հանդերձ, կամ խոկալ զպատիժս դժոխոց՝ որոց արժանի գտան։

Ընդոյթ եղելոց ուսանել զերս քրիստոնէութեան՝ դիցին ապաշխարանք ըսելոյ քարոզս, և երթալոյ գոնէ զայսչափ ինչ ժամանակ 'ի լուր քրիստոնէական վարդապետութեան։ Ընեռանդիցս և գաղջացելոց 'ի վերայ փրկութեան անձանց՝ պարտք 'ի վերայ դիցին այց առնել եկեղեցեաց, և աղօթք ըստ վիճակի ապաշխարողին. մարթ է եւս պատուէր 'ի վերայ ածել յետս կալոյ 'ի պարուց, 'ի կենակցութեանց, և 'ի զբօսանաց, և յորոց 'ի սոցին սակի։

Փախչելով փախիցէ խոստովանահայրն յամենայն թեթեւ իսկ կասկա-

ծանաց և 'ի ստուերէ արծաթասիրու-
թեան. նմին իրի 'ի խոստովանութիւնս
կամ 'ի պատճառս խոստովանութեան
մի՛ խնդրեսցէ և մի՛ առցէ ոչ վասն իւր
և ոչ վասն եկեղեցւոյ իւրոյ դրամս
կամ այլ ինչ, ոչ հատուցմունս վասն ան-
ստոյգ պարտեաց, և ոչ ողորմութիւնս
պատարագի՝ իբր յապաշխարանաց սա-
կի եդելոց 'ի վերայ ապաշխարողին. և
ոչ իսկ 'ի հատուցումն պարտուց, եթէ
ոչ հարկն ստիպեսցէ առ 'ի չյայտնելոյ
զապաշխարողն. և յայնժամ փոյթ կալ-
ցի յետկար առնուլ յանձնէ՝ որում հա-
տոյցն, և զայն յետկար տացէ 'ի ձեռս
ապաշխարողին։ Սուրբն Կարոլոս։

Դարձեալ խոստովանահայրն դեղս
տացէ ապաշխարողին՝ նախապահեստս
'ի մեղաց, և մանաւանդ 'ի սովորակա-
նաց. և միանգամայն հրահանգեսցէ զնա
բարի խրատուք 'ի կեալ քրիստոնէա-
բար։ Եւ ըստ այսմ յետ ճանաչելոյ
զառիթն, եթէ ինչն յայրատ հայե-
ցուածք, սահմանեսցէ նմա զզգուշաւոր
պահպանութիւն աչաց, և չյառել ա-
չօք կամաւ յանձն օտարասեր։ Եթէ ի-
ցեն խենդշ զրոյցք, խոյս տալ յայնպիսի
ընկերութեանց։ Եթէ դատարկակե-
ցութիւն, կանոնադրեսցի զբաղումն 'ի

զործ։ Եթէ կենաց կցորդութիւն և խօսակցութիւն, 'ի բաց հատանել զաւրութեն։ Եթէ ունայնասիրութիւն և պճնութիւն, բառնալ զայն՝ անշուք զգենլով։

Իսկ ընդհանուր խրատք և խորհուրդք խոստովանահօր առ խոստովանորդիս՝ օգտակարագոյն ամենայն մարդոյ այս են. ստէպ խոստովանիլ և հաղորդիլ. ընտրել խոստովանահայր զոք յընտրելագունից, յաձախել 'ի լուր բանին Աստուծոյ, ընթեռնուլ զգիրս օգտակարս, փախչել 'ի չար ընկերաց, և զհետ լինել լաւաց. յաղօթս կալ ստէպ առ Աստուած, առնել ընդ երեկս զքննութիւն խղճի, խոկալ զմահ, զդատաստան և զդժոխս։ Սաղմ։ Ի վերայ բերէ սուրբն Կարոլոս. յորդորել զխոստովանորդիս 'ի տեսանել զպատարագ զօր ամենայն. յաւուրս տօնից երթալ 'ի ժամերգութիւն, յեղբայրութիւնս և յաղօթարանս. առնել յամենայն աւուր զաղօթս մնաւորս, ասել յերեկոյի առտնին զվարդարան։ Եթէ գիտեն ընթեռնուլ, տալ նոցա գնել զքանի մի հոգեւոր գիրս՝ և ընթեռնուլ յերեկոյի, մանաւանդ 'ի տօնս, միաբան ընդ ընտանիսն. և 'ի սոյն պէտս լաւ են

վարք սրբոց, և այլն։ Մեծատանց յուշ առնել ստէպ զպարտս ողորմածութեան. հարց և մարց՝ առաքել զորդիս 'ի քրիստոնէական վարդապետութիւն, և տանել ընդ իւրեանս 'ի քարոզ, և 'ի նման օրինակ հանդէսս պաշտամանց. արգելուլ զխափանումն տօնից, և զտրփանս։ Մինչ բանիւ, խոստովանահարք պարտին ըստ հարկի պաշտաման քաջ հովուի հոգւոց՝ յանձին բերել զառանձին փոյթ կրթելոյ և ընդելացուցանելոյ զխոստովանորդիս իւրեանց առհասարակ 'ի քրիստոնէական առաքինութիւնս և 'ի հոգևորական կեանս. և գուն գործել, զի ամենեքին ի ցեն տիրապէս անյողդողդք յառաջադրութեան կորուսանելոյ ոչ միայն զինչս և զպատիւ, այլ և զկեանս գլխովին՝ քան եթէ դառնացուցանել մահու չափ զմեծ վայելչութիւնն Աստուծոյ. և ունիցին զՋերմեռանդն և զկենդանի փափաք կերպարանակցութեան ընդ ամենասուրբ կամն նորա։ Սուրբն Կարոլոս։

Ի վախճանի յուշ առնէ ծիրանաւորն Գորսի 'ի ռիմինեան ժողովն իւր, թէ մեծագոյն մասն չարեաց եղելոց օրըստօրէ 'ի մէջ քրիստոնէից՝ յառաջ գայ 'ի յանցաւորութենէ և յանհոգու-

թէնէ կամ՝ ի վատթարութենէ խոս-
տովանահարց։ Այսն զի եթէ ամե-
նայն խոստովանահարք, որպէս ազգ-
առնեն ծիրանաւորն Մուղի՝ եպիսկոպոս
Այրդերպոյի, և ծիրանաւորն Պարսպա-
բերդոյ եպիսկոպոս Մոնդէֆիասգոնի՝ ի
ժողովս Իւրեանց, ունէին զսուրբ կա-
պակցութիւն սիրոյ և զմիաբանութիւն
՝ի ժխտել կամ յապաղել սուրբ նախան-
ձաւորութեամբ և սրտապնդութեամբ
զարձակումն անարժանից, և՝ ի խնդրել
՝ի բաց բառնալ զմոլութիւնս և զան-
կարգութիւնս, ոչ լինէր ումեք մեղան-
չել մեղս այսչափ համարձակութեամբ։
Այթէ ամենեքին միաշունչ լինէին,
բազումք յաշխարհիկ մարդկանէ յետս
կային՝ ի գայթակղական ցոփութեանց
և՝ ի շռայլութեանց, որ կործանեն
զտունս և զքաղաքս։ Այնուհետեւ ոչ
երթային՝ ի դատապարտութիւն վասն
չառնելոյ զվճար պարտեաց և փնատուց.
՝ի բաց կտրէին զառիթս մերձաւորս, և
որք սովորեալ էին ստէպ գթել՝ ի մեղս,
ուղղէին զանձինս։ Որքան չարաչար
խոստովանութիւնք են, որոց վասն ըստ
նշանակելոյ ժողովոյն Աբալաղրոյի՝ յո-
լովք դատապարտին, որ ոչն էին դատա-
պարտելիք։ Այսպա ուրեմն խնդրի սուրբ

ինն հանաշնչութիւն և զօդ և նախան-
ձաւորութիւն, և իւրաքանչիւր քահա-
նայ ամենայն խնամով զգոյշ լիցի, զի
մի ուր զայլս արձակէ, կամ ստոյգ եւս
խօսելով կապէ, ինքն իսկ անկցի յորո-
գայթ սատանայի. և յորժամ կոյր կու-
ր ի առաջնորդէ, երկոքին 'ի գժոխս
խարդաւանեսցին։

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

ԱՌ ՋԵՌՆԱԴՐԵԼԻՍ

ԳԻՏԵԼ ԶԿՈՉՈՒՄՆ ԻՒՐՆԱՆՑ

Ա. Դ՝ԱՆԶ քննեցէք զկոչումն ձեր։ Ոչ ոք իշխէ 'ի ծառայութիւն մտանել արքայի առանց կոչման նորա։ Եւ քեզ զիարդ լինիցի յայնպիսի բերիլ յանդգնութիւն և 'ի կոյր գիտակցութիւն խղճի, մինչեւ խորհել քահանայանալ առանց կամացն Աստուծոյ։ Որ միանգամ ժպրհիցի ձեռնեարէց և միջամուխ լինել յայս պաշտօն, չուառական և հէք է նա քան զամենայն մարդ, և առաւել քան զամենայն եկեղեցւոյ Աստուծոյ. և որպէս ամբարտաւանքն Կորխ և Դաթան և Աբիրոն հրկէզ եղեն մարմնով, կիզցին և ժպիրհքս այսոքիկ հոգւով, ասէ սուրբն Աւգոստինոս։

Բ. Ամ անցանել՝ի չարաչար վարուց՝ի լաւ անդր չինդրի խորհուրդ. այլ առ անցանելոյ՝ի լաւէ անտի՝ի լաւագոյն վիճակ՝ խնդրի ժամանակ, խորհուրդ, և աղօթք. վասն զի ոչ ամենայն՝ որ լաւն է ումեք առանձինն, ասէր սուրբն Փիլիպպոս Ներեան, այնպէս ելցէ և հասարակաց։ Նաև առաւել, եթէ չկամիս առանձնանալ՝ի վանս ինչ խրատակրօն, այլ խորհիս աշխարհիկ քահանայ լինել՝ի մէջ բազմադիմի վտանգից աշխարհի։ Նուազ լիցի քեզ բանն սրբոյն Յովհաննի, զի սուրբ կարգն յընդունողն իւր պահանջէ զսրբութիւն. իսկ վիճակն կրօնաւորական է դպրոց և կրթարան առ ստանալոյ զայն. սմին իրի բեռն կարգի ձեռնադրութեան պարտի կախիլ զհաստատինդ որմոց, և զմաքրաբարդելոց սրբութեամբ. ուր բեռն կրօնի օգնէ յամրացուցանել և՝ի մաքրափայլել զայն որմունս, այս ինքն զմարդիկ, յաղտից ախտաւորութեանց։

Գ. Այ քեզ եթէ երիցութեան ցանկաս առ՝ի չաշխատիլ, այլ՝ի դատարկութեան վարել զժամանակս քո։ Ամենայն ժառանգաւոր պարտի ստէպ

խորհել, թէ չէ կոչեցեալ 'ի դատարկութիւն, այլ 'ի վաստակս հոգեւոր զինուորութեան։ Սուրբ եկեղեցին չունի պէտս անգործ երիցանց, մանաւանդ թէ տաղտկանայ 'ի նոցունց. վասն զի 'ի նոցանէ կրէ զեանս մեծամեծս։ Այս կամք են նորա զի մի՛ ձեռնադրեսցի ոք յուխտ եկեղեցւոյ, եթէ ըստ դատման եպիսկոպոսին չիցէ օգտակար կամ հարկաւոր եկեղեցւոյ իւրում. և մի՛ ոք յայնմ հետէ ձեռնադրեսցի, եթէ չիցէ վերադրեալ յայն եկեղեցի, յորոյ օգուտ և 'ի պէտս է ինքն կարգեալ, որպէս զի կրթեսցի յեկեղեցական պաշտամունս։ Կնամարդի լինել պարապորդ կենաց և թուլանալ ծուլութեամբ՝ ոչ այլ ինչ է, բայց հեղձուցանել զառաքինութիւնս, մնուցանել զմոլութիւնս և հորդել անձին և այլոց Հանապարհ կորստեան։

Դ. Եթէ առաւել ցանկացող իցես պատուոյ երիցութեան քան առաքինութեան, ակն կալջիր ոչ վարձու այլ կործանման և դահավիժելոյ։ Զի՞նչ է, բաղումք յեկեղեցականաց յաւուր յայսմիկ դիմեն 'ի սուրբ կարգս, ինդրելով ոչ զերկնաւոր զհաց, այլ զերկրաւոր. ոչ զհոգի, այլ զշահասիրութիւն. ոչ զո-

զուց փրկութիւն, այլ զստացուած դրամոց։ Ա.յսպիսիք ոչ են կոչեցեալ Ա.ստուծոյ, այլ սադրեալք 'ի սատանայէ, ասէ Բռնաւէնդուրա, զի մատչել 'ի սուրբ սեղանն վասն զոշաքաղութեան և շահասիրութեան՝ ծանր սեղանակապտութիւն է։ Այլ սակայն ոչ սակաւք վասն այսր երիցանան։ Վասն զի եթէ չտեսանէին զթոշակ ինչ, չյօժարէին 'ի քահանայութիւն վարձկանքդ այդոքիկ։ Ա.յնպիսիքն ոչինչ այլ շահին 'ի պաշտամանէդ սրբութեան, բայց զոր օգտեցաւն Յուդաս յառաքելութենէ։ Այթէ յայն սակս երիցանաս, զի ունիցիս զկարեւոր պէտս կենաց, դու խընդրես զքահանայութիւն վասն կերակրոյ, կամ խեղաթիւր մտօք 'ի ձեռն երկնաւոր իրաց կամիս շահել զերկրաւորս։ Վաւ եւս էր քեզ պաճարել զպէտս կենաց վաստակօք կենցաղոյս՝ քան եթէ յեղաշրջելով զամենայն կարգ, և անպատիւ առնելով զպաշտօնն սրբութեան, սադրեալ 'ի հաճոյից մարմնոյ և 'ի շահասիրութենէ ընդ պատրուակաւ ջերմեռանդութեան, ընթանալ յանհրաժեշտն դատապարտութիւն։

Ե. Տես, զի յօժարութիւն և խոր-

հուրդ ծնողաց և ազգականաց մի պա-
տրեսցեն և մատնեսցեն զքեզ։ Զոքա
յոլովակի խղճ լինին, զի զաւակաց իւ-
րեանց, և այն դեռ մանկահասակաց,
գուցէ և չեւ ծնելոց անգամ, պատրաս-
տական կայցէ թոշակ ինչ եկեղեցա-
կան. Օ այս մեր զորդեակ, ասեն, ա-
ղերսիւ յանձն արասցուք այսմ կամ
այնմ եպիսկոպոսի, յորմէ ակն ունիմք
շնորհի իմիք իրաւամբք, զի արարաք
նմա ծառայութիւն ինչ կարեւոր. որպէս
զի բաժին հանցէ նմա 'ի բարեաց եկե-
ղեցւոյ, զի մի 'ի բազմութիւն որդւոց
բաժանեսցի ժառանգութիւն մեր։ Ա-
յաջորդեսցէ այնմ վերակացուի, կամ
այդմ կանոնիկոսի, որ հայրաբար զսա
սիրէ, և 'ի փափկութեան պահէ։ Այս
որդի մեր, ասեն, արժանի է կանոնի-
կոսութեան, մանաւանդ թէ մեծագու-
նի բարձի և պատուոյ. վասն զի է 'ի
կարի ազնուական տանէ. և այնչափ ա-
ւելի արժանաւոր գտանի, եթէ ազգա-
կան իցէ երեւելի եկեղեցականի, յորոյ
ազգատոհմի առատ են թոշակք և պա-
րարտք։ Զոյնթ է ծնողաց, զի որդիքն՝ ա-
ռաւել տգեղք և անյարմարք աշխար-
հային գործոց՝ յեկեղեցի երթիցեն,
կամելով զի թէ և չիցեն առ ՅԱ-

տուծոյ կոչեցեալք, յառաջեսցեն 'ի թոշակառութիւն, և ոչ եթէ 'ի պաշտօն եկեղեցական. առ որս ասելի է տեառն բանիւ. Ընողք կոյրք, որ ոչ գիտեն զինչ խնդրեն։ Ընողք որ սիրեն զժամանակաւոր բարի որդւոց իւրեանց, և չինդրեն զՀոգեւորն նոցա. ցանկան զի բարեկեցիկ լիցին յաշխարհի աստ, և ոչինչ հոգան թէ ուրչափ ինչ կրեալ ունին 'ի հանդերձելումն. որով քաջիկ ցուցանեն, թէ մարմնոյ ծնողք են, և ոչ հոգւոյ։ Ընողք և բարեկամք, այլ թշնամիք, ըստ տեառն բանի եթէ "Թշնամիք առն ընտանիք իւր"։

Զ. Բարի նշան կոչման է ուղիղ և մաքուր դիտաւորութիւն ծառայելոյ Աստուծոյ եռանդեամբ, և օգտակար գտանիլ եկեղեցւոյ։ Այց ո՞ է որ խընդրիցէ զեկեղեցական աստիճանս, կամ ցանկասցի այնմ որպէս արժանն է օրինօք, առ 'ի կեալ առանց հոգոց աշխարհի սրբութեամբ սրտի և մարմնոյ, և առ 'ի գործել զանձին և զընկերացն փրկութիւն ջանիւ աղօթից, և բանիւ քարոզութեան։ Յառանգաւորն եկեղեցւոյ չպարտի ունել զայլ վախճան, եթէ ոչ նեղքոյ դնել զուս իւր ոչ ար-

տաքին պատուոյ և բարձի, այլ հասա-
րակաց բեռանց, զորս պարտի ըստանձ-
նել յեկեղեցւոջ որպէս փոխանորդ
Քրիստոսի։ Որ խնդրէ զայլ ամենայն
ինչ բաց յԱստուծոյ, չէ ընտրեալ յԱս-
տուծոյ, և ոչ ինքն զԱստուած է ըն-
տրեալ, յետադաս առնելով յընտրու-
թեան իւրում զարարիչն քան զարա-
րած։

Է. "Եթէ դուք չխնդրէք զփոյթ
աստուածային գիտութեան, և ես չկա-
միմ զձեզ, ասէ Աստուած 'ի գիրս
Ովսեայ, 'ի քահանայական պաշտա-
մունս"։ Ի տգիտութենէ որ մայրն է
ամենայն չարեաց, պարտի փախչել ա-
ռաւելապէս ամենայն ժառանգաւորք,
որ կարգեալ է 'ի պաշտօն ուսուցիչ
լինելոյ ժողովրդեան։ Ամօթ մեծ է
յոյժ այնոցիկ, զոր ունին ուսուցանել
զպարզամիտս և զռամիկս և պարտին
հայելի լինել նոցա վարդապետութեան
և աստուածպաշտութեան, եթէ ձեռ-
նադրեսցին առանց կարևոր գիտու-
թեան աստուածայնոց։ Ապա ուրեմն մի՞
զոր յառաջ խաղասցէ 'ի տնտեսութիւն
սուրբ խորհրդոց տիսմար անձամբ կամ
թերատես 'ի խաւարի անգիտութեան,

այլ այնոքիկ՝ որք երևելի են անմեղութեամբ վարուց, և պայծառութեամբ վարդապետութեան. ապա թէ ոչ՝ որ տայն և որ ընդունին զկարգ, 'ի վերայ կայ նոցա վրէժխնդրութիւն Աստուծոյ և եկեղեցւոյ նորա։ Սատթարքն օրինակաւ իւրեանց ապականեն զբարս քաղցունս, և տգէտքն անկարութեամբ իւրեանց չլինին ձեռնհաս յանդիմանելոյ զանզգաման։ Ի՞նչդ կարող ևս ոչ ուսուցանել զոր ոչն գիտեն։ Սմին իրի հարք ջորրորդի ժողովոյն Լատերանու ասեն. "Ընդապէս յանձն առնեմք, զի եպիսկոպոսունք կոչեսցեն 'ի քահանայութիւն զկրթեալսն յաստուածային պաշտամունս, և 'ի խորհուրդս եկեղեցականս, որպէս զի գիտասցեն մատակարարել զնոսին օրինօք. վասն զի եթէ իշխեսցեն ձեռնադրել զտխմարս և զտգէտս, ներքոյ անկցին ծանրագոյն դատապարտութեան. իբր զի լաւ է ունել զլաւ քահանայս սակաւս, քան զբազումս անշահս և վատթարս. վասն զի եթէ կոյր կուրի առաջնորդէ, երկոքեան 'ի խորխորատ անկանին"։

Ը. ՀԱՆ բարի է, եթէ կամիցիս քահանայանալ սկզբամբ սրբոյն Հերո-

նիմոսի, այնպէս կելոյ՝ որպէս թէ ու-
նիցիս միշտ մեռանիլ. միշտ ուտանել,
որպէս թէ ոչ երբէք ունիցիս մեռա-
նել։ Ասման պէտք են մարդոյ. մի
կորուստներ ժամանակն դատարկու-
թեամբ, և մի ցնդեր զանձն քո լինելով
սուրհանդակ այլոց։ Ասէր նախ քան
զուսուցանելն, զի մի լիցիս վարդապետ՝
երբ պէտս ունիս աշակերտ լինելոյ,
ըստ առածին Պ՚ԷՓոստինոսի։ Մի ու-
սուցաներ ումեք՝ ի կանանց ընթեռնուլ,
գրել, երգել, նուագարան հարկանել,
և որ սոցին նման իցեն. զի այդ գործ է
վտանգաւք լի։ Ասումն եկեղեցականի
ոչ է խեղկատակ պատմութիւն, ոչ նո-
րալուրք, ոչ քերթածք, և այլ այսպիսի
աշխարհական զբօսանք։ Մի ունիցիս
առ քեզ, և մի ընթեռնուցուս զայնպի-
սի գիրս, յորոց յընթերցմանէ փնաս
ինչ հասցէ բարեկրօն վարուց և կրօ-
նից երկիւղածութեան և աստուած-
սիրութեան. մի միայր և յուսումն սրբ-
բազան՝ մինչչեւ քաջ ներկուռ հմտաց-
ցիս քերականութեան և Ճարտասանու-
թեան։ Մի հպիր յուսումն բարոյա-
կան աստուածաբանութեան, առանց
ուսանելոյ զիմաստասիրութիւն. և մի
արհամարհեր զտեսական աստուածա-

բանութիւն, և զկանոնագիտութիւն։ Նախեա զժամանակ ինչ յուսումն եկեղեցական պատմութեան, պաշտամանց և երգոց։ Ոչ բաւական դեգերիլ յուսումն, այլ պարտ է առնել զայն կարգաւ, հանապազորդութեամբ, ուղիղ վախճանաւ, և 'ի վերայ լաւ և ողջամիտ մատենագրաց։ Եթէ 'ի զուր կորուսանիցես զժամանակն և 'ի նանիր ուսմունս, սաստկապահանջ համար ունիս տալ Աստուծոյ։

Թ. Սուրբն Տիբուրտիոս վկայ ոչ արժան դատեցաւ քրիստոնեայ համարել զՏորկուատոս, վասն զի հոգ բազում ունէր յանձին 'ի զարդարել զհերս գլխոյն, և տայր վարսավիրայի հրատպրտել զգլուխ իւր. մանաւանդ թէ աստաց պարզապէս թէ Յիսուս Քրիստոս չկամեցաւ երբէք զայնպիսի ժանտ ազգ ճանաչել 'ի թիւս իւրոց ծառայից։ Ուրյիրաւի. եթէ Աստուած յայտ առնէ 'ի ձեռն առաքելոյն, թէ անարգանք էն առն քրիստոնէի զարմանել զհերս, և 'ի կանայս անգամ չկամէր զհիւսս խոպոպեաց, և ոչ հանդերձս մեծագինս, ոչ ամօթ մեծ լոյէ հերովք և զգեստիւք պաճուճիլ ժառանգաւորի,

որ ոչ միայն 'ի մկրտութեան հրաժա-
բեաց 'ի չքոյ աշխարհի, այլ և 'ի նախ-
կին խուզման հերաց ուխտ եդ ընտրել
զտէր 'ի բաժին ժառանգութեան իւ-
րոյ, և 'ի բաց դնել զհերս վասն սիրոյն
Աստուծոյ, և զծառայութիւն աշխար-
հիկ ձևոյ, զգեցաւ զնոր մարդն յար-
դարութիւն և 'ի սրբութիւն։ Այնթէ
զայնպիսի ազգ ժանտ չկամի Աստուած
'ի մէջ քրիստոնէից, համբերիցէ՞ այդմ
յեկեղեցականս։ Արաւամբք սուրբ է-
կեղեցի դարձեցաւ միշտ 'ի խենդէշ զգեա-
տուց, և արգել եկեղեցականաց աւելի
քան 'ի վաթսուն ժողովս, և այն մեծաւ
մասամբ ընդ ծանր ծանր պատժովք,
ընդ նզովիւք և ընդ բանադրանօք, չզար-
մանել զհերս։ Որ շատ ջանայ գեղա-
զարդել զմարմինն, ինչ ոչ հոգայ սովո-
րաբար վասն առաքինութեան հոգւոյ
մերկացելոյ։ Այնպիսի ժառանգաւոր
անշուշտ յայտ առնէ, թէ ինքն չէ կո-
չեցեալ յաստուածակոյս կոչմն անդր,
այլ յաշխարհակոչմն։

Ժ. Այս ոչ իսկ ցուցանէ զանձն կոչե-
ցեալ յԱստուծոյ կղերիկոս, որ ոչն սիրէ
զեկեղեցի, զպաշտամունս և զհանդէսս
եկեղեցականս. չծառայէ եկեղեցւոյ,

մանաւանդ թէ երեւի անարդանս հա-
մարել իւրումն քաղաքականութեան
կամ ազնուականութեան կատարել
զփոքր պաշտօնս, ամաչելով անգամ՝
ուր չիցէ պատուաւոր, զգենուլ զշա-
պիկ՝ երբ պարտ իցէ, վասն զբռամբ
ածելոյ զսէր օտար. ուր պարտ էր
նմա մեծ համարել զամենայն, որ հայի
'ի պաշտօն մեծին Աստուծոյ. և յուշ
ածել, թէ կղերիկոս որ ոչն պարապի 'ի
կատարումն կարգի իւրոյ խոնարհու-
թեամբ, հանապազորդութեամբ, և
բարեպարիշտ և անյողդողդ փութով,
արժանի գտանի 'ի դուրս մնալոյ 'ի վե-
րին կարգաց։ Զի եթէ այժմ մինչ պէտս
ունիս հաւատարմութեան ծառայելոյ
եկեղեցւոյ, այդչափ թերի ես 'ի ջերմե-
ռանդութենէ և 'ի կրօնասիրութենէ,
քանի առաւել անկրօն և անեռանդն
գտցիս 'ի քահանայութեանդ։

ԺԱ. Զթէ չես յօժարամիտ 'ի գործս
ողորմութեան, և ոչ իսկ առաջիկայ
կամիս լինել քրիստոնէական վարդա-
պետութեան, զիարդ մարթ իցէ հա-
ւատալ, թէ դու կոչումն ունիս քահա-
նայութեան, որ բոլորովին կարգեալ է
'ի փրկութիւն ընկերաց. յորում սեպ-

հական քո պաշտօն լինիցի սիրել զամե-
նայն հաւատացեալս և հայել յօգուտ
նոցա իբր 'ի զուարճութիւն և 'ի փա-
ռաւորութիւն քո մեծ։ Տեսանես դու,
ասէ սուրբն Ամբրոսիոս, զի որ կամի զի-
նուորիլ, կրթի յարհեստ զինուց. որ
յօժարի նաւապետել, փորձ փորձէ 'ի
գետս. որ խնդրէ երաժշտանալ, վար-
ժէ զձայն իւր երգովք. և որ գօտեմար-
տիլ, սնդակազմ առնէ զանդամս, և
մարզէ յաշխատութիւնս. քնութիւնն
զլխովին ուսուցանէ, թէ տղայք թոթո-
վելով սովորին 'ի խօսել. և դու առանց
կրթութեան ոչպէս վարդապետ լինի-
ցիս, և առանց ժրութեան զիմաստ ակն
ունիցիս լինել անձն աստուածասէր և
եղբայրասէր։

ԺԲ. Ի մէջ այլոց ծառայութեանց
'ի սեպհական թեմի՝ կղերիկոսք Ճշդիւ
պարտ յանձի ունին օգնական լինել
ժողովրդապետի յուսուցանել տղայոց
զսուրբ վարդապետութիւն քրիստոնէա-
կան։ Դարի նշան լիցի կոչմանդ, եթէ
սիրեսցես քարեկրօն կամակարութեամբ
զայս գործ սուրբ, զորմէ կախեալ կայ
փրկութիւն կամ կործանումն համօրէն
ժողովրդեան. մինչեւ ասել Գերսոնի,

ոչ գիտեմ ասուգիւ, թէ նախանձ փա-
ռացն Աստուծոյ կարիցէ առնել ինչ մի
մեծ քան զայս, յորմէ հետէ Քրիս-
տոս՝ յորում են ամենայն գանձք գի-
տութեան և իմաստութեան Հօր, եկն
յերկնից յերկիր առ ուսուցանել մեզ
զսուրբ վարդապետութիւն իւր, և կո-
չեաց սիրողաբար զմանկտի՝ զալ առ
ինքն։ Եւ արդ արա զայդ ամենայն
մտադիւր ջանիւ աղօթից և ուսման,
և ամենայն իմաստուն պարկեշտու-
թեամբ և բարեսէր համբերութեամբ
յամենայն 'ի տօնս. և զայս այսպէս
առնելով՝ փայլեացես իբրեւ զաստեղս
ընդ ամենայն յաւիտեանս։

ԺԳ. Զկամի Աստուած պարզապէս 'ի
մէջ ուխտի մանկանց եկեղեցւոյ զանհա-
մեստս, որ չեն արժանի կալոյ և 'ի մէջ
քրիստոնէից. և ոչ հաճի արկանել զպա-
տուական մարգարիտս սուրբ կարգին
իւրոյ առաջի անսուրբ անասնոց։ Որ
միանգամ ցանկայ եկեղեցական վիճա-
կի, պարտի հրաժարել յամենայն ան-
մաքրութենէ. և չպարտի մատչել 'ի
կարգ, որ ոք չիցէ կոյս, կամ վկայեալ
յողջախոհութեան։ Որ ասիցես թէ
սուրբ պահեցից զանձն իմ ընդ լինելս

կիսասարկաւագ. վայ է քեզ եթէ ոչ կանխաւ սրբեսցես զքեզ։ Յարհուն թիւն քո տացէ քեզ մուծանել զաղ տեղութիւնս պժգալի ախտից 'ի խոր ան Աստուծոյ կենդանւոյ, և պահեսցէ յանձին քոյսմ զպղծութիւնս նոյն աղտից. և ապականելով զտաճարն Աստուծոյ՝ կրկին դատապարտութիւն ընդունիցիս. վասն զի կրկնապատիկ են մեղքն զոր գործես, պահելով յանձին զայդպիսի քարուական խիղճ մտաց, և տակաւին միջամուխ լինելով 'ի սրբութիւն անդր սրբոց։ Ապականեն աստուածաբանք՝ մարդասիրադոյնք անգամ 'ի նոսա, ոյք ասդեն թէ ոչ միայն պարտ է պարզապէս արգելուլ կղերիկոսի ունակացելոյ յիրս անհամեստութեան ելանել 'ի կիսասարկաւագութիւն՝ մինչչեւ ի՞նչ տուեալ զժամանակ ինչ բաւական գրաւական հիմնեալ 'ի գործս զիւրոյ հաստատուն մաքրութեան, այլ և պահանջեն և եւս, զի թէ և այնպիսի կղերիկոս պարզապէս զղջացեալ ի՞նչ, այլ յորժամ ասդագոյնս խնդրեսցէ փութապէս հասանել կարգի, պէտք են ժխտել նմա իսպառ զարձակումն, որպէս յետին լրբենւոյ և անարժանի. վասն զի չկարէ այնպիսին և

ոչ իսկ փորձուլ ախտի այդպէս զօրա-
գունիւ հաւատալ պարզապէս հաւա-
տարիմ միշտ գոլոյ յողջախոհութեան.
և ոչ երբեք ճշմարտի, զի այնպիսի
զղջաւոր լինիցի երեւելի ատուածպաշ-
տութեամբ և ողջախոհ վարուք, ըստ
որում պահանջէ ժողովն Տրիդենդեան,
եթէ իսկ և իսկ սկսեալ է վերանալ 'ի
ժահահոտ տղմոյ աղտեղի մեղաց։ Եւ
քանզի այսոքիկ դէպք մարթին պա-
տահել 'ի ժամանակի կրթութեանց
վասն ձեռնադրութեան, յորում վայրի
բաց յայլոց դժուարութեանց լինի առա-
ւելուլ յապաշխարողն երկիւղ վատա-
համբաւութեան. եթէ նա յետս կայցէ
յառաջիկայ ձեռնադրութենէ, խոհա-
կան խոստովանահայրն պարտական է
'ի նեղ արկանել զձեռնադրելին, դնե-
լով յանդիման աչաց նորա, թէ կեանքն
յաւիտենից 'ի վեր է քան զամենայն
մարդկային ակնածութիւն. և թէ ոչինչ
վատանութիւն լինի, եթէ անձն
ձեռնադրելի վկայութիւն դիցէ կամիլ
աւելի հաստն խորհրդով մտաբերել
վասն ընտրելոյ զվիճակ ինչ, որ բերէ
ընդ իւր բեռինս ծանունս, զոր յետ
միանգամ ընտանձնելոյ չէ մարթ եր-
բեք 'ի բաց թողուլ։

ԺԴ. Առաջին փորձութիւնք առն կղերիկոսի են յաձախ վարել ընդ կանայս։ Յուցակութիւնք սիրոյ, սպասահարկութիւնք, փոխադարձ ընծայք, քաղաքավարութիւնք, պարգեւք, ընկերել կանանց, կալ միշտ ընդ նոսա, և ոչ մեղանչել, համարեալ են մեծ եւս հրաշք քան յարուցանել զմեռեալն, ըստ առածին Հռոնարգոսի։ Այս սուրբն Փիլիպպոս Այերեան ասէր. "Ի պատերազմի զգայութեան յաղթեն տկարքն երբ փախչին"։ Այկեղեցական օրէնք պատուիրեն քեզ խոյս տալ՝ի խուժանէ ծպտելոյ զերեսօք, չշրջիլ ծպտեալ պատրուակաւ, ոչ պարել, և ոչ երթալ՝ի տես պարուց, չգտանիլ՝ի ժողովս առասպելախօսաց, խեղկատակաց, և այլոց աշխարհային տեսարանաց։ Հեռի լեր՝ի շրջելոյ՝ի գիշերի։ Աշխարհայինն քնար չմիաբանի ընդ սուրբ սաղմոսարանի։ Կարի կարևոր է զի պաշտօնեայք սեղանոյ և ամենայն ժառանգաւորք մի գոցին՝ի տեսարանի իմիք, որ լինի՝ի պատճառս հարսանեաց, եթէ ընթրիք լցեն, եթէ կաքաւք, և որ սոցին նման. և ոչ երբեք մտցեն՝ի ժողովս, ուր երդք լինին սիրոյ, և խենեշ նուագք կամ պարք. որպէս զի աչք

և ականջք սրբազանեալք սուրբ խորհրդովք մի պղծեսցին յանմաքուր խօսից, և յանվայել տեսարանաց։

ԺԵ. Ժառանգաւորք պարտին խորշիլ 'ի հիւրանոցաց՝ բաց 'ի հարկէ ճանապարհորդութեան. մի խաղասցեն խաղս բախտի թղթով կամ քուէիս, և մի մերձ կացցեն. և ոչ հրապարակաւ գնտակ և այլ ինչ խաղասցեն, մանաւանդ ընդ աշխարհականս։ Պարտին եկեղեցականք պաշտօնեայ լինել աշխարհականաց, և ոչ գործակալ շահից նոցա. ըստ կարգաւորութեան նախնեաց սպառնալեօք բանադրանաց արգելեալ է ժառանգաւորաց տուրևառս առնել, և ընդ նովին պատժով արգելեալ է վաշխառութիւն, և զինակրութիւն։ Ոչ գտանի 'ի սուրբ գիրս սուրբք որսորդ 'ի ցամաքի։ Ո՞ կարէ ասել երբեք, թէ ունիցի նախանձաւոր որսորդ հոգւոց լինել, և հաւատարիմ պաշտօնեայ և հաղարապետ աստուածային խորհրդոց, որ զօրն ողջոյն անցուցանիցէ 'ի գործս աշխարհականս, և միշտ ատրճանակ յուսս, կամ զէն 'ի մախաղս, կամ թուղթ և քուեայ 'ի ձեռս։ Սովորեցո զանձն քո անդատին

'ի մանկութենէ գործել ըստ հոգւոյ և ըստ հրամանաց սուրբ եկեղեցւոյ։ Որ-դեակ, միտ դիր 'ի մանկութենէ, առէ քեզ հոգին սուրբ 'ի բերանոյ Սիրաքայ, ուսման և աստուածպաշտութեան, և տեսցես զարգասիս ջանիցդ յալեւորեալ հասակի։ Որ 'ի մանկութենէ պատաղի 'ի յիմարութիւնս աշխարհի, ապաքէն տակաւ հնանայ 'ի նոսին։

ԺԶ. Օրինակ քո բարի առանին և արտաքոյ, ընդ քոյս և ընդ օտարս՝ այնպիսի լինիցի, զի զգօն բարս յամենայնի յանձին ցուցանիցես, և օրինակ բարեաց ամենայն հաւատացելոց լինիցիս։ Որպէս եթէ լինիցիս որպէս առիւծ 'ի վեր 'ի վայր առնել զընտանիս, և լեզու քո լինիցի գայթագղեցուցիչ, աչք քո չարալիս, ձեռք քո կապտիչ ընչից այլոց, և բարք քո յանդուգն, անսաստ, յամառ առ ծնողս և ուսուցիչս և մեծաւորս, և անհամեստ ընդ դասակիցս, ընդ կանայս որ 'ի տան և որ արտաքոյ, և ընդ ամենեսին բարձրամիտ և ամբարհաւաճ, զիարդ լինիցիս անուշահոտութեամբ վարուցդ 'ի միութիւն եկեղեցւոյ, զոր պարտիս շինել քարոզու-

թեամբ և օրինակաւ։ Որպէս փայ-
լեցեալ այնուհետեւ 'ի տանն Աստուծոյ,
հպատակ հովուաց, խաղաղասէր ընդ
քահանայս, սիրալիր ընդ աղքատս,
համբերատար ընդ դառնացուցիչս, վար-
դապետ առաքինութեանց, և օրինակ
բոլորից։ Անարժան է ամենեւին կալոյ 'ի
մէջ եկեղեցականաց՝ որ չէ արժանի տա-
նելի լինելոյ 'ի մէջ աշխարհականաց։

ԺԷ. Յայտնի ցուցակ վարուց քոց և
կենաց են վարք և կեանք այնոցիկ, ընդ
որս վարիս։ Ի վատթար ընկերաց ա-
մենեքին պարտին հեռի կալ, այլ առա-
ւելապէս պատուիրեալ է այդ նորամուտ
ժառանգաւորաց. իբր զի դեռ համբակ
գոլով սոցա ըստ հասակի, և տակաւին
անհաստատ յառաքինութեան, առա-
ւել 'ի վտանգի կան կործանելոյ յախտս
մոլութեանց։ Դանդի պարտին փախ-
չել և յաւելորդ ընտանութենէ աշխարհականաց, որ է մահաբերն աղբիւր մե-
ղաց և դայթագղութեան։ Լսոյս տուր
և յընկերութենէ աշխարհասէր եկե-
ղեցականաց, անբարի օրինակ եղե-
լոց, և որոց չունչցին զոգի եկեղեցա-
կան։ Կալ որպէս առած անյեղլի՝ կե-
նաց կցորդ միշտ լինել այնոցիկ, զք

ընչեն 'ի քեզ զոգի աստուածպաշտու-
թեան, մանաւանդ հաստունք հաստակաւ
և առաքինութեամբ. զի թէ կենակցիլ
ընդ հաստակակիցս քաղցր թուիցի, կե-
նակից լինելն ընդ երիցագոյնս է առա-
ւել անքոյթ, ըստ առածին Սմիրո-
սիոսի։

ԺԸ. Ամէն և կարի խնամատուն ոք ի-
ցես, տակաւին մարդ ես, և կարօտ
խորհրդոյ. միայն Աստուած է ապե-
նիաղ։ Որ առ վարդապետս ունի զանձն,
աշակերտ է այնպիսին ուրումն անմտի,
ասէ Դեռնարդոս։ Այրն խոստովանու-
թեան քո լիցի քեզ խորհրդական, զոր
ընտրեսցես որպէս մի 'ի հազարաց, և
յարմարագոյն 'ի յարմարաց, և մի փո-
խեսցես զայն առանց հարկի, որպէս
սահմանեաց անձին իւրում սուրբն
Ֆրանկիսկոս սալեզեան։ Փոխել զխոս-
տովանահայր սովոր է վնասել հոգւոյ,
որչափ մարմնոյ փոփոխութիւն բժշկի։
Դաջ զնեսա զչարն և զբարին խղճի
մտացդ, մինչեւ կարող լինիցիս ուղղել
զանձն ոչ միայն 'ի կարգի կոչմանդ, այլ
և յամենայն հոգեւոր ընթացս քո։ Ի
միտ առ, ասէ սալեզեանն, զի առաջին
պայմանն, զոր դեն խնդրէ 'ի հոգւոյ

զոր խաբել կամի, այն է՝ զի մի խօսեսցի 'ի խոստովան լինել զյանցանս։

ԺԹ. Յետ ընտրելոյդ զընտիր խոստովանահայրն, խոստովանեա նմա միանգամ կամ երկիցս յեօթնեկի, թէ և ծանր յանցուածս ոչ ունիցիս։ Եթէ անկցիս 'ի ծանր մեղս, կամ 'ի խիղճ՝ որ տայ քեզ երկնչել 'ի մահուանէ, մի՛ անցուցաներ զայն օր առանց խոստովանութեան և հանդարտելոյ զխիղճդ. և եթէ անփոյթ առնիցես զայսուիկ, հոգիդ կայ 'ի ծանր վտանգի դատապարտութեան։ Յամենայն կիւրակէս և 'ի տօնս մատիր 'ի սուրբ հաղորդութիւն, մանաւանդ եթէ մտեալ է քո 'ի սուրբ կարգ։ Օ՛խարդ լինիցիս հաւատարիմ պաշտօնեայ սուրբ խորհրդոց, զորս ունիս ստէպ ընդունել և մատակարարել, եթէ յաւուրս յայսմիկ տաղտկանաս 'ի նոցունց, և չարաչար վարիս նոքիմբք՝ առանց ինչ պտղոյ, մանաւանդ թէ և աննեարելի ժպրհութեամբ՝ լռելով զմեղսն ծանուցս, չթողլով զարիթս մերձաւորս, և չկամելով տիրաբար քանցել 'ի բաց զմոլութիւնս քո. և այնպէս լինիս պարտական մարմնոյ և արեանն Քրիստոսի։

Ի. Աղօթք, ըստ ասելոյ սրբոյն Ս. Ինչենցիոսի Պաւլայեցւոյ, այնպէս հարկաւոր են որոց պաշտեանն զսուրբ սեղանն, որպէս սուսեր զինուորաց։ Ցուր ինձ, ասէ նա, այր մի աղօթական, և լիցի բարեյարմար ամենայն բանի. 'Ի կիր արկ զաղօթս ընդ առաւօտս և ընդ երեկոյս, ընթերցիր Ջերմեռանդութեամբ զպաշտօն կուսին։ Օր ամենայն առաջիկայ լիցիս խորհրդոյ սրբոյ պատարագին, և հասարակաց աղօթից առտնին։ Ախ քան զմտանել յանկողին քննեա զխիղճ մտաց քոց, արա սովորութիւն հառաջական աղօթից։ Յաղօթեն կենակից լինիմք և խօսակից ընդ Աստուծոյ. յընթեռնուլն Աստուած կենակցի և խօսի ընդ մեզ։ Հապա, տուր զքեզ յընթերցումն հոգեւոր գրենոյ, որ Հաւէն զպարտեայ եկեղեցականաց. այլ 'ի վեր քան զամենայն զօր ամենայն սահմանեա անձին քոյ կէս մի ժամու զհետ լինել մտածութեան ամենայն ոգւոյ։ Զոր զի այս կամք են սրբոյն Կարոլոսի, զի կղերիկոսք 'ի քննիլ անդ իւրեանց հարցցին մանրամասնաբար, եթէ գիտակ լցեն որչափ ինչ պահանջի առ մտաւորական աղօթս. և թէ առնէին զայն, և որոմ

օրինակաւ, և որով պտղով. վայ է մեզ եթէ չունիմք զպարգեւ աղօթից. պարգեւ կարեւոր 'ի գործ արկանել զպաշտօն քահանայական։ Բանդի և զարմանք մեծ են թէ որով խղճի մտօք քահանայանայ որ չունիցի զպարգեւ աղօթից։

ԻԱ. Փոյթ կատարելութեան է լաւագոյն նշանակ կոչման։ Որ ցանկայ մատչել յաստուածային պաշտամունս, պարտի կատարեալ լինել յառաքինութեան։ Օ՜ր շինութիւն առնուցուն աշխարհիկք, որ աշակերտք են քո, եթէ տեսցեն նոքա զանձինս մեծացեալ առաքինութեամբ քան զվարդապետս։ Յուշ լիցի քեզ, զի ոչ միայն հովիւք, երիցունք, և սարկաւագունք պարտին յառաջել քան զժողովուրդն 'ի գիտութեան և յաստուածպաշտութեան, այլ և դունապանք եկեղեցւոյ, ընթերցողք, և երգմնեցուցիչք։ Պաշտօնեայք տանն Աստուծոյ աւերիչ լինին եկեղեցւոյն Քրիստոսի, եթէ աշխարհականք ընտիր եւս գտանիցին քան զեկեղեցականս։

ԻԲ. Ակարեւ ցուցանել զքեզ կոչե-

ցեալ առ յԱստուծոյ, եթէ առ 'ի ձեռ-
նադրիլ ընդ անուամբ թուական ծանրա-
բեռնեսցես զոգիդ ահագին ծանրու-
թեամբ յանցանաց, և սոսկալի պատ-
ժով սիմոնականութեան. և կամ եթէ
ձեռնադրելով բանիւ Հայրենի ժառան-
գութեան անձնընծայ լինիցիս 'ի ձեռս
բերել զայն փնասու իրաւանց այլոց եղ-
բարց. ուր հաւաստի ինն է զի այնպի-
սի ստացումն, ոչ բարի է և ոչ վաւե-
րական. կամ թէ առնես զքեզ պար-
տաւոր, և մանակից սուտ երդմանց
նաեւ 'ի նշանակելն եւեթ զբաւականու-
թիւն հասից հաստատեալ 'ի ժողովոյ
քումմէ. եւս առաւել եթէ ժառան-
գութիւնն այն սուտ իցէ, կամ նենգաւ
պատրեալ իցէ քո զնախագահն. վասն
զի նովին իսկ գործով անկանիս ընդ
կախմամբ. ուստի և 'ի կիր արկանելդ
զկարգս անկանիս և յանկանոնականու-
թիւն ըստ կանոնաց։

Ի Գ. Մի բացցեն քեզ Հանապարհ 'ի
ձեռնադրութիւն ոչ աղաչանք, և ոչ
ստիպողութիւնք բարեկամաց և աղ-
նուականաց, որ ոչն ունին այլ տեղի,
բայց 'ի ցուցանել զքեզ յանդուգն և
անարժան. այլ յառաջ ածցէ զքեզ քո

լաւութիւն, աստուածպաշտութիւն, և խոնարհութիւն։ Յուշ լիցին քեզ բազմութիւնք երեւելի երեւելի օրինակաց նորածնեալ եկեղեցւոյ, զորոց ասէր սուրբն Աւգոստինոս՝ եւս և առ իւրովք ժամանակօք, թէ յոլովք 'ի նոցանէ յաւկամայ կամս վերառեալ լինէին 'ի ժառանգաւորութիւն եկեղեցւոյ։ Ասած էր սրբոյն Գրիգորի մեծի, թէ զայն ոք պէտք էին յառաջ մատուցանել 'ի սուրբ սեղանն, որ հրաւիրեալ 'ի կարգ անդր՝ հրաժեշտ տայ, լայ և խոյս տայ։ Այսոքն որոյ իրաւամբք պարտ էր 'ի բաց մերժել զայն, որ փառասիրութեամբ անձնամատոյց լինի, կամ տարադէպ ձեռնադրեցեալ լինիցի. ամենայն իրի և բազումք յարդի ժողովոց 'ի բաց տարադրեն 'ի կարգաց և 'ի թոշակառութեանց զայնոսիկ, որ զանձինս ընծայեցուցանեն յանձնարարութեամբք։

Դ. Այլ թախանձեր զառաջնորդն աղաչ կացուցանել զքեզ 'ի սահմանեալ միջոցաց ձեռնադրութեան։ Զանազան պատճառք որ սովոր են յառաջ բերել առ ընդունելոյ զանօրինութիւն, չեն յոլովակի աւելիք հարկեցուցիչք 'ի խնդրել զայն. այլ բազում մասամբ ունայնասիրու-

թիւն, կամ շահասիրութիւն, կամ սէր
ազատութեան առ չկամելոյ ընդ երկար
մնալ ընդ հպատակութեամբ և փորձով
ուսման, քննութեան, ծառայութեան
եկեղեցւոյ, վկայադրութեան, և որ
սոցին նմանք լցեն։ Վ ախճան օրինաց
է 'ի տալ քեզ ժամանակ՝ ուսանել և
'ի միտ առնուլ զմեծութիւն ծանրու-
թեան վիճակիս. կրթել զանձն քո 'ի
կարգս ընկալեալս, և ստանալով զմեծ
եւս գիտութիւն և զառաքինութիւն
նշանաւոր՝ աստիճան քան զաստիճան 'ի
վերս ելանել յայլ կարգս։ Պ ապքէն խու-
սափելն 'ի սուրբ օրինադրութենէ, է
դնել զանձն 'ի վտանգ անկանելոյ հապ-
ճեպ ընթացիւք։ Ճ ուչումն՝ որ իղձ լիցի
թուչելոյ նախ քան զբուսանել թեւոց,
գահավէժ վայրաբերի։ Ն ունդ վա-
ղագոյն կանխեալ՝ վիժած գտանի ոչ 'ի
ընուլ զտուն, այլ զգերեզման, ասէ մեծն
Գ ՐիգՈր 'ի հովուականն։

Ի Ե. Դ ալ տես, զի խնդիրք քո լցեն
արդարացի և անկեղծ։ Ն պիսկոպոսն
մահուչափ մեղանչէր 'ի ձեռնադրել
անդ զանարժան պաշտօնեայս. նմին ի-
րի պարտի յապահովիլ գոնէ այլոցն
վկայութեամբք զլաւութենէ ձեռնա-

զրելեաց։ Բայց արդ կարէ նա 'ի խաբս անկանիլ. այլ դու ոչ այդպէս, որ ոչն կարես ասել չգիտել զանձին անարժանութիւն. ապա ուրեմն դու ես առաւել պարտաւոր, և արժանի մեծի եւս պատժոյ։ Վ կայութիւնք և կարևոր խուզարկութիւնք յումպէտս լինին, և ոչ օգտեն քեզ առաջի Աստուծոյ, եթէ չիցեն Ճշմարիտք։ Օ՜ իմարդ Ճշմարտեսցի զքէն վկայութիւն բարի վարուց, եթէ դու զանձն քո գիտես անօրէն և ապիրատ։ Յաճախութիւն վարդապետութեան, խորհրդոց, դպրոցի, և որ 'ի կարգին, զիարդ ստուգեսցի, եթէ հաղիւ զքանի մի նուագս գնացեր 'ի մերձենալ անդ աւուրց ձեռնադրութեան։ Որպէս Ճշմարտեսցի թէ յառաջամիտ գտար 'ի քոյդ յառաջադիմութիւն ըստ ուսման և ըստ գիտութեան, եթէ դատարկապորտ ես և տգէտ. և գիտես խղճի մտօք, զի չէիր բաւական լոկ խընդրելն զայնպիսի վկայութիւնս, եւս առաւել ջանալդ առնուլ զայն համախոհութեամբ, ստութեամբ, պատրանօք, պարգևօք, բռնազբօսութեամբք, յաւելու յանյարմարութիւնս անարժան զքեզ կացուցիչս զեւս մեծ վատանուն ժպրհութիւն, 'ի կամել քո 'ի քո կողմ

մանէ առնել խաբեբայս, ստերգմունս, մատնիչս և դահիճս եկեղեցւոյ և հաստատակաց բարւոյ զայնոսիկ, ոյք ունին կցորդ լինել քումդ ձեռնադրութեան։ Դիմելով 'ի կարդ խաբկանօք, և սուտ ցուցակութեամբ պահանջելոցն, լինիս մրուր աղտեղի, և անարդ քեռն եկեղեցւոյ, կամ թէ այսպէս գողաբար և յարամրի մտանելով յայտ առնես զանձն քո լինել աւազակ և հուղկահար ջարանուն։

Դ. Ուրանձնութիւն 'ի սուրբ կըրթութիւն օրինադրեալ է քեզ նախ քան զընդունելութիւն սուրբ կարգաց. որպէս զի քաջ խելամուտ լինիցիս վիճակի այդմ կենաց, յոր կապես զքեզ 'ի կիսասարկաւագութեան. և ճշդագոյնս որոճելով զիրսն սուրբ մտածութեամբ, և զգուշաւոր հանրական խոստովանութեամբ բովանդակ կենացդ անցելոց՝ պատրաստեսցես զանձն քո մաքրութեամբ մտաց, և եռանդեամբ սրտի բորբոքելոյ յայնպիսի ծանր վիճակ։ Եւ արդ արա զայն ոչ առ հարկի կամ առ բռնադատութեան, ոչ առ սովորութեան, և ոչ ցրտութեամբ, այլ ամենայն ոգւով և ջերմեռանդու-

թեամբ։ Այլ եթէ ըստ նախագրե-
լոցս ծանիցես զանձն քո իբրու ոչ կոչե-
ցեալ առ Յ.ստուծոյ, կամ անյարմար
գտեալ, մի թողուր զանձն քո յաղթիլ
'ի մարդկային ակնածութենէ, 'ի կա-
մաց ծնողաց և ազգականաց, 'ի շահասի-
րութենէ և 'ի պատճառանաց, այլ պատ-
մելով զիրան յունկն վերակացուի հո-
գւոյդ, դադարեա 'ի խորհրդոյ աստի, և
թող զեկեղեցական Ճանապարհ, և հաս-
տատեա զսիրտ քո յետս դառնալ անտի,
առ ապահովել զյաւիտենից փրկութիւն
քո, անշուշտ դնելով 'ի մտի թէ չպակասէ
քեզ առ Յ.ստուծոյ օգնականութիւն
առ յաղթելոյ ամենայն դժուարու-
թեան. և ունիցիս եւս առ այս ձեռնտը-
ւութիւն ամենայն իրօք յեպիսկոպոսէ
քումմէ, եթէ նա գիտակ լիցի քեւ և
կամ 'ի ձեռն այլոյ գիտաւորութեան քո։
Այլ չիք տարակոյս, զի լաւ իցէ հաւաս-
տեաւ փրկիլ 'ի ցածուն վիճակի աշ-
խարհականութեան, քան բարձրանալ
'ի պատիւ քահանայութեան, և 'ի նմին
կեալ առաւել յանցաւորութեամբ, և
մատնիլ յահագին պատուհաս աննեերե-
լի։ Եթէ չառնես այդպէս, վայ է քեզ.
լաւ է քեզ բրել զերկիր, կամ մուրա-
ցիկ լինել, զի մի լիցի յաւուր միում

գոչել լալագին. Ա. յօր դատապարտե-
ցայ, վան զի ձեռնադրիլ կամեցայ։

ԻԷ. Արկնակի առաւելուցուն յան-
ցանք քո՝ եթէ մեղք մերձենաս յըն-
դունելութիւն կարգի։ Արքութիւն
վարուց խնդրի յընդունողն կարգի, որ-
պէս զի արժանաւոր լիցի 'ի կատարել
զայն. և մահուչափ մեռանիս 'ի ձեռ-
նադրիլդ ծանրացեալ մեղք, 'ի չարա-
չար խոստովանիլդ և 'ի հաղորդիլդ
ծանրաբեռնեա զոգիդ սեղանակապտու-
թեամբք. բաւէ, 'ի միում եւեթ
աւուր առնել այնչափ անհեթեթ սե-
ղանաշերծութիւնս, և այն ընդդէմ
Աստուծոյ՝ որ կամի ցուցանել զմեծ ո-
ղորմութիւն։ Փոխել զփրկութիւն 'ի
կորուստ, զսուրբ խորհուրդս 'ի սրբա-
պղծութիւն, և յեղաշրջել զկեանս 'ի
մահ, յայտ առնեն զքեզ կորստական լի-
նել հոգի դժպհի։ Այս դժուարին իսկ
է, թէ դու 'ի լաւ անդր վախճանես-
ցես զընթացս քո, որ սկսարդ այդպիսի
սոսկալի սկզբամբք։

ԻԸ. Անթէ թոշակաւոր լիցես, վայե-
լես յինչս եկեղեցւոյ. հապա, փոյթ յան-
ձին կալ ջերմեռանդն սրտիւ պաշտել

զժամերգութիւն, յոր պարտաւորեալդ
ես։ Ի թողուլ անդ զբոլորն կամ զմասն,
բաց՝ի մահուչափ մեղաց, պարտիս յետս
հատուցանել զեկամուտս ըստ չափոյ
պակասելոյդ, ըստ կանոնին սահմանե-
լոյ՝ի սրբոյն Պիոսէ հինգերորդէ։ Ա. յս
հատուցումն պարտաւորէ զքեզ խղճի
մտօք յառաջ քան զյայտարար վճիռ
դատաւորի, և ոչ կարես ընուլ զայն
պարտս ողորմութեամբ իւիք, զոր ար-
դէն արարեալ ի՞նչ քո՝ի հասից թոշա-
կի։ Ունիս և զայլ պարտիս, և մանա-
ւանդ զծանր պարտաւորութիւն չթող-
լոյ վատթարանալ, այլ առաւել պահ-
պանել ամենայն իսնամով զեկեղեցա-
կան եկամտից զտեղիս. և ծանր պարտք
՝ի վերայ կան քեզ՝ի կիր արկանել՝ի
բարեպարիշտ գործս վասն եկեղեցւոյ,
և վասն աղքատաց զայն ամենայն որ
ինչ յաւելցի յեկեղեցական հասից յետ
օրինաւոր պարենի քո։ Զոր ինչ միան-
գամ արտաքոյ հարկաւոր կերակրոյդ և
անպակոյձ զգեստուդ պահեսցես առ
քեզ՝ի սեղանոյ անտի, գիտեա՛ զի չէ՞
քո, այլ գողութիւն է և յափշտակու-
թիւն և սեղանակապտութիւն։ Զի ոչ
իսկ կարող ես պարգևել զայն ազգա-
կանացդ ընդդէմ եկեղեցական կանո-

նաց, երբ չիցեն ստուգապէս աղքատք յիւրեանց վիճակի։ Եկեղեցական ե-
կամուտք 'ի տունս այլոց են որպէս հուր այրեցող ներքոյ և արտաքոյ՝ ասէ ոմն 'ի բարեպարիշտ ծիրանաւորաց։ Այս ա-
ռաւել ծանուցս մեզանչէս, եթէ ծա-
խեսցես 'ի շռայլութիւնս, և կամ յիրս անարժանս։ Յուշ լիցի քեզ զի եկեղե-
ցական հասք՝ են ինչք Աստուծոյ, եկե-
ղեցւոյ, աղքատաց, և ուխտք հաւատա-
ցելոց, զին արեանն Քրիստոսի. և չէ մարթ կարգել զնոսին 'ի յագուրդ ագա-
հութեան և փառասիրութեան ազգա-
կանացդ կամ անձինդ. և չպարտին կուր լինել կղերիկոսաց աշխարհասիրաց, կնա-
մարդեաց, խաղացողաց, դատարկապոր-
տից, և որ 'ի նոցին սակի։ Այն ինչք թողեալ եղեն 'ի պէտս սիրոյ, և ոչ չարա-
չար վատնութեան. և եթէ առաքեալն պատուիրէ, զի Որ ոչն աշխատի, և կերիցէ մի, ապա ցասմանն Աստուծոյ ներքոյ անկանիս դու, եթէ անաշխատ դատարկա-
կեցութեամբ ուտես զհաց եկեղեցւոյ, զժառանգութիւն սրբոց վկայից, զձրի տուրս հաւատացելոց բարեպաշտից 'ի պարէն պաշտօնէից եկեղեցւոյ առ 'ի շահ հոգւոց, և 'ի փառս Աստու-
ծոյ. և զայս ամենայն գիտելով չտա-

նիս փոյթ առ 'ի վարել զայն ըստ պարտեաց խղճի մտաց 'ի բարին եկեղեցւոյ։

Ի թ. Եթէ ձեռնադրեալ ինչես 'ի սուրբ կարգս, բաց 'ի պարտաւորութենէ աստուածային ժամերգութեան՝ յիշեա զի ոչ եւս ես ազատ, և չէ քեզ օրէն անցանել 'ի կապս աշխարհականս. այլ պարտիս ծախել զամենայն ինչ յաւէժապէս 'ի ծառայութիւն Աստուծոյ, որում ծառայելն է թագաւորել. և նորին օգնականութեամբ ունիս պահել զոսկեղինիկ ողջախոհութիւն։ Եթէ յաշխարհիկ ոք մեղք ընդդէմ մաքրութեան ծանունք են ընդդէմ մերձաւորին՝ բաց 'ի մարդասպանութենէ, 'ի քեզ ծանրագոյն եւս են, քան յաշխարհիկ այր. վասն զի յետ հանդիսապէս ընծայելոյդ Աստուծոյ զքո ողջախոհութիւն՝ չկարես ապականել զայն առանց ամենածանր սեղանակապտութեան։ Լեր անարատ, մաքրափայլ, ողջախոհ, որպէս վայել է պաշտօնէից Քրիստոսի, և գործակցաց կատարողութեան մարմնոյ և արեանն տեառն։ Յուշ ած զնախաւկայն սուրբ Ստեփանոս, որ վասն անզուգական մաքրութեան 'ի

քո պաշտօն ընտրեցաւ յառաքելոց։ Ա-
ռաջին սարկաւագունք լի էին հոգւով
սրբով և իմաստութեամբ, և նոցա յան-
ձնեալ էին կարևորագոյն գործք սիրոյ.
կերպարանակից լեր սիրոյ նոցա և առա-
քինութեան։ Այսու յաւուր յայսմիկ
պաշտօն սարկաւագի է ոչ միայն սպա-
սաւորել սրբոյ սեղանոյ, այլ և քարո-
զել։ Նոյնպես, կրթեա զանձն քո ըստ
իմաստուն կարգաւորութեան ծերա-
գունից 'ի քարոզութիւն ուսմամբ և
կարևոր վարժութեամբ։ Ոչ միայն
քահանայք, այլ և սարկաւագունք ըստ
բանի սրբոյն Պաւղոսի՝ պարտին լինել
անստգտանելի։ Դաջ 'ի միտ առ, ասէ
Ոսկեբերան, զի առաքեալն պարտաւո-
րէ և զքեզ յառաքինի և յանարատ
վարս։

Ա. Ի մերձենալ մեծի աւուր, յորում
ընծայիս 'ի ձեռնադրութիւն քահա-
նայութեան, յիշեա զոր ասէր ցանձն
իւր ոչ որպիսի և է եկեղեցական ոք,
այլ սուրբն Ֆրանկիսկոս սալեզեան.
"Քահանայիցն վիճակ մեծ է քան
զհրեշտակն լինել։ Ո՛յ պարտ և արժան
է ինձ քննել զանձն իմ և փորձել ամե-
նայն փութով՝ ուր պարտ է ինձ քահա-

նայաղործել զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ. որպէս զի 'ի յատակ սրբոց բաժակին ոչ գտից զդատապարտութիւն անձին իմոյ ,, : Սաքրեա զանձն քո առանձնութեամբ, ապաշխարութեամբ, մեռելութեամբ. և կանխեաց յաղօթս, յողորմութիւնս, և յեռանդն Ջերմագին։ Յաւուր յորում զառաջինն մատուցանես պատարագ, 'ի բաց լիցին մեծամեծ կերակուրք և ըմպելիք, և ամենայն զբօսանք ընդունայնութեան, և այն ամենայն չարաչար սովորութիւնք յաւելորդս մոռնեալք 'ի համարձակութենէ ժողովրդեան, կամ յագահութենէ քահանայից : Շատասջիր ճաշել ընդ ընտանիս քո, և յայնպիսի օր սրբութեան մի՛ ունիցի տեղի և ոչ մի աշխարհական խրախութիւն, կամ ցնդումն մտաց. վասն զի առ Աստուած միայն պարտին ուղղիլ ամենայն ուխտք սրտի առանց իրիք մտածութեան երկրաւոր իրաց : Պոյժ հանդերձք և շուք հանդերձանաց լինիցին սուրբ առաքինութիւնք. Ջերմեռանդն ամփոփումն սրտի լիցի 'ի սիրոփանս եկեղեցւոյ, և ոչ թատրոնական երաժշտութիւն. համար աղքատաց դարմանելոյ լիցի քո հանդիսական սեղան : Սուրբն Ընդրեաս Պորսինի չկա-

մեցաւ շուք ինչ հանդերձանաց ըստ ըղձից ծնողաց և ազգականաց, այլ մատոյց զառաջին պատարագն արտաքոյ քաղաքի 'ի փոքրիկ վանս ինչ, և Աստուած միսիթարեաց զնա փափկութեամբք դրախտին։ Որպէս ասա տեսանեմ, սուրբք ամենայն միշտ զքահանայութիւնն առ հարկի առին յանձն որպէս բեռն ծանր։ Որչափ աւելի բարձր և վսեմական է պատիւ քահանայութեան, այնչափ առաւել մեծ է և վտանգն։ Այթէ լինիցի 'ի քեզ պատկառելի երկիւղ քահանայական պատուոյ, ունիցիս անդստին 'ի կղերիկոսութենէ քաջալաւ նշան կոչման. և 'ի քահանայութեան զամենալաւ միջոց և յորդոր 'ի ընուլ զմեծամեծ պարտաւորութիւնս քո։

ՀՍՍՌ ԱԿԱ.ԳԳՊ

ՑԱՆԿ

Ա. Քրիստոսի փրկչին բանք առ սպասաւորս սեղանոյն թէ զնիւրդ կարևոր պիտոյ իցեն մուտծական աղօթք . . . 1
Բ. Վասն վերջին վախճանի 7
Գ. Պատիւ քահանայութեան 12
Դ. Սրբութիւն 17
Ե. Յաղագս մեղաց 21
Զ. Դարձեալ յաղագս մեղաց 26
Է. Գայթակղութիւն 32
Ը. Պատարագ սեղանակապուտ . . . 37
Թ. Վասն ոչ զգուշանալոյ 'ի մեղաց . . 42
Ժ. Անմաքրութիւն 47
ԺԱ. Արծաթսիրութիւն 52
ԺԲ. Ամբարտաւանութիւն 57
ԺԳ. Մահ 62
ԺԴ. Դարձեալ յաղագս մահուան . . . 67
ԺԵ. Դատաստան 72
ԺԶ. Դարձեալ յաղագս դատաստանի . . 77
ԺԷ. Դատաստան արդարոյ 81
ԺԸ. Դժոխք 85
ԺԹ. Վտանգ դատապարտութեան . . . 89
Ի. Ներելի մեղք 94
ԻԱ. Գաղջութիւն 98

ԻԲ. Դատարկակեցութիւն 103
ԻԳ. Ուսումնասիրութիւն 108
ԻԴ. Հաւատք 114
ԻԵ. Յոյս 119
ԻԶ. Սէր Աստուծոյ 123
ԻԷ. Սէր ընկերին 128
ԻԸ. Նախանձաւորութիւն 133
ԻԹ. Խոնարհութիւն և հեզութիւն . . 138
Լ. Մեռելութիւն 145
ԼԱ. Աղքայութիւն 151
Քննութիւն խղճի վասն եկեղեցական
անձին 157
Աղդարար բանք առ խոստովանահարս. 169
Աղդարարութիւնք առ ձեռնադրելիս. 208

ВФ
2

00217660

5817

2014